

Q. РОРЗИЛ

РУССКОЕ ПОДВИЖНОЕ КОМПЛЕКСНОЕ



СОВЕТСКАЯ  
ССР

891.99

F-89

14211

Furfuria ♀.

Furfuriatutuicus

5n

891.99  
F-89

Գ. ԲՈՐՅԱՆ

ՏԵՂՄԱՆ Հ 1881 թ.

# ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐՈՒՄ

(ՀԵՐՈՍԱԿԱՆ ԴՐԱՄԱ)  
4 ԳՈՐԾ. 9 ՊԱՏԿԵՐՈՎ

14211

Հ 27075



ՀԱՅՊԵՏՀԱՐԱՑ

ԵՐԵՎԱՆ

1949

Г. БОРЯН  
НА ВЫСОТАХ  
(ГЕРОИЧЕСКАЯ ДРАМА)  
(На армянском языке)  
Армгиз, Ереван, 1949

24075

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

- ՕՌԽՈՎ ՎԼԱԴԻՄԻՐ ՍԵՐԳԵԵՎԻՉ— Մայոր, գումարտակի հը-  
րամանատար, 40-ին մոտ:
- ԱՎԱԼՅԱՆ ՍՈՒՐԵՆ— Կապիտան, Օռլովի տեղակալը, 35-ին  
մոտ:
- ՍՎԵՏԼՈՎ— Կապիտան, բանակային թերթի թղթակից, 30—35  
տարեկան:
- ԴԻԼԱՆՅԱՆ ԱՆԱՀԻՏ— Բժշկական ծառայության կապիտան,  
28—29 տարեկան:
- ԽՐՈՒՆԻՉԵՎ ՄԻՏՐԱՖՈՆ— Գումարտակի ինտենդանտ, 40-ին  
մոտ:
- ՕՔՍԱՆԱ— Սանիտարական քույր, 23 տարեկան:
- ԴԻՄԻՏՐԻ— Հարմոնիստ— Սերժանտ } 23—25 տարեկան:
- ՎԱԶԵ— Սերժանտ, } 23—25 տարեկան:
- ԴԻԼԱՆՅԱՆ— Մայոր, ծանր վիրավոր, հայկական գումար-  
տակի հրամանատար, 40-ին մոտ:
- ԱԲԱՇԻՉԵՎ— Կապիտան:
- ՍԵՄՅՈՆ ՊԱՊ— Պարտիզան, 60-նն անց:
- ՍԱՇԿՈ— Սեմյոն պապի թոռը, պիոներական հասակի:
- ՏԱՆՅԱ— Զինվորական բժշկուհի, 26 տարեկան:
- ՕԺԻԳՈՎ ԶԱՐԱՄՈՒԽ— Լեռնցի, պարտիզաններից, 40 տա-  
րեկան:
- ՇՈՐՈԽՈՎ ԱՆԴՐԵՅ— Պարտիզան:

ՎԱՍԻԼԻ  
ԵԳՈՐ  
ԱՐՏԱՎԱԶԴ  
ՖՈՄԱ  
ԿԱՐՈ

ԳԵՐՄԱՆԱՅԻ ԳԵՐԻ

ՀԻԲՍ — Գերմանական կորպուսի հրամանատար, 50 տ.  
ՌԻԽՏԵՐ — Գնդապետ, կորպուսի հետախուզության պետ:

Սովետական հրամանատարներ, զինվորներ: Գերմանա-  
կան սպաներ, զինվորներ:

Գործողության վայրը՝ Կովկասյան ռազմաճակատ:

Գործողությունը տեղի է ունենում 1942 թ. աշնանը:

—Զինվորներ, տարբեր հասակի:

## ԴՈՐՉՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

### ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

Ուշ երեկո: Քարանձավ՝ լեռներում: Մեծ քարախոռոչ:  
Օռլովի շտաբային սենյակը: Հեռվում հազիվ ուրվա-  
գըծվում է Կովկասյան լեռնաշղթան: Քարանձավում՝  
արռոների փոխարեն՝ կոճղեր: Մի սենյակում ինքնա-  
գործ սեղան: Խորքում՝ հապնեալ պատրաստած քախտ՝  
ծածկած պլաշշ-վրաններով: Հանդիսացահին նայող  
պատին՝ Կովկասյան ուզմանակատի տոպոգրաֆիա-  
կան քարտեզը: Քարանձավն են քափանցում լուսնի  
շողերը: Բեմը լուսավորում է նամփորդական գազային  
լամպը: Վարագույրը բացվելիս բեմահարքակի առջևի  
պլանում լուս նստած, գրում է Սվետլովը:

**ՍՎԵՏԼՈՎ.**— (Ինքնամոռացուրյան մեջ գրում է: Սանիտա-  
րական պայուսակն ուսից կախ, Սվետլովի նամար ան-  
նկատ, ներս է մտնում Օքսանան: Տեսնելով Սվետլո-  
վին, կանգ է առնում, ապա մի քանի քայլ առաջանում  
է դեպի նա):

**ՕՔՍԱՆԱ.**— (Քաշվելով): Ներեցեք, ընկեր կապիտան:

**ՍՎԵՏԼՈՎ.**— (Լուս է, գրում է):

**ՕՔՍԱՆԱ.**— (Ավելի քարձ): Ներեցե՛ք, ընկեր Սվետլով...

**ՍՎԵՏԼՈՎ.**— (Սրափելով քարձացնում է գլուխը): Ա՛,  
այդ դո՞ւք եք, Օքսանա: Բարեկ ձեզ: (Ցույց տալով դի-  
մացի կոճղը): Այցելություն այսքան ուշ ժամի՞՛:  
Նստեցեք: (Շարունակում է գրել):

**ՕՔՍԱՆԱ.**— Շնորհակալություն: (Ավելի մոտենալով): Սանի-

տարուհու իրավունքն է ամեն ժամի վինտուել հիվանդին:

Մայոր Օռլովի՝ վիրակապության ժամն է: Ո՞րտնդ է նա:  
ՍվեՏԻՌՎ. — Մայորը ստորաբաժանմունքներում է: Շուտով  
կդա: (Ցրված) նստեցիք: Ես իսկույն: Հասնեմ վերջա-  
կետի... (Օքսանան նստում է: Սվետլովը քերում է  
հուշատետրը, այնտեղից ինչոր բան է ընկնում):

ՕՔՍԱՆԱ. — (Նկատելով ընկածը, վերցնում, տնտղում է)  
Խիստ հետաքրքրական է: Լեռնային շուշան: Ափսոս:  
Չորացել է զինվորական թղթակցի հուշատետրակում:  
ՍվեՏԻՌՎ. — (Ոգեռոված) Վերջակետ: (Ոտքի կանգնելով  
նայում է Օքսանային, որը դեռ լուռ տնտղում է ծաղի-  
կը) Ծաղիկ... Այդ ո՞րտեղից:

ՕՔՍԱՆԱ. — Զեր հուշատետրից. Գեղեցիկ լեռնային շուշան:  
Դուք ի՞նչ է, կոլեկցիայի համար եք պահում: Վերցրեք:  
(Պարզում է ծաղիկը):

ՍվեՏԻՌՎ. — (Մոտենում, վերցնում է) Իմ հուշատետրից...  
Այո, ճերմակ լեռնային շուշան:

ՕՔՍԱՆԱ. — Դե, իհարկե, գրողի հուշատետրում ուրիշ ի՞նչ  
կարող է լինել: Ծաղիկ... Երազանք... գուցե և մերժված  
սեր:

ՍվեՏԻՌՎ. — (Լուռ տնտղում է ծաղիկը) Մերժված սեր...  
Օքսանա, գիտե՞ք ինչ, եթե կորցնեի այս ծաղիկը, ցավ  
կպատճառեր ինձ:

ՕՔՍԱՆԱ. — Նախապաշտմո՞ւնք... (Ոտքի կանգնելով):

ՍվեՏԻՌՎ. — Լսեցեք մինչև վերջ: (Դանդաղ) Դուք գիտե՞ք,  
թե այս ծաղիկն ինչպիսի հիշողություններ է արթնաց-  
նում իմ մեջ: (Սվետլովը լուսում է):

ՕՔՍԱՆԱ. — Ինչո՞ւ լոեցիք:

ՍվեՏԻՌՎ. — Պատմեմ ճեզ: Դուք ինձ կհասկանաք: (Մի  
պահ լոելով, երազկութ): Կարծես երեկ էր այդ՝ Ստա-  
լինգրադում: Պատահեց ինձ Տանյաշան... Տանյուշան:  
Մենք դուրս էինք գալիս նրա հետ զբոսայգին... Մեր  
առջեւ մայր Վոլգան էր՝ լայնահուն, ջրառատ: Մենք դի-  
տում էինք արևածագը: Հիանում, կառուցում մեր մըտ-

քում սքանչելի վաղը և, թվում էր, թե սահման չկա  
մեր երջանկությանը։ Գուժեց պատերազմի բոթը։ Տան-  
յան արցունքն աշքերում ճանապարհ դրեց ինձ և ասաց՝  
«Կզա՞մ քո ետևից, ուր էլ լինես, կդունե մ քեզ»։ Այդ  
օրը նա ճերմակ էր հագել և նա մնաց իմ հիշողության  
մեջ՝ ճերմակաղղեստ, գեղեցիկ ու մաքուր։ Եվ ահա այս  
ծաղիկը... որ քաղեցի Կովկասյան լեռներում, նա ինձ  
հիշեցնում է իմ Տանյային՝ ճերմակ զղեստում։ (Մի  
պահ լոելով, սխուր) Ո՞ւր է նա հիմա...»

**ՕՔՍԱՆԱ.**— Ո՞ւր է նա հիմա... Ստալինդրադը բոցերի մեջ...

Բայց դուք հավատո՞ւմ եք, որ կտեսնեք նրան։

**ՍՎԵՏԼՈՎ.**— Հրաշքների շեմ հավատում... Իսկ իրականու-  
թյունն այնքա՞ն դաժան է։ (Մի պահ լոելով, ծաղիկը  
դնում է հուշատետրում)։ Այն ո՞ր երգում է ասված, Օք-  
սանա (մեղմ երգելով)։

Դու հիմա հեռու ես, հեռո՞ւ ինձնից,  
Ռազմի ճամփան է ինձ քեզնից բաժանում...  
Քեզ հասնելը դժվար է, դժվար,  
Իսկ մահից՝ շորս քայլ եմ հեռու...

**ՕՔՍԱՆԱ.**— (Ոգեռոված)։ Ալեքսանդր Վասիլևիչ, դուք ան-  
պայման կհանդիպեք Տանյային։

**ՍՎԵՏԼՈՎ.**— Համոզված եք, այդ լավ է։

**ՕՔՍԱՆԱ.**— (Նույն ոգեռությամբ) Անպայման։ Ես շատ  
կուզենայի տեսնել նրան, իմանալ. թե ի՞նչ է անում նա  
հիմա։ Նա զգո՞ւմ է արդյոք, որ այս խուլ անտառում  
դուք երազում եք նրա մասին, և այնքան մաքո՞ւր է ձեր  
երազանքը։ (Մի փոքր լոռում է)։ Իսկ այ, իմ մասին  
երևի ոչ ոք չի երազում։

**ՍՎԵՏԼՈՎ.**— (Մոտենալով Օքսանային, քննչորեն) Այդ  
իզո՞ւր... Ես գիտեմ, որ մեկը երազում է ձեր մասին։  
(Կատակով)։ Նա նույնիսկ երազում է վիրավորվել, մի-  
այն թե՞ դո՞ւք կապեք նրա վերքը։

**ՕՔՍԱՆԱ.**— (Մի պահ լուր է, հանկարծ կարծես սքափված  
ինչոր բանից) Ալեքսանդր Վասիլևիչ, ինչ լա՞վ է, որ

դուք մեր գումարտակումն եք: Ինչ զարմանալի մարդ եք դուք: Այս ահեղ մարտերի մեջ, երբ մեր գումարտակի կյանքը մի մազից է կախված, դուք ժամանակ եք գտնում զբաղվելու և՝ ծաղիկներով, և՝ երազում եք, և՝ գրում, (Հետաքրքրված): Կարելի՞ է իմանալ, ի՞նչ եք գրում:

**ՍՎԵՏԼՈՎ.** — Ես արձանագրում եմ մեր գումարտակի ամեն օրը: Դա զինվորական թղթակցի իմ ակարտականությունն է:

**ՕՔՍԱՆԱ.** — Ի՞նչ եք գրել, օրինակ, այսօր: (Օքսանան նըստում է):

**ՍՎԵՏԼՈՎ.** — Կարդամ ձեզ: (Նույնպես նստում է): Խսեցիք: (Կարդում է): «Այսօր՝ 1942 թ. Հոկտեմբերի 30-ի է, Գերմանացիների անակնկալ հարձակման հետևանքով՝ մայոր Օոլովի գումարտակը, կտրվելով յուրայիններից, 25 օր է գտնվում է գերմանացիների խոր թիկունքում: Գումարտակը 25 օր է գործում է ինքնուրույն, անհավասար կոիվ մղում թշնամու թվով գերակշռող ուժերի դեմ: Նա հետապնդվելով, երկրորդ օրն է ապաստանել է այս խոր լեռնային անտառում: Նա կորցրել է անձնակազմի մի զգալի մասը, ունի վիրավորներ, հիվանդներ...»

**ՕՔՍԱՆԱ.** — (Յավով) Ավելացրեք. ծանր վիրավորներ:

**ՍՎԵՏԼՈՎ.** — Ծանր վիրավորներ: Սննդամթերքները և զինապաշարը սպառվելու վրա են: Մարտիկները հյուծվել են: Գումարտակին սպառնում է թշնամու աքցանը, ջախջախվելու վտանգը: Բայց գումարտակը հարվածներին դիմադրում է արիարար և կովում է, որովհետեւ մայոր Օոլովը և նրա զինվորները մոլեռանդորեն հավատում են գումարտակի փրկությանը: Ահա՛ ամենը:

**ՕՔՍԱՆԱ.** — Ինչ դաժան իրականություն:

**ՍՎԵՏԼՈՎ.** — Ահա, Օքսանա, գրում եմ այս պատմությունը, բայց շգիտեմ այս հուշատերը դուրս կգա՞ մեր շուրջը սեղմվող օղակից, թե՞... (Ներս են մտնում լուս, դան-

դաղ քայլերով, իրար հրելով Դիմիտրին և Վաշեն: Նը-  
րանք խիստ հոգնած են: Դիմիտրիի բանկոնի թեր պա-  
տըռված է, Վաշեի ձախ այտն ամբողջ Երկարությամբ  
քերված: Դիմիտրիի ձեռքին զերմանական պլանշետներ-  
են, զենքեր: Վաշեի թեր տակ՝ կապոց՝ զերմանացիների  
համազգեստ: Ներս մտնելով, նրանք լուս, անշարժ կանգ-  
նում են կողք-կողքի: Սվետլովը և Օքսանան նկատում  
են նրանց: Օքսանան, Դմիտրիին տեսնելով, պայծա-  
ռանում է):

ՕՔՍԱՆԱ. — (Ուրախ) Դիմիտրի...

ՍՎԵՏԼՈՎ. — (Բարձր): Ժամանեցի՞ք... Այդ ի՞նչ է ձեր ձեռ-  
քին... (Դիմիտրին և Վաշեն լուս են: Դիմիտրին բարձ-  
րահասակ է, շեկ: Կուրանկալի տակից ոսկե գանգուր-  
ները քափված են նակատին: Վաշեն՝ սև, միջահասակ,  
թիկնեղ):

ՍՎԵՏԼՈՎ. — Ինչո՞ւ եք լոռում: Դատարանի առաջ եք կանգ-  
նած, ի՞նչ է:

ՕՔՍԱՆԱ. — (Առաջանալով դեպի Դիմիտրին) Դիմիտրի, ի՞նչ  
է պատահել, մոայլ լինել քեզ չի սազում:

ԴԻՄԻՏՐԻ. — Ասեղի վրա նստածը չի կարող ծիծաղել:  
(Դառնալով Սվետլովին): Ճիշտ այդպե՞ս, ընկեր կապի-  
տան, դատարանի առաջ: (Նա զլխով է անում Վաշեին,  
Դիմիտրին և Վաշեն մոտենում են սեղանին, վայր դը-  
նում ձեռքի ունեցածը և նույն քայլվածնով վերադառ-  
նում իրենց նախկին տեղը):

ՍՎԵՏԼՈՎ. — Այո, ձեր տեսքը նախանձելի չէ:

ՎԱԶԵ. — Ճիշտ այդպե՞ս, ընկեր կապիտան:

ՕՔՍԱՆԱ. — Դե ասացեք, ի՞նչ է պատահել:

ԴԻՄԻՏՐԻ. — (Մոայլ): Ո՞րտեղ է ընկեր մայորը:

ՍՎԵՏԼՈՎ. — Ահա՝ նա...

(Այս խոսքերի վրա, արագ, գործնական քայլերով ներս  
է մտնում Օղլովը: Նրանով լցվում է բեմը: Օղլովը  
բարձրահասակ է, թիկնեղ: Գլուխը փարարված է վի-  
րակապով):

**ՕՌԼՈՎ.** — Ողջույն, Օքսանա, նորից վյրակապության: Միթե ժամն է: Ինձ թվում է շտապում եք: (Դառնալով ՚իմիտրիին ու Վաչեին) Ողջույն, արծիվներ, ժամանել եք: (Ուղղվելով դեպի դուռը, բարձր) ո՞վ կա այդտեղ... (Ներս է մտնում Վասիլիին):

**ՎԱՍԻԼԻ.** — Խո՛ւմ եմ, ընկեր մայոր:

**ՕՌԼՈՎ.** — Կանչեցեք ինտենդանտական ծառայության կապիտան Խրունիշեն: (Վասիլիին գնում է):

**ՕՌԼՈՎ.** — (Դիմելով Դիմիտրիին) Հապա արշավանքից ինչպես եք վերադարձել:

**ԴԻՄ.** ՎԱԶԵ. — (Լուս են):

**ՕՌԼՈՎ.** — (Խիստ) Ինչո՞ւ չեք խոսում:

(Վաչեն հրում է Դիմիտրիին: Դիմիտրիին գլուխը կախում է):

**ՕՌԼՈՎ.** — (Բարձր): «Լեզու բերել եք:

**ԴԻՄԻՏՐԻ.** — (Չենքով ցույց է տալիս սեղանին դրած իրերը, ցածր) Ահա ամենը, ընկեր մայոր:

**ՎԱԶԵ.** — Մեղավոր ենք, ընկեր մայոր:

**ՕՌԼՈՎ.** — (Մոտենալով սեղանին, գննում է իրերը) Այս ի՞նչ է: Գերմանական պլանշետներ, զենքեր, համապետություն: Իսկ տերերն ո՞ւր են:

**ՎԱԶԵ.** — (Ցածր, գետին նայելով) Զդիմացանք, ընկեր մայոր:

**ԴԻՄԻՏՐԻ.** — (Նույնպես խուլ ձայնով) Սպանեցի: Սերժանտ Սարոյանը հանցաղարտ չէ:

**ՕՌԼՈՎ.** — Ինչպես թե սպանեցի: Իսկ ձեզ ի՞նչ էր հրամայված:

**ՎԱԶԵ.** — Բերել ալեզու:

**ԴԻՄԻՏՐԻ.** — Ընկեր մայոր, մեղավոր եմ: Դատեցեք ինձ:

**ՕՌԼՈՎ.** — Հապա, ինչո՞ւ զերուն տեղ չեք հասցրել: (Դիմիտրին և Վաչեն լուս են):

**ՕՌԼՈՎ.** — Խոսեցեք, վերջապես, սատանան ձեզ տանի:

**ԴԻՄԻՏՐԻ.** — (Խուլ ձայնով). Զհամբերեցի: Կրակեցի ետեղ... թաղված է կաւճուտում...

**ՕՌԼՈՎ. — Այդպե՞ս...**

**ԴԻՄԻՏՐԻ. —** (Բարձրացնելով գլուխը) Ընկեր մայոր, երբ ես  
ուղմաճակատ էի գալիս, հայրս ասաց ինձ. «Ճսիր,  
Դիմիտրի, ինչքան գերմանացու հանդիպես—սպանի՛ր,  
ոչնչացրո՛ւ»:

**ՕՌԼՈՎ. —** (Դիմելով Վաշեին) Իսկ քո հայրն ի՞նչ կարծիքի  
էր, սերժանտ Սարովյան:

**ՎԱԶԵ. —** (Գլուխը կախ, խուլ ձայնով) Նո՞ւյն կարծիքի, ըն-  
կեր մայոր:

**ՕՌԼՈՎ. — Ահա թե ի՞նչ:**

**ՕՔՍԱՆԱ. —** (Հուզված է, ուզում է ինչոր քան ասել, քայց  
զսպում է իրեն):

**ԴԻՄԻՏՐԻ. —** (Մի ժայլ առաջ է գալիս, ձայնը դողում է)  
Ընկե՛ր մայոր, մի երկու րոպե լսեցեք ինձ, այնուհետեւ  
դատեցեք: (Պառազա): Գերմանացին ավերել է, հրի է  
մատնել իմ հայրենի գյուղը, ողջ Ուկրաինան, հորս  
կախել է գերմանացին, մորս սպանել է, քրոջս՝ օտարու-  
թյուն քշել... (Լուս է մի պահ: Բոլորը լուս են: Օք-  
սանան քայուն սրբում է արցունքները) Երբ բերում  
էինք գերմանացի սպային, ինձ թվաց, որ հենց նա՛ է  
իմ ողջ Ուկրաինայի, դժբախտության պատճառը:  
(Մանր շնչում է): Արյո՛ւն էր կաթում սրտիցս: Զհամ-  
բերեցի, ընկեր մայոր, կրակեցի... (Մի պահ լուս է,  
ապա խուլ ձայնով) Մեղավոր եմ, չեմ կատարել հրա-  
մանը: Դատեցեք, ընկեր մայոր: (Արձանանում է տե-  
ղում):

(Բոլորը լուս են):

**ՕՌԼՈՎ. — Այդպե՞ս:**

**ՍՎԵՏԼՈՎ. —** (Հուզված) Ընկե՛ր մայոր, թույլ կտա՞ք միշա-  
մտել:

**ՕՌԼՈՎ. —** (Ընդհատելով նրան): Սպասիր, Ալեքսանդր Վա-  
սիլեև, սպասիր: (Քայլում է ետ ու առաջ: Օռլովը կրո-  
վում է ինքն իր հետ): Ճսիր, Օստապենկո, վճիռը: (Եռ-  
առւմ է դանդաղ շեշտով): Արդա՛ր է հորդ խորհուրդը...

(Մի պահ բոլորը ժարացել են):

**ԴԻՄԻՏՐԻ.** — (Հանկարծ պոկում է տեղից, վազում դեպի Օռովը) Ընկեր մայո՛ր... Վլադիմիր Սերգեևիչ... (Դրա կում է Օռովին, գլուխը դնում կրծքին) Ընկե՛ր մայո՛ր...

**ՕՔՍԱՆԱ.** — (Լացը և ուրասիրյունը միախառնված: Այլեւ շզապելով իրեն) Դիմի՛տրի... Ընկեր մայո՛ր... (Դուրս է վազում սենյակից):

(Սվետլովը հուզմունքից անընդհատ սրբում է ակնոցները):

**ՕՌԽՈՎ.** — (Զեռը դնելով Դիմիտրիի ուսին): Խսիր, Օստապենկո: Հրամանս մինչև վերջը շասացի: Գնացեք, հանգստացեք և հենց այս գիշեր սերժանտ Սարովանի հետ մեկնեցեք հետախուզության: Առաջադրանքը նույնն է՝ բերել «լեզու»: Մինչև լբերեք, շերեաք: Իսկ եթե նորից...

**ԴԻՄԻՏՐԻ.** — Հասկանալի՞ է, ընկեր մայոր:

**ՎԱԶԵՐ.** — Տա՛սը կբերենք, ընկեր մայոր, տա՛սը...

**ԴԻՄԻՏՐԻ.** — (Ուրախացած) Կարելի՞ է գնալ: Գնացի՛նք, վաշե...

(Վազելով դուրս է գնում, ետեից՝ վաշեն):

**ՍՎԵՏԼՈՎ.** — (Լուս, դանդաղ մոտենում է կոնդին և նստում) Արդար է վճիռդ: (Ոգեռոված): Թո՛ւյլ տվեք գնալ նըրանց ետևից, Վլադիմիր Սերգեևիչ:

**ՕՌԽՈՎ.** — Գնա՛, խոսի՛ր: Կարծես թե բոլորը շասացի: Եվ հայտնիր, որ կանչեն ինձ մոտ կապիտան Խրունիչենտ: (Սվետլովը գնում է դեպի ելքը: Հանդիպում է Խրունիչեն, բարեում է և արագ դուրս է գնում):

**ԽՐՈՒՆԻՉԵՎ.** — Ընկեր մայոր, ինտենդանտական ծառայության կապիտան Խրունիչենը ձեր հրամանով ներկայացավ:

**ՕՌԽՈՎ.** — (Դիրքը շփոխելով) Ողջուն: Նստիր: (Ցույց է տալիս կոնդը: Խրունիչենը նստում է): Նո՛ւ, Միտրաֆոն Պավլովիչ: Պատմիր, ինչպե՞ս են գործերը: Ինչպե՞ս է

պարենամթերքի վիճակը:

ԽՐՈՒՆԻՉԵՎ. — (Մոայլ) Վատ է:

ՕՌԼՈՎ. — Նորություն չես ասում: Քանի՞ օր կհերիքի:

ԽՐՈՒՆԻՉԵՎ. — Միայն երեք օր:

ՕՌԼՈՎ. — Ճիշտ չես: Բայտ երևույթին ես քո պաշարի մասին ավելի լավ գիտեմ: Շոկոլադը խնայողաբար գործածելով, կհերիքի՞ 10 օր: Մակարոնը՝ ևս 10 օր: Անտառում վայրի պտուղ կա՞, սննդարար խոտարմատներ կա՞ն: Կա՞ն: Հուսադրող և քաջալերող խոսքեր կա՞ն: Կա՞ն: (Կատակով) Ասում են՝ հուսադրումը հաճախ ավելի ախորժելի համ է ունենում, քան համբուրգյան բիֆշտեկը:

ԽՐՈՒՆԻՉԵՎ. — (Մի պահ լուս է) Լսիր, Վալողյա, թույլ կտաս անկեղծորեն խոսել: Զէ՞ որ մենք մանկության ընկերներ ենք:

ՕՌԼՈՎ. — Ի՞նչ է պատահել:

ԽՐՈՒՆԻՉԵՎ. — Դու ինչո՞ւ մեզ բերիր այս անանցանելի անտառը, վայրի ժայռերի մեջ, մահվան բերանը:

ՕՌԼՈՎ. — (Զննում է Խրունիչեին) Դու իրոք որ լուրջ ես խոսում: Դու քեզ վա՞տ ես զգում, Միտյա:

ԽՐՈՒՆԻՉԵՎ. — Զեմ թաքցնում: Ներվե՛րս... Ներվերս չեն դիմանում այս փորձությանը:

ՕՌԼՈՎ. — Մեռնելո՞ւց ես վախենում:

ԽՐՈՒՆԻՉԵՎ. — Այո, չեմ թաքցնում: Մեռնել չեմ կամենում: Բայց դրա հետ հաշտվել եմ: Այդ արդեն գրված է մեր գումարտակի ճակատին: (Մի պահ լուս է): Կորչում են մեր թափած ջանքերը, հասկանո՞ւմ ես:

ՕՌԼՈՎ. — Սպասիր, պարզ խոսիր...

ԽՐՈՒՆԻՉԵՎ. — Ինձ վհատեցնողը միայն մեր գումարտակի ծանր վիճակը չէ: Վալողյա՛, ես կորցնում եմ հավատու: Գերմանացին հասել է Ստալինդրադ, Վոլգա, ծեծում է Կովկասի դռները, հասել է Վլադիկավկազ... (Խոսում է հեասպան): Գերմանացին առաջ է գալիս: Որտե՞ղ է այն ուժը, որ պետք է դիմագրավի այդ ժանտախտին (լուս է):

**ՕՌԼՈՎ.** — Ասա բոլորը։ Կամբջի կեսն անցնողը մեջտեղում  
կանգ չի առնում։

**ԽՐՈՒՆԻՉԵՎ.** — Դու հիշո՞ւմ ես, երբ քեզ հետ նահանջում  
էինք Կուբանյան տափաստանով։ Դու հիշո՞ւմ ես, թե  
ինչպես խելակորույս մոլուցքով, սարսափահար փախ-  
չում էին Կուբանյան նժույգների երամակները։ Նրանց  
հետ կարծես մեր երջանկությունն էր փախչում։ Դու հի-  
շո՞ւմ ես վշտի տակ ճոռացող փոշեթաթախ սայլերը,  
գաղթականներին, անօդնական կանանց և երեխանների  
լացը... Իսկ մեր շուրջը շարադրուշակ բոցով այրվում  
էին կաղամախինները... Մենք լուսթյամբ անցնում էինք  
նրանց մոտով։ Երկնքից սև փաթիլներ էին իջնում մեզ  
վրա. դա կարծես ամոթանքի սև ձյունը լիներ, որ ծած-  
կում էր մեր ճանապարհը...

**ՕՌԼՈՎ.** — Այդ բոլորը հիշում եմ, հետո՞ւ։

**ԽՐՈՒՆԻՉԵՎ.** — Իսկ հիմա ինչո՞վ է փոխվել դրությունը։  
Նրանով, որ գերամանցին շարունակում է առաջ գալ...  
(Մի պահ լուսն է)։ Մենք քեզ հետ շենացրինք մեր եր-  
կիրը, երջանկության ճամփաներ բացեցինք, որ այսօր  
պիղծ գերմանացին քայլի մեր գյուղերում ու քաղաք-  
ներում։ Իսկ մենք, ահա սկսուի է մեռնենք այս խուզ  
անտառում, թեաբեկ արծովի նման...»

**ՕՌԼՈՎ.** — (Անբարք, հոնքերի տակից նայում է Խրունիչնին)։  
Վերջացրի՞ր։

**ԽՐՈՒՆԻՉԵՎ.** — Ներիր ինձ, վալողյա, չէի՞ կարող շխոսել։  
Կպայթեր սիրու։ Զկարծես, որ ես անձնատուր կլինեմ  
գերմանացուն։ Ո՞չ, Հավատս է կորչում, հաղթանակի  
հավատը... (ծանր շնչում է)։

**ՕՌԼՈՎ.** — Դու մեր գումարտակում ուրիշի հետ խոսե՞լ ես  
այդ մասին։

**ԽՐՈՒՆԻՉԵՎ.** — Ոչ, միայն քեզ հետ։

**ՕՌԼՈՎ.** — Տես, Միտյա, շլսեմ, թե ուրիշի հետ։ Առանց այն  
էլ գերմանացին կաշվից դուրս է գալիս համոզելու մեր  
զինվորներին, որ հասել է վերջակետը։ Նախ՝ սկսեց

ոմբակոծել անտառը։ Ապա թռուցիկները՝ անձնատուր լինելու մասին։ Գերմանացու ագիտացիան չի թեքի մեր զինվորին, իսկ այ, քո խոսակցությունները կարող են աղղել։ Հասկացա՞ր ինձ։

ԽՐՈՒՆԻՉԵՎ. — Հասկանալի է, Վալոդյա։ Դու առաջին մարդն ես, թերևս վելջինը, որ խմացավ տառապանքիս մասին։

ՕՌԼՈՎ. — Հիմա լսիր։ Ասում են, ով իր վերքը հասկանա, կիսով շափ բուժված է արդեն։

ԽՐՈՒՆԻՉԵՎ. — Բայց ինչպե՞ս... ուշ է գինու մասին մտածել, երբ տակառը դատարկ է։

ՕՌԼՈՎ. — Միացա, փոքրոգություն է ընկնել, երբ դեռ ընդունակ ես կանգնելու։ Եվ կկանգնե՞նք, հակառակ սատանային։ Դու կորցրել ես հաղթանակի ճանապարհը։

ԽՐՈՒՆԻՉԵՎ. — Բայց...

ՕՌԼՈՎ. — (Ընդհատելով) Սպասի՛ր։ Մենք խոսում ենք, ինչպես եղբայրը՝ եղբոր հետ, երեխաներ չենք, մոտենում ենք քառասունին, մեր քունքերը ճերմակում են, հարկավոր չէ արդարանալ։ Ով փորձում է արդարանալ՝ նա արդեն իրեն դատապարտում է։ Ես չեմ ցանկանում ուժով, գեղեցիկ խոսքերով համոզել քեզ։ Ես ուզում եմ, որ դու ի՞նքդ հասկանաս և ի՞նքդ տեսնես հաղթանակի ճանապարհը։

ԽՐՈՒՆԻՉԵՎ. — Բայց ինչպե՞ս... Կարո՞ղ է հրաշք տեղի ունենալ։

ՕՌԼՈՎ. — Լսիր։ Մենք երկուսով էլ հայրենիքի զինվորներ ենք։ Լսիր զինվորիս խոսքին։ Դու հանում ինչի՞ ես զինք վերցրել։

ԽՐՈՒՆԻՉԵՎ. — Հանուն իմ հայրենիքի։

ՕՌԼՈՎ. — Արդա՞ր է մեր կոխվը։

ԽՐՈՒՆԻՉԵՎ. — Արդար է։

ՕՌԼՈՎ. — Արդարությունը, հիշեր, մեռնել չի կարող երբեք։ Արդարությունը ծովի հատակից էլ կհանի։ Մեզ մահ չկամ, Միտյա։ Ի՞նչ է, դու կարծում ես կարո՞ղ են

խլել մեղնից այն, ինչ մեր հայրերն ու պապերը կախաղանի, աքսորի, արյան ու դաժան պայքարի գնով վաստակել են ինձ ու քեզ համար։ Մենք քեզ հետ մանկությունից գրկեցինք աղատության արշալույսը, փայտայեցինք մեր նորաստեղծ երկիրը. որքա՞ն եռանդ, ուժ դրինք ամեն մի բարձրացող քարի համար։ Ինչպիսի՞ զոհաբերում։ Անհնար է խլել այն, ինչ պատկանում է երկու հարյուր միլիոնին։

ԽՐՈՒՆԻՉԵՎ. — Բայց թշնամին ուժեղ է, Վալոդյա։

ՕՌՈՒՎ. — Ուժեղ է, շեմ ժխտում։ Դժվար է հաղթանակի ճանապարհը։ Իսկ այդ ո՞ր հաղթանակն է հեշտությամբ եկել։ Ապա մտաբերիր 18 թիվը՝ երկիրն՝ ավերված, ժողովուրդը՝ քաղցած, տկլոր, բանակը՝ վատ զինված, իսկ թշնամին... Ամբողջ Եվրոպան էր մեզ վրա եկել, հետո՝ Վրանդելը, Դենիկինը, Յուդենիչը, Կոլչակը, ճապոնացին՝ Արևելքից։ Հաղթեցի՞նք։ Հաղթեցի՞նք։ Մենք փրկեցինք արյունաքամ եղող ոեսպուբլիկան։ Վհատության րոպեներին զդա նրան, ում ձեռքին է այսօր արդարության սուրը, Ստալինին զդա քո կողքին, քեզ կթևավորի ժողովուրդի անսասան հավատը, նա քեզ կօգնի։ (Կանգնելով) Միտյա, դուրս եկ, նայիր այս բարձունքներից հեռաները՝ Կովկասյան լեռներին, լեռները շեն, որ պետք է կանգնեցնեն թշնամուն, այլ մենք՝ մարդի'կ։ Գերմանացին շի' անցնի այս լեռները, հավատա զինվորիս խոսքին։ (Մոտենալով ձեռքը դնում է Խրունիչեի ուսին, ջերմ)։ Կանցնեն այս ահեղ օրերը, կվերադառնանք Սմոլենշինա, կքայլենք քեզ հետ կաղամախիների անտառով, կերպեն սոխակները և երջանկության կամուրջը կշարունակենք, կձգի՛ նա դեպի ապագան։ (Լոռում է։ Խրունիչեը նույնպես լուր է) Բարձրացրու գլուխդ, նայիր աշքերիս։ Մեռնելու միտքը վանիր քեզանից։

ԽՐՈՒՆԻՉԵՎ. — Ազնիվ և մեծահոգի ես, Վալոդյա, և ամուս նախանձում եմ քեզ։ (Բռնելով Օռլովի ձեռքը) Ուղարկիր

ինձ մարտական գործողության, հոգ չէ, թե կմեռնեմ:  
Ուղարկի՛ր:

**ՕՌԼՈՎ.**— Միտյա, մեռնելը հեշտ է, դա դեռ փրկություն չէ: (Գործնական տոնով) Հավաքիր քեզ: Ուտելիքի պաշարը խնամքով բաժանիր, որ 10 օր բավարարի: Դերմանացին, ճիշտ է, սեղմում է օղակը, բայց կղիմանանք: Թող մի տղաները հանգստանան, կարգի բերեն իրենց: **ԽՐՈՒՆԻՉԵՎ.**— Բայց ինչո՞ւ ես դանդաղում, Վալոդյա, հարկավոր է դուրս գալ այս օղակումից:

**ՕՌԼՈՎ.**— Սպասիր, ժամը չէ... (Լոռում է մի պահ) Հետո, լսիր: (Հեռացնում է Խրունիչեին անկյունը) Աշքիդ լույսի պես պահպանիր դինամիտը: Դինամիտի համար գլխովդ ես պատասխանառու, հասկանո՞ւմ ես... (Հեասպառ ներս է գալիս Արտավագդը):

**ԱՐՏԱՎԱԳԴԻ.**— Ընկե՛ր մայոր, երեկոյան ընթրիքից 5 հոգի առաջին վաշտից թունավորվել են: Սանմասից փընտրում են ընկեր Խրունիչեին:

**ՕՌԼՈՎ.**— Ի՞նչ... (Դառնալով Խրունիչեին) անմիջապես դեպքի վայրը. կզեկուցես ինձ, արա՛գ:

**ԽՐՈՒՆԻՉԵՎ.**— (Շփորված) Լսո՛ւմ եմ, խսկույն:

(Խրունիչեր և Արտավագդը արագ հեռանում են):

**ՕՌԼՈՎ.**— (Մենակ: Մոտենում է կոնյին, ծանր նստում): Ի՞նչ կարող է լինել: Ինչոր տեղ գործերը կարգին չեն: Երեկ սերժանտ Ապանասենկոն է պոստից անհայտացել, այսօր այս թունավորումը... Ինչոր ձեռք խառնում է գործերը... (գլուխն առնելով ափերի մեջ): Վերքն անհանգստացնում է: Մարմինս շի հնաղանդվում: Դիմանալ է հարկավոր... (Լոռում է մի պահ, ապա կտրուկ վեր է կենում տեղից, մոտենում է պատից կախված բարտեզին) Դինամի՛տը... Դինամի՛տը... ահա այսուղե՛ղ... (Մատը դնում է բարտեզի մի կետի վրա) Այսուղե՛ղ... Տանկերը շպե՛տք է անցնեն... (Ներս է մտնում Աբաշիձեն):

**ԱԲԱՇԻՉԵ.**— Ընկեր մայոր, կապիտան Աբաշիձեն ձեր հրամանով ներկայացավ:

**ՕՌՈՎՎ.**— (Կարուկ շրջվելով) Դուք ես, Աբաշիձե, կանչել էիր քեզ: Դուք գիտես, որ մեր առաջին կապավորից լուր չկա: Երկրորդին մեր հետախույզները դուք սպանված աղբյուրի ճանապարհին: Մեկ ամսի մոտ է՝ լուր չունենք մերոնցից: Գեներալը երկի խաչ է դրել մեզ վրաւ Պետք է դնաս:

**ԱԲԱՇԻՉԵ.**— Խոս' ամ եմ:

**ՕՌՈՎՎ.**— Դժվար է խիստ, բայց պետք է դնաս: Դուք այս վայրերին քաջ ծանոթ ես:

**ԱԲԱՇԻՉԵ.**— Հասկանում եմ, ընկեր մայոր: Պատրաստ եմ:

**ՕՌՈՎՎ.**— Կանցնես ուղմաճակատի գիծը, կներկայանաս գեներալին: Կատամես մեր վիճակը: Կասես, որ նեղն ենք, գերմանացին սեղմում է օղակը, բայց կղիմանք: Այդպես էլ կասես: Եթե կարող են, թող օդնեն սննդամթերքով, զինամթերքով, դեղորայքով: Ահա ծըրարը, կհանձնես գեներալին:

**ԱԲԱՇԻՉԵ.**— Հասկանալի է: (Վերցնելով ծրարը) Ե՞րբ կհրամայեք մեկնել:

**ՕՌՈՎՎ.**— Խիր, թե քեզ ինչու եմ ուղարկում: Կասես, որ գերմանացիները պատրաստվում են ընդհանուր հարձակման: Կասես գեներիլին, որ գերմանացիները տանկերի են սպասում: Ստացան տանկեր՝ կսկսեն հարձակումը: Տանկերը պետք է անցնեն լեռնանցքով, ուրիշ ճանապարհ չունեն: Կասես, որ ինչ դնով էլ ուղում է լինի, կխանդարենք տանկերի առաջխաղացումը դեպի գրուտի գիծը: Ավելացրու, որ մայոր Դիլանյանի հայկական գումարտակը, հավանական է միանա մեզ: Ասա, որ մայորը ծանր վիրավոր է: Նրան այսօր այստեղ պետք է բերեն: Ասա, որ հայկական գումարտակը դեկավարում է կոմիսարը՝ Ավալյանը: (Մի պահ լուսմ է): Կսպառ սեմ քեզ նոյեմբերի 5-ին:

**ԱԲԱՇԻՉԵ.**— Հասկանալի է:

**ՕՌԼՈՎ.** — Վերցրու քեզ հետ երկու մարտիկ, փորձված տղա-  
ների, քիչ մարդ է մնացել, բայց վերցրու։ Մեկնի՞  
հենց այս դիշեր։

**ԱԲԱՇԻԶԵ.** — Ամեն ինչ հասկանալի է։ Կարելի՞ է գնալ։

**ՕՌԼՈՎ.** — Այու։ Բարի ճանապարհ։ (Սեղմում է ձեռքը), Եկ  
համբուրվենք եղբոր պես։ (Համբուրվում են)։

**ԱԲԱՇԻԶԵ.** — Բարի մնաք, կվերադառնամ որքան կարելի է  
շուտ։

(Աբաշիձեն գնում է)։

**ՕՌԼՈՎ.** — (Կանգնած նայում է նրա ետեից) Կհասնի՞...  
Կվերադառնա՞... (Դանդաղ մոտենում է դեպի հանդի-  
սարահիր, նստում է կոճղին)։

(Ներս է մտնում վասիլին)։

**ՎԱՄԻԼԻ.** — Ընկեր մայոր, ժամանել է Սեմյոն պապը իր  
թոռան հետ, կարո՞ղ են ներս գալ։

**ՕՌԼՈՎ.** — (Կանգնելով) Հրավիրիր։ (Վասիլին գնում է)։  
(Ներս են մտնում Սեմյոն պապը, Սաշկոն։ Սեմյոն պա-  
պը միջահասակ է, քավ, երկար միրուֆով. Սաշկոն՝  
14-ին մոտ պատաճի։ Սեմյոն պապը և Սաշկոն իրենց  
հետ երկու մեծ զամբյուղ են ներս բերում)։

**ՍԵՄ. ՊԱՊ.** — (Զամբյուղը վար դնելով)։ Բարի ողջո՞ւն,  
ընկեր մայոր։

**ՕՌԼՈՎ.** — Սեմյոն պապ, սպասում էի վաղուց... (նայելով  
զամբյուղներին) Այդ ի՞նչ է...։

**ՍԵՄ. ՊԱՊ.** — Ես և թոռս՝ Սաշկոն անտառապտուղ ենք  
հավաքել, խոտարմատներ... ձեր վիրավորների համար  
է... Պետք կդա։ Օգտակար է խիստ։

**ՕՌԼՈՎ.** — (Զգացված) Շնորհակալ ենք։ Նեղություն եք քա-  
շել։

**ՍԵՄ. ՊԱՊ.** — Ինչ նեղություն, որդիս։ Բարեկամները ներ-  
օրին պետք է օդնեն միմյանց։

**ՕՌԼՈՎ.** — (Լուրջ) Իսկ ո՞ւր է մայոր Դիլանյանը։

**ՍԵՄ. ՊԱՊ.** — Բերում են... պատգարակով։ Շանը է վի-  
ճակը։ Դժվար է լեռնային կածաններով առագ իջնելը։

**ՕՌԼՈՎ.** — (Մտահոգ) Ծա՞նր է, ասում ես, մայոր Դիլանյան  
նի վիճակը:

**ՍԵՄ. ՊԱՊ.** — Շատ ծանր:

**ՕՌԼՈՎ.** — (Կարծես ցրվելու համար, մոտենում է Սաշկոյին,  
շոյելով մազերը) Գործներդ ինչպես են, ընկեր պար-  
տիզան:

**ՍԱՇԿՈ.** — (Հպարտ) Գերազա՞նց, ընկեր մայոր: Միայն  
զենք չունեմ: Ավտոմատ տվեք ինձ, կրակել սովորել  
եմ: Ազնիվ պիոներակա՞ն... (պատվի է առնում):

**ՍԵՄ. ՊԱՊ.** — Ստվերս է, ընկեր մայոր, ամեն տեղ հետե-  
վում է ինձ: Որտեղ ես, այնտեղ էլ սա...

**ՍԱՇԿՈ.** — Ընկեր մայոր, կարգադրեք ավտոմատ տան ինձ:

**ՕՌԼՈՎ.** — Զե՞նք, կտանք: (Խփելով Սաշկոյի ուսին): Թոփր  
Խրունիչկի մոտ, իմ անունից ասա քեզ ավտոմատ տա:  
Ահա'... (Թուղթ է տալիս):

**ՍԱՇԿՈ.** — (Լուրջ) Լսում եմ, ընկեր մայոր: (Դառնալով  
Սեմյոն պապին) Պապ, գնացի: Տես, առանց ինձ տեղ  
չկնաս: (Դուրս է վազում):

**ՍԵՄ. ՊԱՊ.** — Որտեղ ես, այնտեղ էլ սա...

(Դրսից լսվում է հարմոնի ձայնը: Դիմիտրին նվազում  
է ուկրաինական «Ревета стогне Дніпр широкий»  
ժողովրդական երգը):

**ՕՌԼՈՎ.** — (Լսելով): Դիմիտրին է... Հայրենիքն է հիշել,  
Ռուկրախնան... (Նորից մտահոգ նստում է): Ծա՞նր է,  
ասում ես, պապ: Մայոր Դիլանյանի հետ լավ ընկեր-  
ներ ենք նղել, միասին սովորել ենք: (Լուս է):

**ՍԵՄ. ՊԱՊ.** — Մայորը հրաժարվում էր դալ, ասում էր, թո-  
ղեք մնամ այստեղ, բեռ եմ դառնալու Օռլովի համար:  
Հետո՝ քույրը: Ես չգիտեի, որ նրա քույրն այստեղ է...  
ձեզ մոտ...

**ՕՌԼՈՎ.** — Այո: (Լուս է մի պահ): Ծանր է լինելու Անա-  
հիտի համար... Եվ բուժող, և հարազատ քույր...

**ՍԵՄ. ՊԱՊ.** — Բայց նրան այստեղ չի կարելի թողնել։ Բը-  
ժիշկը սպանվել է։ Դեղորայք չկա...

**ՕՌԼՈՎ.** — (Վեր կենալով)։ Դիմանալ է հարկավոր։

**ՍԵՄ. ՊԱՊ.** — Վլադիմիր Սերգեևիչ, մարդ պողպատի սիրտ  
պետք է ունենա այդ դաժան օրերում, այն ժամանակ  
զրահը փայտից էլ կարող է լինել։ Եվ նա չի պարտվի  
երբեք։

**ՕՌԼՈՎ.** — Ճշմարիտ ես, պապ։

(Նորից աղմուկ է լսվում, խոսակցությունների ձայն։  
Ներս է գալիս Վասիլին)։

**ՎԱՍԻԼԻ.** — (Հուզված)։ Բերում են, ընկեր մայոր։ Նրանց  
հետ է կոմիսար Ավալյանը...

(Օռլովը կտրուկ ոտքի է կանգնում։ Սեմյոն պապը  
դանդաղ հեռանում է դեպի պատուհանը։ Դրսից մեկը  
ձայնում է. «Զգույշ» և բեմ են մտնում նախ՝ Ավալյանը,  
նրա ետևից չորս զինվոր պատզարակի վրա ներս են  
բերում Դիլանյանին, որն անշարժ պառկած է, նիհա-  
րած, երեսի մազերը եկած։ Ապա մտնում է Շորոխովը։  
Ավալյանը բարձրահասակ, արծվագիր, Շորոխովը՝ մի-  
ջահասակ, կարճ միրուֆով ու բեխերով։ Զինվորները  
պատզարակը զգուշությամբ դնում են գետնին հեռա-  
նում կանգնում դոների մոտ)։

**ԱՎԱԼՅԱՆ.** — (Օռլովին)։ Բարեւ, ընկեր մայոր։ (Պարզում է  
ձեռքը)։ Կոմիսար Ավալյան...

**ՕՌԼՈՎ.** — (Սեղմում է ձեռքը)։ Ահա թե ինչպիսի՞ն ես դու...

Օռլով... (Արագ մոտենում է Շորոխովին)։ Բարեւ, ըն-  
կեր Շորոխով։ (Սեղմում է ձեռքը։ Ապա դանդաղ մո-  
տենում է պատզարակի վրա պառկած Դիլանյանին)։  
Արսեն... (Կուանում, համբուրվում են)։

**ԴԻԼԱՆՅԱՆ.** — (Սանր, ցած ձայնով)։ Վլադիմիր... Ահա թե  
ինչպես եմ հանդիպում քեզ... (Բոլորը լուր են)։

**ՕՌԼՈՎ.** — (Բոնում է Դիլանյանի ձեռքը զույգ ափերի մեջ)։  
Ոշինչ, եղբայրս, կբուժենք քեզ...

**ԴԻԼԱՆՅԱՆ.** — Շնորհակալություն բարի խոսքի համար։ Ինձ

Համար ամեն ինչ պարզ է... Անժամանակ էր... Հաշիվս  
շմաքրեցի գերմանացիների հետ:

ՕՌԵՂՎ. — Կմաքրենք, ոտքի կկանդնես... Միասին կմաք-  
րենք, Արսեն:

ԴԻԼԱՆՅԱՆ. — Որքան անհանդստություն պատճառեցի իս  
այս մարդկանց: (Լոռում է): Ինչպես են գործերդ. Վլա-  
դիմիր, դիմանո՞մ ես... Դիտեմ, դեռ դինվորական  
դպրոցից գիտեմ, հեշտ չէ քեզ ծունկի բերելը... Իսկ  
ես... Դժվար թե շուտով...

(Դրսից լսվում է Դիմիտրիի նույն երգի նվազի ձայնը):

ՕՌԵՂՎ. — Ոչինչ... Անահիտը քեզ ոտքի կկանդնեցնի, ուկի  
ձեռքեր ունի քույրդ...

ԴԻԼԱՆՅԱՆ. — (Անահիտի անունը լսելով, անհանգիստ  
բարձրացնում է գլուխը): Անահիտը... Նա այստեղ  
է...

ՕՌԵՂՎ. — Նա հիմա կգա...

(Դրսից լսվում է Անահիտի ձայնը՝ «Արսենն այս-  
տեղ...» և երեսում է Անահիտը, ապա Օհսանան):

ԱՆԱՀԻՏ. — (Նետվում է դեպի Դիլանյանը: Սունկի գալով):  
Արսեն... եղբայրս... (Համբուրում է):

ԴԻԼԱՆՅԱՆ. — (Հուզված): Անահիտ... Ողջ և առողջ ես...  
(Առույգ, մի փոքր կատակով): Ապա մի նայեմ... Զին-  
վորական հագուստում քեզ շիմ տեսել... Սազում է...  
(Օռլովին): Ասում ես, քույրս ուկի ձեռքեր ունի...

ԱՆԱՀԻՏ. — (Իրեն զապելով): Իմ մասին հետո... Ի՞նչ է պա-  
տահել քեզ...

ԴԻԼԱՆՅԱՆ. — Տեսնում ես, խայթել է գերմանացին, զույգ  
ոտքից... Ոչինչ... կդիմանամ...

ԱՆԱՀԻՏ. — (Զեռքը դնում է ճակատին՝ վիրաբույժի պրոֆե-  
սիոնալ հանդարտությամբ): Երկու ոտքից...

ԱՎԱԼՅԱՆ. — Ավտոմատի հերթով, ազդրերից...

ԱՆԱՀԻՏ. — Ո՞ր երրորդ օրն է...

ԱՎԱԼՅԱՆ. — Իններորդ օրը, ընկեր կապիտան:

**ԱՆԱՀԻՏ.** — Իններորդ օ՞րը. Ի՞նչ օգնություն է ցույց տըր-  
ված:

**ԱՎԱԼՅԱՆ.** — (Գլուխը կախելով): Առաջին օգնություն....  
Բժիշկ չկար, սպանվել է... Հետո լեռների մեջ...

**ԱՆԱՀԻՏ.** — (Ոտքի կանգնելով, զապելով հուզմունքը): Հա-  
պա ինչո՞ւ մեղ չեք հայտնել:

**ԴԻԼԱՆՅԱՆ.** — Սրանք մեղավոր չեն, Անահիտ, անհնար էր  
(Տիրում է լոռվյուն): Իսկ դու մի հուզվիր... Ես այս-  
տեղ եմ... Ամեն ինչ լավ կլինի:

**ԱՆԱՀԻՏ.** — (Բոնելով Դիլանյանի ձեռքը, արտաքուստ հան-  
գիստ): Լավ... Խնդրում եմ կարգադրեք անմիջապես  
սանմաս տեղափոխել...

**ՕՌՈՎ.** — Տեղափոխել սանմաս... Դե՛, Արսեն, քաջ եղիր...  
Կանցնեմ քեզ մոտ:

(Զինվորները մոտենում են, վերցնում պատգարակը և  
շարժվում դեպի ելքը):

**ԴԻԼԱՆՅԱՆ.** — (Օոլովին): Իսկ դուժերի մասին խոսիր կոմի-  
սար Ավալյանի հետ, նա հրամանով փոխարինում է  
ինձ... մինչև իմ առողջանալը...

(Զինվորները Դիլանյանին դուրս են տանում: Ետեից  
Շորոխովը, ապա Անահիտը, Օքսանան: Դրսում լուսմ է  
հարմոնի նվազի ձայնը):

**ՕՌՈՎ.** — Որքան է փոխվել... (Շորոխովին): Ընկեր Շո-  
րոխով, ձեզ հետ խոսելիք ունեմ: Կհանդիպենք մի փոքր  
հետո:

**ՇՈՐՈԽՈՎ.** — Խում եմ, ընկեր մայոր: (Արագ գնում է):

**ԱՆԱՀԻՏ.** — (Ներս գալով, բուլացած նստում է կոճղին):  
Ի՞նչ եք արել... Իննը օ՞ր... (Հուզված): Ես հիմա ինչ-  
պես մոտենամ վիրահատման սեղանին... Ինչպե՞ս օդ-  
նեմ... գանգրենա է սկսել...

**ՕՌՈՎ.** — Անահիտ, արիացեք: Նրա կյանքը ձեզնից է կախ-  
ված...

**ԱՆԱՀԻՏ.** — Դուք հասկանո՞ւմ եք, ինձանից համարյա ան-  
կարելին եք պահանջում:

**ՍԵՄ.** ՊԱՊ.— (Մոտենալով Անահիտին): Հանգստացիք աղջիկս, ուշանալ չի կարելի: Գնանք միասին: (Օգնում է Անահիտին բարձրանալու): Գնանք: (Անահիտի քեզ մտած, դանդաղ ժայլում են դեպի ելքը):

**ՕՌԻՈՎ.**— (Մոտենալով Ավալյանին): Որոշենք անելիքը: Դրությունը ծանր է, քեզնից թաքցնելու ոշինչ շունեմ:

**ԱՎԱԼՅԱՆ.**— Իմը նույնալես:

**ՕՌԻՈՎ.**— Ի՞նչպես է գոմարտակիդ վիճակը:

**ԱՎԱԼՅԱՆ.**— Նույնը, ինչ ձեզ մոտ: Սննդամթերքների պակաս, զինամթերքի պակաս, ունեմ վիրավորներ, բայց դեղորայք՝ բոլորովին:

**ՕՌԻՈՎ.**— Իմ կոմիսարը սպանվեց յոթ օր առաջ: Միանանք, կլինես կոմիսար: Համաձայն ես...

**ԱՎԱԼՅԱՆ.**— Համաձայն եմ:

**ՕՌԻՈՎ.**— Դու գիտե՞ա, որ դերմանացիների տանկերի մի խոշոր զորացուն պետք է անցնի լեռնանցքով: Գերմանացիներն առանց այդ տանկերի հարձակում չեն կարող սկսել:

**ԱՎԱԼՅԱՆ.**— Իմ հետախուզությունը նույն տվյալներն ունի:

**ՕՌԻՈՎ.**— Պետք է փակել տանկերի ճանապարհը: Պետք է ճախողել հարձակումը:

**ԱՎԱԼՅԱՆ.**— Ինչպես...

**ՕՌԻՈՎ.**— Պայթեցնել քարաժայոը և փակել տանկերի ճանապարհը:

**ԱՎԱԼՅԱՆ.**— Ես դինամիտ շունեմ:

**ՕՌԻՈՎ.**— Ես ունեմ: (Օլովը ոգեշնչված, Ավալյանի քեզ մտած, մոտենում է ժարտեղին): Նայիր... (Մատը դնում է ժարտեղի մի կետի վրա): Ահա այստեղ, Անտառը մոտենում է լեռնանցքին: Այստեղ էր... Հասկանալի՞ է: Այժմ գիտենք ես ու դու: Միացանք: Սկսում ենք:

**ԱՎԱԼՅԱՆ.**— Մինչև շփակենք գերմանական տանկերի ճանապարհը:

նապարհը, օղակը պատռելու մասին՝ ոչ մի խոսք։ Համանալի՛ է։

(Հետապառ ներս է վազում մի լեյտենանտ)։

ԼԵՅՏԵՆԱՆՏ. — (Տագնապալից)։ Ընկե՛ր մայոր...»

ՕՌԻՈՎ. — Ի՞նչ է պատահել...»

ԼԵՅՏԵՆԱՆՏ. — Ընկե՛ր մայոր, ներքեռում՝ աղբյուրի մոտ, գերմանացիների մի ջոկատ է երևացել։ Բարձրանում են վեր։ Մեր հետքերով են շարժվում։

ՕՌԻՈՎ. — (Կարուկ շրջվելով դեպի լեյտենանտը)։ Հրամայո՛ւմ եմ ոտքի հանել գումարտակը։ Ոչ մի ծպտուն և ոչ մի հետք։ Պատրաստվել երթի։ Արա՛գ։

ԼԵՅՏԵՆԱՆՏ. — Խո՛ւմ եմ։ (Լեյտենանտը դուրս է վազում)։

ԱՎԱԼՅԱՆ. — Սեղմում են սրիկաները։ Երկում է լավ եք դադել։

ՕՌԻՈՎ. — Պետք է հեռանալ քարանձավների ուղղությամբ։ Նորից վեր։ Մարտի բռնվելը հիմա նպատակահարմար չէ։

ԱՎԱԼՅԱՆ. — (Գործնական)։ Ընկեր մայոր, ուրեմն կհանդիպենք վերին քարանձավներում։

ՕՌԻՈՎ. — Ուրեմն միանում է մեզ հայկական գումարտակը։ (Լսվում է հրետանու հեռավոր որոտը)։

ԱՎԱԼՅԱՆ Գործում ենք միասին, մի բոռնցք կազմած։

ՕՌԻՈՎ. — Քարանձավներից այն կողմ այլևս տեղ չկա։ Կամ կփակենք գերմանական տանկերի ճանապարհը, կամ կմեռնենք այս բարձունքներում։

(Մի զինվոր ներս է բերում դրոշակը)։

ԱՎԱԼՅԱՆ. — (Ցույց տալով դրոշ)։ Ահա՛ իմ ժողովրդի պատիվը։

ՕՌԻՈՎ. — Հավատում եմ։

(Օռլովը և Ավալյանը սեղմում են միմյանց ձեռքը)։

## ՎԱՐԱԴՈՒՅՐ

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

Օռլովի և Ավալյանի միացած գումարտակների նոր բնակավայրը: Սկսում է իրիկնանալ: Կապույտ մքընջաղում՝ Կովկասյան լեռների սիլուետը: Բեմը ներկայացնում է բացատ՝ անտառում: Անտառը դեպի խորքը խտանում է բարձրանալով՝ ձուլվում է լեռների ֆոնին: Մի նեղ նանապարհ տանում է անտառի խորքը, մեկը՝ դեպի ձախ, մեկը՝ աջ, ելի անտառ: Բեմի բացատում, անտառի եզրերին՝ խումբ-խումբ բփուտներ: Բեմի աջ և ձախ անկյունից՝ խոշոր պլանի ծառեր: Բեմահարքակի առջեկի պլանում՝ աջից գետին տապալված, արդեն չորացած մի ծառ: Տապալված ծառի նյուղերից մեկի վրա նստած է Օքսանան՝ սանպայուսակը ծնկներին, Դիմիտրին՝ կացինը ձեռքին փայտ է կտրում: Վարգույրը բացվելիս Դիմիտրին, կացինը վերև բարձրացրած, պտտվում է իր կտրած գերանի շուրջը, իսկ Օքսանան բարձրածայն ծիծաղում է:

**ՕՔՍԱՆԱ.** — Ուրեմն գերմանացի սպան մթնումը քեզ արջի տեղ է դրել: Ասենք, Դիմիտրի, դու մի փոքր արջային հատկություններ ունես: Գերմանացի սպան չի սխալվել:

**ԴԻՄԻՏՐԻ.** — (Կեղծ նեղացած, կացինը խրում է գոտկատեղը: Գերանն ուզում է շալակել): Նո՞ւ, նո՞ւ, այդ հատկություններն ինտենդանտ Խրունիշեին են պատկանում, մի խլիր նրանից: Այդ նա է սիրում փնթինթալ՝ այս շկա, այն շկա:

**ՕՔՍԱՆԱ.** — Ինչ լավ է Դիմիտրի, որ դու այս անգամ ուեղու ես բերել, կենդանի: Թե չէ հիշո՞ւմ ես այն երեկոն, փորձանք պիտի գար գլխիդ:

**ԴԻՄԻՏՐԻ.** — Ի՞նչ մարդ է մեր մայորը: Ամեն ինչ կանեմ նրա համար: Թե հրամայի՝ հարյուր գերմանացու դեմ մենակ կդնամ: (Գերանն ուսին առած՝ գնում է):

**ՕՔՍԱՆԱ.** — (Անհանգիստ բոնում է գերանի ծայրից): Դիմիտրի, այդ ճիշտ է, որ դու կապիտան Սվետլովին ասել ես, որ կցանկանայի վիրավորվել, միայն թե ե՛ռ կապեի քո վերքը:

**ԴԻՄԻՏՐԻ.** — (Գերանը վայր դնելով: Լուրջ): Լսիր, Օքսանա, դու գիտե՞ս, որ ինձ վատ եմ զգում...

**ՕՔՍԱՆԱ.** — (Անհանգստացած): Վա՞տ ես զգում: Ի՞նչն է քեզ անհանգստացնում:

**ԴԻՄԻՏՐԻ.** — (Լուրջ): Սիրտս, հասկանո՞ւմ ես: Այստեղ կարծես թե (ձեռքը դնելով սրտին, ապա հանկարծ բարձր) ամեն ինչ կարգին չէ:

**ՕՔՍԱՆԱ.** — Լսիր, Դիմիտրի, դու երբեք կարո՞ղ ես ինձ հետ լուրջ խոսել:

**ԴԻՄԻՏՐԻ.** — Եթե Հրամայեմ, կարո՞ղ եմ:

**ՕՔՍԱՆԱ.** — Հրամայո՞ւմ եմ:

(Դիմիտրին վերցնում է գերանն, ուզում է գնալ):

**ՕՔՍԱՆԱ.** — Դիմիտրի, դու ճիշո՞ւմ ես այնտեղ գետի ափին, երբ ետ մղեցինք գերմանացիների գրոհը: Դու պառկած էիր խրամատում, մարտիկների հետ: Ես սողալով եկա ձեր դիրքերը՝ վիրավորների վերքերը կապելու համար: Դու շշնչացիր ինձ. «Օքսանա նայիր»: Ես նայեցի և ապշեցի: Քո ափի մեջ ես մի հեղ, անօդնական թոշնիկ տեսա, որ կտուցը թևի տակ կարծես ննջելիս լիներ: «Սա՛ էլ է վիրավոր,— ասացիր,— թոշել չի կարող, կարո՞ղ ես բուժել»: Ես քո աշքերի մեջ թախիծ տեսա: Որքա՞ն բարի էիր դու այն ըռպեներին: Ես կապեցի վիրավորների վերքերը, իսկ ճնճղուկը վերցրի հետս, սանմաս, բայց ճնճղուկը շապրեց: (Լուս է):

**ԴԻՄԻՏՐԻ.** — Ճիշում եմ, Այս մեկ տարում որքան բան տեսա, բայց ճնճղուկին շեմ մոռանում:

**ՕՔՍԱՆԱ.** — Այդ օրվանից ես երկար մտածում էի քո մասին: Լավն է սիրտդ, բարի է:

**ԴԻՄԻՏՐԻ.** — (Ուրախացած, գերանը վայր է դնում և կամաց մոտենում է Օքսանային): Ա՛յ, դա ուրիշ հարց է:

*Սիրում եմ այդպիսի խոսակցություններ, սիրելի՝ իմ  
Օքսան... (Ուզում է գրկել):*

*ՕՔՍԱՆԱ. — (Խույս է տալիս, ցատկում է ճյուղից, մատը  
քափ տալով): Իսկ լեզուդ խայթող է, խնայել շգիտեւ-  
Դե, ցտեսություն: Անահիտ Աբգարովնան հիմա ինձ  
է սպասում: (Հեռանում է, ձեռքը բարձրացնելով):*

*ԴԻՄԻՏՐԻ. — (Նույնպես ցատկելով, բռնում է Օքսանային,  
քաշում է դեպի իրեն, քայց երկուսն էլ մնում են  
կանգնած, անհամարձակ):*

*ՕՔՍԱՆԱ. — (Կլուխը բարձրացնելով, բնեուշ): Պահպանիր-  
քեզ, Դիմիտրի, սիրելի՝ ս...*

*ԴԻՄԻՏՐԻ. — (Ուզում է գրկել Օքսանային):*

*ՕՔՍԱՆԱ. — (Խույս է տալիս, փախչում է դուրս):*

*ԴԻՄԻՏՐԻ. — (Ինքնամոռացուրյան մեջ): Օքսանա... (Լոռում  
է): Գնաց: (Ոգեշնչված): Էխ, լա՛վ է ապրել այս աշ-  
խարհում... Զգի՛ր հարմոնը, Դիմիտրի, թող պայթի-  
գերմանացին: Երգիր, հակառակ սատանային... (Նվա-  
գում է «Զեմլյանկայում» հանրածանոք երգը. նվազի  
ելեշները գնում, կորշում են հեռուներում: 'Դիմիտրին  
ձայնակցում է հարմոնի երգին).*

Бьется в тесной печурке огонь,  
На поленьях смола, как слеза,  
И поет мне в землянке гармонь,  
Про улыбку твою и глаза...

(Զախ կածանով ներս են մտնում մի խումբ զինվորներ,  
որոնք բարչ են տալիս կտրած ծառերի բներ: Նրանք,  
ծառերը բարչ տալով, երգի ու հարմոնի ձայնի վրա,  
Դիմիտրիի համար աննկատելի, մոտենում են նրան:  
Նստում են իրենց բերած ծառերի վրա: Նստած են  
մազոտ երեսներով, հոգնած: Մի բանիսը պառկում են  
երազկոտ նայելով արդեն մքնող երկնքին: Հավաք-  
վածների մեջ են՝ վաշեն, վասիլին, նզորը, Ֆոման

գլուխը վիրակապում, Արտավագդը, Կարոն և ուրիշ-ներ):

ՉԻՄԻՏՐԻ. — (Ինքնամոռացության մեջ ձգում է հարմոնը, Երգում կրկներգը):

Пой, гармоника, выюге на зло,  
Заплутавшее счастье зови,  
Мне в холодной землянке тепло  
От моей негасимой любви...

ՉՈԼՈՐԸ. — (Մեղմ մասնակցում են, կրկնելով կրկներգը):

Мне в холодной землянке тепло,  
От моей негасимой любви...

ՉԻՄԻՏՐԻ. — (Նրանց ձայնի վրա հանկարծակի եկած՝ ես է նայում, բայց ավելի ոգեռված շարունակում է նը-վագը, մինչև ավարտվում է Երգը):

ՎԱՍԻԼԻ. — (Փարարելով ծխախոտը): Երկարի կյանքով, Օս-տապենկու: Թեթևացավ սիրու: (Դիմելով Ֆոմային): Տեսնեմ կրակդ (վառում է):

ՅՈՄԱ. — Ճշմարիտ ես, Վասիլի, երգը թեթևացնում է մար-դու սիրու: Շանր բան է թախիծը...

ՎԱՍԻԼԻ. — Ասում են՝ ժանդը մետաղն է կրծում, իսկ թա-խիծը՝ մարդու սիրու:

ՎԱԶԵ. — Իսկ դու աշխատիր, Վասիլի՝ Պետրովիչ, որ սիրու շժանդուի:

ՉԻՄԻՏՐԻ. — Մտրակով քշիր տիսությունը:

ԵԳՈՐ. — (Որ մոայլ բիկն է տվել ծառի բնին, ծոր տալով): Հե՛շտ է ասել, քշի՛ր... Կքշես, ինչպե՞ս չէ... Դու դեռ գերմանացո՞ւն քշիր:

ՉԻՄԻՏՐԻ. — (Էնդիատում է): Սըսս... ականջ դրեք...  
(կավում է միայնակ ինքնարիոի նեռավոր զվարցը, որ քանի գնում մոտենում է):

**ԴԻՄԻՏՐԻ.** — (Ձեռքն ականջին): Մանոթ երաժշտություն է ։  
Նա է՝ գերմանացի փոստատարը։

**ՎԱԶԻ.** — Նորի՞ց Կողերը քոր են գալիս...  
(Ինքնարիոի գվլոցը մոտենում է):

**ԵԳՈՐ.** — (Վեր նայելով): Նայեք... Պտտվում է մեր գլխավերել սատանան... Իշնում է... (Բոլորը վեր են նայում):

**ԱՐՏԱՎԱԶԴԻ.** — (Բորբոքված): Ես դու հետ հաշի՛վս կմաքրեմ։ (Ուսից հանում է ավտոմատը):

**ՎԱԶԵ.** — (Բոնելով ձեռքը): Սպասիր, Արտավազդ, Հորոտղան էլ նույնը կաներ, բայց մայորն արգելել է... Կրացենք մեր տեղը...  
ՖՈՄԱ. — Գցե՛ց տղերք, թռուցիկներ դցե՛ց...  
ԴԻՄԻՏՐԻ. — Ի՞նչ եք կարծում, այդ գերմանական գեներալների մեջ մի հաշվապահ շկա՞՝, որ վերջ տա այս բոլորին։ Այս էլ չորրորդ անգամն է... օդուան ի՞նչ... Ժամանակի վատնում, թղթի վատնում, բենզինի վատնում։

**ՎԱՍԻԼԻ.** — Ապա նայե՛ք... նայե՛ք... քամին հակառակ ուղղությամբ է քշում...  
ԵԳՈՐ. — (Ծոր տալով) Հապա ինչպե՞ս... Գիտեն թռուցիկներն իրենց տե՛ղը...  
ՎԱԶԵ. — Քամու բերածը քամին էլ կտանի... (ձեռքերով ցույց է տալիս վերև) նայեք, ալոշը ծոեց, ետ է գնում փոստատարը։ (Ինքնարիոի գվլոցը հետզինեան մարում է):

**ԱՐՏԱՎԱԶԴԻ.** — Մի դուրս դանք այս օղակից, տիսրելու ժամանակ էլ չենք ունենա։

**ԵԳՈՐ.** — (Ծոր տալով) Դուրս դա՞նք... Իսկ այդ ե՞րբ ալիսի լինի, Արտավազդ Կարապետովիչ... Վարդապետիկանք ենք վարում։

**ԿԱՐՈ.** — Իսկ դու միանգամից քահանա ձեռնադրվիր, վերջանա դնա։ (Ծիծաղ):

**ԵԳՈՐ.** — (Նեղացած) Այ, նայեցեք, (ցույց է տալիս գոտին)

վերջին անցքն է մնացել, բայց էլի թուլացել է՝  
(Զգում է զոտին): Այս էլ վերջինը: Հասկանո՞ւմ եք,  
նեղում է անխճածու:

ԴԻՄԻՏՐԻ. — Զարմացրի՛ր... ձդիր գոտիդ վերջին անցքի վրա  
և դիմացիր: (Դիմելով Վաշեին) Վաշե՛, հայրդ ի՞նչ  
կասեր այս դեպքում:

ՎԱԶԵ. — (մատը բարձրացնելով, խորհրդավոր): Հայր կա-  
սեր՝ համբերությունը կյանք է, հաջողության բանալին:

ՎԱՍԻԼԻ. — Սիրում ես միշտ, Վաշե, վիլիսուիայել. աշայրս  
ասաց, հայրս կասեր»:

ԵԳՈՐ. — Իսկ դու ի՞նչ ես հորդ մեջտեղ բերում, ասելիք ու-  
նես, ի՞նքդ ասա: Մարդկա՞նց ես ձեռ առնում, երբ  
բոլորս էլ մահվան բերանումն ենք:

ՎԱԶԵ. — (Դիմելով Եգորին): Մեղ մահ շկա, Եգոր Եվստիգ-  
նեիշ, հասկանո՞ւմ ես: Գերմանացուն թիակների վրա  
պիտի դնենք... Հետո, իմ ու Դիմիտրիի հարսանիքը  
պիտի անենք...

ԴԻՄԻՏՐԻ. — Ի՞նչ եմ ասում, տղամարդու խոսք է: Գիտե՞ք  
ինչ, եղբայրներ, ես կոնկրետ մարդ եմ, սիրում եմ հա-  
շիւլը: Մեկ, երկու, երեք, չորս... հազա՞ր... միլիոն...  
Օրինակի համար, ես հաշվել եմ՝ (դանդաղ, շեշտված)  
եթե Կարմիր Բանակի ամեն մի դինվոր հինգ գերմա-  
նացի սպանի՝ վեց ամսում Հիտլերի բանը...

ՎԱԶԵ. — Բո՛ւրդ կլինի...

ԿԱՐՈ. — Իսկ դու քանի՛ զինվոր ես սպանել...

ԴԻՄԻՏՐԻ. — Վեցը:

ՎԱԶԵ. — Յո՞թը...

ԴԻՄԻՏՐԻ. — Մեկը հաշիւլ չէ, մեջքից եմ խփել (նրում է  
Վաշեին):

ԱՐՏԱՎԱԶԵԴԻ. — Այ, դա դործ եմ ասում, թե չէ (դառնալով  
Եգորին) գոտիդ ես ցույց տալիս, վարդապետների  
ետևից ես ընկել... Ամոթ է, նեղության մեջ ենք, ճիշտ  
է, բայց առույգ պիտի լինենք, հոգիդ ուրախ պահիրտ  
Այ, ինչպես ե՛ս... (Կիտում է հոնքերը):

ԹԳՈՐ.— Այդ ինչպես, Արտավազդ Կարապետովիշ, քո Հըմ  
բամանով...

ՎԱԶԵ.— Այո, հըմանով: Լայն օրում ուրախ լինելը հեշտ  
գործ է: Իսկ դու, կարող ես՝ նեղ օրին հըմայիր քեզ,  
կարո՞ղ ես:

ԵԳՈՐ.— Խոսքով վոր չե՞ս կշտացնի: Երկու օր է անտա-  
ռում ծառ ենք կտրում, կիրճի վրա կամուրջ շինում,  
իսկ տղաները քաղցած են: Սոված վորը ականջ չունի:  
Ի՞նչ կասեք, եղբայրներ... (Բոլորը լու են):

ԵԳՈՐ.— Ի՞նչ եք լոել, մեռելատա՞նն եք, ի՞նչ է...

ԴԻՄԻՏՐԻ.— Քեզ հետ հարսանքատանն էլ չէի ուզենա լի-  
նել, այնտեղ էլ կդանդատվեիր:

ՎԱՍԻԼԻ.— (Դիմելով Եգորին) Լսիր, Եգոր, ուրիշի անունից  
մի խոսիր...

ՔՈԼՈՐԸ.— (Տեղերից) Ճի՛շտ է... Ճի՛շտ է...

(Երեսում են Սեմյոն պապը և Սաշկոն: Երկուսն էլ՝  
զամբյուղներով):

ԴԻՄԻՏՐԻ.— (Վեր կենալով տեղից) Ա՛յ, ինքն արդար դա-  
տավորը իր ոտքով եկավ: Ողջո՞ւյն, Սեմյոն պապ:  
Նստիր: (Սաշկոյին): Է՛յ, կավալեր, համեցիր, նստիր  
պապիդ կողքին: Վերջը ավտոմատ ստացա՞ր:

ՍԱՇԿՈ.— (Լուր նայելով) Կավալերն ի՞նքդ ես... Իսկ ավ-  
տոմատ ստացա, մայոր Օոլովը տվեց: (Սեմյոն պապը  
և Սաշկոն նստում են):

ՍԵՄ. ՊԱՊ.— Ի՞նչ է պատահել, զավակներս, վիճել եք:  
Նեղ օրին, ասում են վեճն անպակաս է:

ՎԱԶԵ.— Վիճե՞լ, ոչ: Մենք վեճ չունենք: Եղոր Ելստիդնե-  
ին է տիսրում: Նեղսրտում է ընկերը:

ՍԵՄ. ՊԱՊ.— Ահեղ պատերազմ է, զավակներս: Դիմանալ  
է հարկավոր: Մարդը, ասված է, երեք բանում է ճա-  
նաշվում՝ իշխանության, հարստության և մեկ էլ դըժ-  
վարության ժամանակ: Քա՛ջ եղեք: Քաջ մարդը քարե  
կամրջից էլ ամուր է:

ԵԳՈՐ.— Բայց, Սեմյոն պապ...

**ՍԵՄ. ՊԱՊ.** — «Բայցը» թուլ, որդիս. «Բայցը» սատանայի  
ապրանք է:

**ՎԱԶԵ.** — Հայրս կասեր՝ «Բայց» որ ցանես... (մտածում է)  
«մայդ» կհնձես... (ծիծաղ):

**ԱՐՏԱՎԱԶԴԻ.** — Շատ անհամ բան է ասել հայրդ:

**ՎԱԶԵ.** — (Կռանալով, ականջին) Արտոն ջան, ևս մեկը հերս  
չի ասել, ես եմ ասել:

**ՍԵՄ. ՊԱՊ.** — Երջանկությունն ու դժբախտությունը միասին  
են քոյլում զավակներս: Դժբախտություն բերեց գեր-  
մանացին և ուղում է խել մեր ամենամեծ երջանկու-  
թյունը՝ Հայրենիքը... Անհայրենիք մարդը նման է ձայ-  
նազուրկ սոխակին: Գերմանացին չի կարող միլիոննե-  
րին զրկել երգից: Այդ նրա ուժից վեր է...

**ՎԱՍԻԼԻ.** — Այդ ճշմարիտ է...

**ՍԵՄ. ՊԱՊ.** — Աշխարհը մեկին չի պատկանում: Ժողովուրդն  
է հայրենիքի տերը: Հայրենիքի համար արյունդ էլ  
պիտի տաս, քաղցած էլ կարող ես լինել:

**ՖԻՄԻՏՐԻ.** — (Երազկոտ) Հայրենիք... Գիտե՞ք եղբայրներ,  
ևս հիշեցի Դնեպրը, նրա ավտին՝ գարնանը ծաղկած  
այդիները... Դնեպրոգէսը... Մուկվա՛ն... (Զեռն է  
առնում հարմոնը և երազկոտ, դանդաղ ձգում: Նվա-  
զում է «широкая страна моя родная» երգը: Հայրե-  
նիքի մասին հաջորդ խոսակցությունները գնում են  
այդ երգի ֆոնի վրա):

**ՎԱԶԵ.** — Իոկ ես՝ հայրենի լոռի՛ն, մեր բարձրադիր լեռնե-  
րը, անդնդախոր Դերեղի խշոցը...

**ՎԱՍԻԼԻ.** — Իսկ ես՝ Սիրիոի տայզդան՝ խորհրդավոր և հա-  
րազատ, քայլե՛ր որքան կարող ես:

**ՅՈՒՄԱ.** — Իսկ ես՝ Դո՛նը, խաղաղ Դոնը լուսնակ գիշեր-  
ներին:

**ՎԱՐՈ.** — Իոկ ես՝ Արարատյան հովի՛տը, Արտաշատի այ-  
դիները... խաղողը... գինի՛ն...

**ԱՐՏԱՎԱԶԴԻ.** — Ես էլ...

**ԵԳՈՐ.** — (Ծանր) Է՛ի...

(Դիմքարին դադարում է նվազելուց):

ՍԵՄ. ՊԱՊ. — (Վառում է շիբուխը) Մեր շրջանի գյուղերից մեկում ապրում էր պառավ Մարֆան: Գերմանացին մտավ գյուղը, ավերեց, քանդեց: Պառավ Մարֆան մնաց գյուղում՝ հիվանդ ու անօդնական: Գերմանացին կրակի հանձնեց Մարֆա պառավի տունը, և իր տան հետ այրվեց անպաշտպան հիվանդ Մարֆան՝ հիվանդը ու անզոր մեծ մայրը: Բայց կատարվեց զարմանալին...

ՏԵՂԵՐԻՑ. — Ի՞նչ... ի՞նչ կատարվեց...

ՍԵՄ. ՊԱՊ. — Անցան օրեր, բայց նրա տան մոխիրներից բոց էր ելնում՝ կարմի՛ր, կարմի՛ր, ինչպես արյունը՝ ուտովում էր և չէր հանգչում...

ԴԻՄԻՏՐԻ. — Լեզե՞նդ է սա, եղբայրներ, իսկակա՞ն լեռնենդ...

ՍԵԿ. ՊԱՊ. — Եվ ասում են, որ գերմանացին, երբ նայում է այդ սուրբ կրակին՝ կուրանում է, կորցնում է ճանապարհը և այլևս ետ չի վերադառնա...

ՎԱՍԻԼԻ. — Այդպես էլ կլինի՛:

ՍԵՄ. ՊԱՊ. — Եվ ասո՞ւմ են, որ մեր զինվորների համար այդ բոցը լուսավորում է ճանապարհը գեղի Արևմուտք: Այդ կրակը վրեժի՛ կրակ է, որ խնայել շփիտեթշնամուն: Ահա՛ բոլորը:

ԴԻՄԻՏՐԻ. — (Հուզված վեր կենալով): Ո՛չ, Սեմյոն պապ, այդ բոլորը չէ՛: Այդ պատմությունը մե՛նք պետք է ավարտենք այնտեղ՝ Բեռլինո՛ւմ...

ՎԱԶԵ. — (Նույնպես հուզված վեր է կենում): Հերն անհած, նեղության մեջ ենք: Հայրս կասեր՝ քարից էլ ջուր կխմենք, ավաղից էլ պարան կշինենք և կխեղդենք գերմանացուն:

ՍԱՇԿՈ. — Ահա այսպես... (Ձեռքով օղակ է կազմում և սեղմում օղակը):

ՍԵՄ. ՊԱՊ. — (Բացելով զամբյուղը) Համեցեք, հյուրասիրվեք:

**ԴԻՄԻՏՐԻ.** — (Մոտենալով, վերցնում է): Վայրի տանձ,  
կաղին, (նայում է Եգորին, որը դեռ չի նկատել: Մո-  
տենում է նրան): Առ, Եղոր, կե՛ր: (Մյուսները ևս մո-  
տենում են Եգորին «ա՛ռ, Եգոր», «Եգոր, կե՛ր» բացա-  
կանշությամբ):

**ԵԳՈՐ.** — (Նեղացած): Ինքնե՛րդ կերեք... եխ, ինչ անհաս-  
կացողն եք եղել... Դուք իզուր եք ինձ վրա հարձակ-  
վում: Սիրու է, նեղվում է... Իսկ գերմանացուն ինեղ-  
դելիս ձեզնից ետ չեմ մնաւ:

**ՍԵՄ. ՊԱՊ.** — Այդ ճշմարիտ է: (Մոտենում է Եգորին): Խոսելն է թեթևացնում մարդու սիրությունը և ան-  
ցավ, սիրուն էլ հովացավ: Վերցրու:

**ԵԳՈՐ.** — (Վերցնելով): Դուք այն ասեք՝ ե՞րբ պիտի դուրս  
գանք այս տոպրակից: Սեղմել է սրիկան մեզ այս քա-  
րաժայռերին և խեղդում է: Դիմացիր, թե կարող ես:

**ԴԻՄԻՏՐԻ.** — Եվ կդիմանա՞նք:

**ԵԳՈՐ.** — Զէ, դուք ինձ այն ասեք, ինչո՞ւ չենք դուրս գալիք  
օղակումից: Ո՞ւմն ենք սպասում... Թե ուրիշ գործ  
կա՞զ, պարզ ասեն...

**ԴԻՄԻՏՐԻ.** — Մայոր Օռլովը քեզնից էլ, ինձնից էլ, լավ զի-  
տի ժամանակը:

**ՎԱԶԵ.** — (Եգորին): Այ, ծառ ենք կտրում՝ էս՝ մե՛կ, գերան  
կրում՝ էս՝ երկո՛ւ, հայրս կասեր՝ շատ բան իմանաս,  
շուտ կծերանաս, էս էլ՝ երեք... (Դիմիտրին) Դիմի՛տ-  
րի, սիրելիս, մի բան էլ նվագիր՝ թեթևանա Եգորի հո-  
գին: (Բոլորին): Ի՞նչ կասեք, եղբայրներ...

**ՏԵՂԵՐԻՑ.** — Թող նվագի՛... Թող նվագի՛...

**ՎԱԶԵ.** — Դիմիտրի, ապա, հայկականը, եղբոր պես:  
(Խորքում անցնում է Անահիտը: Սեմյոն պապը մոտե-  
նում է, ինչ որ բան է հարցնում և երկուսով նեռանում  
են դեպի անտառը):

**ԱՐՏԱՎԱԶԴՐ.** — (Շշուկով): Նվագիր, Դիմիտրի, Անահիտ  
Աբգարովնայի սիրած երգը նվագիր:

**ԴԻՄԻՏՐԻ.** — Նվագեմ: (Զգում է հարմոնը, նվազում է ռԱն-  
ձըրեն եկավ շաղալին» երգը):

**ՎԱԶԵ.** — (Զայնակցում է):

**ԱՐՏԱՎԱԶԴՐ.** — (Զայնակցում է):

**ԿԱՐՈ.** — (Նույնպես):

Անձրեն եկավ շաղալեն,  
Ռւռու տերե դողալեն,  
Հրես եկավ իմ ախպեր,  
Ալ ձին տակին խաղալեն...

**ՅՈՒՄԱ.** — Ընկեր կոմիսա'րը... (Բոլորը ուժի են կանգնում):

**ԱՎԱԼՅԱՆ.** — Ողջույն, ընկերներ: Ի՞նչ հավաքույթ է...

**ԴԻՄԻՏՐԻ.** — Համերգ է, ընկեր կոմիսար:

**ՎԱԶԵ.** — Ինքնագործ համերգ...

**ԱՎԱԼՅԱՆ.** — Հետո...

**ՎԱԶԵ.** — Հետո... (Նայելով եգորի կողմը): Եգորն է տըխ-  
րում, ընկեր կոմիսար: Գոտին լայնանում է, սիրու՝  
նեղանում...

**ԵԳՈՐ.** — (Բորբոքված): Խրատնե՞ր ես կարդում հորդ անու-  
նից: Եգորից բացի ուրիշ խոսակցություն չոնե՞մ, ինչ  
է...

**ԱՎԱԼՅԱՆ.** — Վեճը թողեք, ընկերներ:

**ՍԵՄ. ՊԱՊ.** — Ասում են՝ երբ հովիվները վիճում են, գայլն է  
օդուվում:

**ԱՎԱԼՅԱՆ.** — Ճշմարիտ է, պապ: (Եգորին): Ի՞նչ է պատա-  
հել, ընկեր եգոր:

**ԵԳՈՐ.** — (Դժգոհ): Նեղվում է մարդու սիրու, իսկ սրանք  
ծիծաղում են, ընկեր կոմիսար:

**ԱՎԱԼՅԱՆ.** — Նեղվում է սիրու, հասկանում եմ: (Նստում  
է կոնդին): Նստիր... Դժվար է, բայց, եղբայրս, դեռ  
գժվարությունն է մեզ ուղեկցում... Պատերազմ է: Լսե-  
ցեք, թե այսօր ինչ է դրեւ դերմանացին թռուցիկի  
մեջ:

**ԵԳՈՐ.** — Ի՞նչ է դրեւ, ընկեր կոմիսար...

**ԱՎԱԼՅԱՆ.** — (Նխախոտ է վառում, ապա ծխախոտատուփը

հանձնելով Եզրին, Եզրն էլ մյուսներին): Ինչպես  
միշտ: Գրում է, որ վերջին անգամն է զգուշացնում:  
Զեր ժամերը հաշված են: Հանձնվեք, քանի ուշ չէ,  
քանի բոլորդ քաղցից շեք մեռել: Ոչնչացրեք ձեր հրա-  
մանատարներին, հանձնվեք՝ կստանաք՝ հաց, շոկո-  
լադ և ներում:

ԴԻՄԻՏՐԻ. — Ի՞նչ առատաձեռն է եղել:

ԱՎԱԼՅԱՆ. — Գրում են՝ հակառակ դեպքում կոչնչացնենք:

ՎԱՍԻԼԻ. — Վախեցնում է:

ԴԻՄԻՏՐԻ. — Վախեցողներից շենք:

ԱՎԱԼՅԱՆ. — Ի՞նչ կասեք, ընկերներ...

ՎԱԶԵ. — Անհարմար է շպատասխանել, ընկեր կոմիսար,  
գերմանացիները կվիրավորվեն: Հայրս կասեք՝ փոքր-  
տացողին յա խեր ասա, յա՝ զահրումար:  
(Ընդհանուր ծիծաղ):

ԱՎԱԼՅԱՆ. — Ընկեր Եզր, հարկավոր է պատասխանել,

ԵԳՈՐ. — Եվ կպատասխանե՞նք, ընկեր կոմիսար: Թոռոցիկի  
ետևում պետք է գրել այսպես, ուղարկված է ոչ ճիշտ  
հասցեով, այստեղ այդպիսին չի ապրում:

ՍԵՄ. ՊԱՊ. — Եվ ավելացրեք. տեսնենք, թե ո՞վ ում կոշըն-  
շացնի:

ԱՎԱԼՅԱՆ. — Այդպես էլ կգրենք:

ԵԳՈՐ. — Ընկեր կոմիսար, ուղարկեցե՞ք մեզ մարտական  
գործողության: Տխուր է այսպես:

ԴԻՄԻՏՐԻ. — Կովի՛ տարեք, ընկեր կոմիսար:

ԿԱՐՈ. — Ժանգուած են զենքերը:

ԱՎԱԼՅԱՆ. — Գերանները պատրա՞ստ են:

ՎԱԶԵ. — Վերջին ծառերն ենք տանում:

ԱՎԱԼՅԱՆ. — Շարժվեցեք արադ, ժամանակը չի սպասում:

ՍԵՄ. ՊԱՊ. — (Սաշկոյին): Սաշկո՛, դու էլ:

(Բոլորը կոանում և վերցնում են գերանները):

ՎԱԶԵ. — Մեկ, երկու, մե՛կ էլ... Մեկ, երկու, մե՛կ էլ...

(Գերանները դնում են ուսերին):

ԱՎԱԼՅԱՆ. — Կարդադրված է՝ այսօր ուտելիքն ավելի կլինիք:

**ԴԻՄԻՏՐԻ.** — Այդ ոչի՞նչ, ընկեր կոմիսար:

**ԵԳՈՐ.** — Ինչո՞ւ՝ ոչի՞նչ...

**ԴԻՄԻՏՐԻ.** — Հայրդ ի՞նչ կասեր, Վաշե:

**ՎԱԶԵ.** — Ավել պատառը փորը չի ծակի:

**ԵԳՈՐ.** — Իմաստուն մարդ է եղել հայրդ:

(Զինվորները ուրախ, ովերված գերաններն ուսերին հեռանում են):

**ԱՎԱԼՅԱՆ.** — Սրանց հետ անհնարինը հնարավոր կդարձնենք (կացինով ամուր խփում է ծառին): **ՄԵՇԻ...** երկո՞ւ... (Մառից քափվում են աշնան դեղնած տերևները):

**ՄԵՄ. ՊԱՊ.** — (Ավալյանին): Քեզ հետ միասին:

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ռ

### ՊԱՏԿԻՐ ԵՐՐՈՐԴ

Օռլովի շտաբը: Իրիկուն: Շտաբը ներկայացնում է արագ պատրաստած բացօթյա տաղավար, որ բռնում է բեմի ձախ մասը: Մուտք՝ ձախից: Երեսում է ծառերի մի խումբ, որ կոանում է տաղավարի վրա: Աջ կողմում, տաղավարի մոտ, երեսում է շրջող պահակը և հեռանում: Տաղավարում՝ սեղան, կոճի, քախու, կախված է բարեկը: Վարագույրը բացվելիս, Անահիտն ավարտում է Օռլովի գլխի վիրակապումը:

**ԱՆԱՀԻՏ.** — Վերջ: Վերքը դանդաղ, բայց ապարինվում է: Բայց ևս մեկ սանտիմետր ձախ...

**ՕՌԼՈՎ.** — Եվ ևս այս բարձունքներում չեի լինի:

**ԱՆԱՀԻՏ.** — Վերքը չի՝ ցավում:

**ՕՌԼՈՎ.** — Ոչ:

**ԱՆԱՀԻՏ.** — Իսկ վիրակապը չի՝ անհանգստացնում:

**ՕՌԼՈՎ.** — Նույնպես ոչ:

**ԱՆԱՀԻՏ.** — Ի՞նչ զարմանալի մարդ եք, Վլադիմիր Սերգե-

Աիշ: Զեզ ոշինչ չի անհանգստացնում, վերքը չի ցավում, երբեք չեք գանգատվում, երբեք հոգնած չեք...

ՕՌԼՈՎ. — Դիտե՞ք ինչ, Անահիտ Արգարովնա, ով ցանկանում է բուժել ուրիշի վերքը, իր սեփականի մասին չի խոսում: Ինձ էլ այդ է բաժին ընկել:

ԱՆԱՀԻՏ. — (Դանդաղ բարձրացնելով գլուխը, կարծես խռում է ինքն իր նետ): Իր սեփականի մասին չի խռոսում... (Պառιզա): Իրավացի եք դուք: Իսկ երբ վերքը շա՞տ է խոր: (Հուզված): Ասացե՞ք Վլադիմիր Սերգեևիչ, ինչո՞ւ այսքան դաժան վարվեց ինձ հետ ճակատագիրը, և ինչպե՞ս կրեմ ինձ վիճակված այս անողոք հարվածը:

ՕՌԼՈՎ. — (Լոռում է):

ԱՆԱՀԻՏ. — Լոռ՞մ եք: Հասկանում եմ: Դժվար է ձեզ համար պատասխանել: Խոսքերն անօգուտ են և չեն մեղմացնի այրող վիշտը: Բայց վիշտը չի' կարող լոել, Վլադիմիր Սերգեևիչ, նամանավանդ, որ կրողը կին է, հարազատ քույր... (Մեջքով շուտ է գալիս դեպի Օռլովը և բաշկինակը սեղմում աշխերին):

ՕՌԼՈՎ. — (Մոտենալով բռնում է ձեռքը): Հանգստացեք, Անահիտ: Արսենը հարազատ է նաև ինձ: Ամբողջ հինգտարի զինվորական դպրոցում նստել ենք իրար կողքին:

ԱՆԱՀԻՏ. — (Նստելով): Ասում են՝ վիշտն անհատակ ծով է, ոչ կլողաս՝ կանցնես, ոչ կխմես՝ կդատարկես:

ՕՌԼՈՎ. — Բայց վիշտը շպետք է տապալի մարդուն, նամանավանդ այս ահեղ, դաժան օրերին:

ԱՆԱՀԻՏ. — Շնորհակալ եմ: Ներեցեք ինձ: Զեր հոգսերը շատ են, գիտեմ: Ես հիմա կդնամ: (Ոտքի է կանգնում):

ՕՌԼՈՎ. — Ինչպե՞ս է նրա վիճակը:

ԱՆԱՀԻՏ. — Ես ամեն ինչ արեցի նրան փրկելու համար: Բայց վիճակն օր-օրի ծանրանում է: Գանգրենան տարածվում է...

ՕՌԼՈՎ. — (Աշխատում է շեղել խոսակցությունը): Անահիտ Արգարովնա, պատկերացրեք, որ դուք պատրաստվում

եք ծանր վիրահատություն կատարելու: Հիմանդն ամբողջովին ձեղ է վստահել իր կյանքը և ձեր մեջ է տեսնում իր փրկության հույսը: Պատահե՞լ է, որ սկալպելը դողա ձեր ձեռքում:

**ԱՆԱՀԻՏ.**— Վիրաբույժն իր հուղմունքը ծածկում է միքանի վարագույներով: Բայց երբեմն այդ նրան շիհաջողվում: Ինձ հետ պատահեց երեկ, երբ իս վիրահատում էի Արսենին:

**ՕՌԵՌՎ.**— Այսպե՞ս: (Պարզա): Ես հիմա պատրաստվում եմ ծանր, շատ ծանր օպերացիայի, մարտական օպերացիայի: Իմ և վիրաբույժի միջև այն տարբերությունը կա, որ ինձ նայում են ոչ թե մի զույգ աշքեր՝ այլ՝ հարյուրավոր աշքեր:

**ԱՆԱՀԻՏ.**— Այդ հարյուրավոր աշքերից երկուսն այս րոպեիս վստահությամբ են նայում ձեղ, հավատացնում եմ, որ մյուսները ևս:

**ՕՌԵՌՎ.**— Շնորհակալ եմ: (Ներս է մտնում Սվետլովը):

**ԱՆԱՀԻՏ.**— Սկալպելը ձեր ձեռքում դողալու իրավունք շռնի՛: Բարի մնաք: (Անահիտն արագ դուրս է գնում):

**ՕՌԵՌՎ.**— Ուշացար: Որտե՞ղ է Ավալյանը:

**ՍՎԵՏԼՈՎ.**— Մենք միասին ուղևորվեցինք ձեղ մոտ: Ժամանել է Զարամուխ Օժիգովը՝ երեք պարտիղանների հետ: Ավալյանը գնաց նրանց մոտ:

**ՕՌԵՌՎ.**— Ժամանե՞լ է Զարամուխ Օժիգովը: Բերե՞լ է...

**ՍՎԵՏԼՈՎ.**— Ես դեռ չեմ հանդիպել նրան: (Ռգեռուված): Վլադիմի՛ր Սերգեևիշ, դուք շգիտեք, թե ինչ հերոսներ են մեր տղաները: Ես ամեն ինչ դրանցում եմ և հաճախ մոռանում, թե որտե՞ղ է վերջանում իրական դեպքը և որտեղ սկսվում լեղենդը...

**ՕՌԵՌՎ.**— Իսկ դու այդպես էլ անվանիր քո դիրքը՝ ռենդենդի ծնունդը»:

**ՍՎԵՏԼՈՎ.**— Հիանալի՛ միտք... (Քայլում է ետ ու առաջ՝ Շրջվելով): Հիմա կը երեն գերում...

**ՕՌԼՈՎ.** — (Նստելով սեղանի մոտ): Մուսերեն գիտի՞՝ գերա-  
մանական սպան:

**ՍՎԵՏԼՈՎ.** — Սովորեցրել են ավազակին:

**ՕՌԼՈՎ.** — Նստիր ահա այստեղ: Կղժվարանա, կթարդմա-  
նես և կարձանագրես: (Դիմիտրին և Վաշեն ներս են  
բերում գերուն: Լեյտենանտի աստիճան ունի: Նա մըտ-  
նում է զլուխը կախ, կանգնում է նույն դիրքում, միայն  
հոնքերի տակից զննում է տաղավարը: Դիմիտրին և  
Վաշեն կանգնում են նրա ետևում: Գերին զլխաբաց է:  
Հագուստը՝ նմրված: Երկու մեղալ ունի կրծքին):

**ՕՌԼՈՎ.** — (Գերուն): Զգուշացնում եմ, կասես բոլորը ճիշտու-  
շասկանալի՞ է: Ո՞ր զորամասից ես:

**ԳԵՐԻ.** — Հասկանում... Գեներալ էղելզեյեր բավարական-  
լեռնային դիվիզիա, հերր օֆիցեր:

**ՕՌԼՈՎ.** — Գեներալ էղելզեյեր... Ե՞րբ է ժամանել ձեր զո-  
րամասը Կովկաս:

**ԳԵՐԻ.** — Կովկաս... Հունիս ամիս... Մենք սովորում բավա-  
րական լեռներում, բայց գեներալ մեզ խարեց... Մեզ  
առաց Կովկաս օգոստոս կապուտ: Հիմա հոկտեմբեր...  
Ես զոռով կովել...

**ՕՌԼՈՎ.** — Սպասիր: Զոռով, թե բարի կամքով, այդ մեզ հե-  
տաքրքիր չէ: Ես գիտեմ, որ Կովկասը Բավարիա չէ,  
գերմանական տուրիստների համար վտանգավոր վայր:  
Է: Ի՞նչ էիր անում այս անտառներում:

**ԳԵՐԻ.** — (Գլխահակ, լռում է):

**ՕՌԼՈՎ.** — Խոսի՛ր:

**ԳԵՐԻ.** — Հեր մայոր, ես հետախույզ... Գեներալ ասաց, որ  
ձեր զումարտակ հարկավոր խեղղել... Ամբողջ մի գունդ  
կովել ձեր դեմ: Գեներալ բարկացած, շատ բարկա-  
ցած:

**ՕՌԼՈՎ.** — Այդպես: Մի ամբողջ գունդ: Քի՛շ է, մի գունդ է է  
է հարկավոր :

**ԳԵՐԻ.** — Կովկաս սարսափելի... Այնտեղ ամեն թուփ՝ կրա-  
կի, ամեն քար՝ կրակի... Մեզ խարեց գեներալ, մեզ

խաբեց ֆյուրեր... (Ձեռքը մեքենայաբար բարձրացնում է):

ՕՌԼՈՎ. — Պատասխանիր հարցիս: Պատրաստվո՞ւմ ե՞ր հարձակման:

ԳԵՐԻ. — Որքան ինձ հայտնի, այս: Նոյեմբեր յոթ, ունուցիա տոն... ֆյուրեր հրամայել մենք գրավենք՝ Տուափսե, Սուխում:

ՕՌԼՈՎ. — Շատ մեծ է ֆյուրերիդ ախորժակը... Ինչո՞ւ շե՞ք հարձակվում:

ԳԵՐԻ. — Նոր դիվիզիա սպասում... Վիլինդ... Տանկեր, շատ տանկեր: Առանց տանկ դժվար հարձակվել...

ՕՌԼՈՎ. — (Նայում է Սվետլովին, անփույր) Այդ մենք դիտենք: Գիտենք նաև, որ ներքեւ անտառը հատող ճանապարհով պետք է ձեր տանկերն անցնեն: Եվ վաղը, այնպես չէ՞...

ԳԵՐԻ. — Հե՛րը մայոր, անտառի ճանապարհ, այս... Հարձակում, հերը մայոր, շորս օրից...

ՕՌԼՈՎ. — (Խիստ) Ստո'ւմ ես:

ԳԵՐԻ. — Հերը մայոր, ես ձեր ձեռքին: Եթե սուտ, կրակիր շորս օրից՝ շաբաթ օր:

ՕՌԼՈՎ. — (Նայելով Սվետլովին, անփույր): Ուրիշ ի՞նչ ունես ասելու...

ԳԵՐԻ. — Հե՛րը մայոր, (Դիմելով Սվետլովին) հե՛րը օֆիցեր, ես ոչ մեղավոր, ինձ ասաց կույի, ես կովեմ, Ռուալանդ մե՛ծ, շա՞տ մեծ, հաղթել դժվար...

ՍՎԵՏԼՈՎ. — Սոխակ է դարձել ավաղակը:

ՕՌԼՈՎ. — (Գերուն): Դու երբ մեր հողը մտար, այդպես չէի՞ր մտածում: (Վեր է կենում տեղից, մոտենում գերուն: Գերին, վախենալով, մի քայլ ետ է գնում): Մի վախենա, որտե՞ղ ես ստացել այս խաշը... (Չոշափում է):

ԳԵՐԻ. — Ոչ կովկաս, Մաժինոյի գիծ, հերը մայոր...

ՕՌԼՈՎ. — Իսկ այս մյո՞ւսը...

ԳԵՐԻ. — Կովկաս նեյն, Փարիզ...

**ՕՌԼՈՎ.** — Այդուհս: Դուք բոլորդ մի մեծ փայտյա խաչ էլ կստանաք Կովկասում: (Դիմիտրիին և Վաշեին) տարեկ'ք սրան:

**ԳԵՐԻ.** — (Կցկտուր): Բայց ես չե՞մ մեղավոր... ֆյուրեր մեղավոր... հե՞րը մայոր...

**ՕՌԼՈՎ.** — Տարեկ'ք:

**ԴԻՄԻՏՐԻ.** — (Ավտոմատի խզակորով հրում է գերուն): Քայլիր, քայլիր, աղավնյակս, քեզ զբոսնել է հարկավոր: (Գերին շարժվում է դեպի ելքը, ետեից՝ Վաշեն, ապա՝ Դիմիտրին):

**ՕՌԼՈՎ.** — Զեռք շտաք, հասկանալի՞ է...

**ՎԱԶԵ.** — Հասկանալի է, ընկեր մայոր: (Դուրս է գնում):

**ՕՌԼՈՎ.** — (Մտազբաղ) Մի գունդ են պահում մեզ վրա, քիչ է (Քայլում է ետ ու առաջ):

**ՍՎԵՏԼՈՎ.** — Մեր հետախուզության տվյալները ճշտվում են:

**ՕՌԼՈՎ.** — Այո՛: Հարձակման են սլատրաստվում: Առանց տանկերի շեն կարող:

**ՍՎԵՏԼՈՎ.** — Պետք է փակել տանկերի ճանապարհը: (Ներս է գալիս Արտավազդը):

**ԱՐՏԱՎԱԶԴ.** — Ընկեր մայոր, եկել է սլատրիզանների կապավորը, լեռնցի Զարամուխ Օժիգովը:

**ՕՌԼՈՎ.** — Ներս կանչիր:

(Արագ ներս է մտնում Օժիգովը, բարձրահասակ, բուխ: Սև յափունջի ունի ուսին, մեջքին կախված է բաշիլղը: Արագաշարժ է, արագախոս):

**ՕՌԼՈՎ.** — (Ուրախացած): Ա՛, Օժիգո՞վ, ժամանեցիր վերջապես: (Մոտենում է, ձեռքը դնում ուսին): Նո՞ւ, ինչպե՞ս հասար: Չարշարանքդ շա՞տ էր:

**ՕԺԻԳՈՎ.** — Լեռնագագաթներում մառախուղ է իշել: Կայրեղքը դժվար էր: Վերևում անձրև եկավ: Դեռ յափունջիաթաց է. թույլ կտա՞ք հանել:

**ՕՌԼՈՎ.** — Հանիր, հանգստացիր: Հիմա քեզ կտաքացնենք:

(Սվետլովին) Ալեքսանդր Վասիլեկիչ, դու կարծեմ այն-  
տեղ հոգեպահուստ պետք է ունենաս, մի քանի զրամ,  
եթե կարելի է:

**ՍՎԵՏԼՈՎ.** — Միլով: Այս բոպեխս: (Մոտենում է ինքնազործ-  
քախտին: Այնաեղից բերում է բակլաժկան, ողի լը յ-  
նում փոքրիկ քիրեղյա ջրամանը: Օժիգովին) Համեցեք:

**ՕԺԻԳՈՎ.** — Ինչ նեղություն է, ընկեր կապիտան: (Վերցնում  
է): Զեր ողջությունը: (Խմում է): Շնորհակալ եմ:

**ՕՌԼՈՎ.** — (Օժիգովին) Նստիր, Զարամուխ: Երկար ճանա-  
պարհ ես կտրել: (Օժիգովը նստում է): Դե, հիմա եղ-  
բայրս, պատմիր, ինչպես են ձերոնք, պարտիզանները:

**ՕԺԻԳՈՎ.** — Ողջ և առողջ: Գիշեր-ցերեկ խտուտ ենք ածում  
գերմանացուն: Թշնամին վերջին օրերս ինչոր աշխու-  
ժացել է: Շտապում է: Զմեռը վրա է հասնում: Ընկեր  
մայոր, բերել եմ խոստացածը, մթերքը: Ինձ հետ չորս  
հոգի են եկել պարտիզաններից:

**ՍՎԵՏԼՈՎ.** — (Ուրախ) Տեսնո՞ւմ ես, Վլադիմիր Սերգեևիչ,  
ասացի, գլուխ կրերեն:

**ՕՌԼՈՎ.** — (Խուլ ձայնով): Պարտիզաններն էլ նեղության  
մեջ են: Իրենց բերանից են կտրում: Գումարուակի  
անունից շնորհակալություն եմ հայտնում:

**ՕԺԻԳՈՎ.** — Մեր սուրբ պարտքն էր, ընկեր մայոր: Հայրե-  
նիքն է պահանջում: Տեղացիներս յոլա կդնանք: Ժողո-  
վուրդն է տալիս իր թաքցրածը: Բերածն էլ մի բան չէ  
հաց, սելյողկա:

**ՍՎԵՏԼՈՎ.** — Հապա ո՞ւր են ընկերներդ:

**ՕԺԻԳՈՎ.** — Այնտեղ, զինվորների հետ, Տնտեսական դա-  
սակում տաք զրույցի մեջ թողեցի:

**ՍՎԵՏԼՈՎ.** — Պարտիզաններն ինձ հարկավոր են, ես թռա՛  
(Արագ գնում է):

**ՕՌԼՈՎ.** — (Օժիգովին) Ասում ես՝ գերմանացիք աշխուժա-  
ցե՞լ են:

**ՕԺԻԳՈՎ.** — Այդպես է երկում: Բայց դժվար նրանք հար-  
ձակման անցնեն: Տանկեր քիչ ունեն այս հատվածում:

**ՕՌԼՈՎ.** — Տանկեր քիչ ունեն, բայց կարող են ունենալ։  
**ՕԺԻԳՈՎ.** — Դժվար թե, չեմ հավատում։ Ստալինդրադը  
կաշկանդել է նրանց։

**ՕՌԼՈՎ.** — Այդպես... Ուրիշ ի՞նչ նորություն...  
(Խսում է ուժեղ պայրյուն, դղրդոց։ Ապա ևս երկուսը։  
Կարծես քարածայոր փուլ գա։ Օոլովն անհանգիստ վեր  
է կենում։ Օժիգովն արագ վերցնում է յափունջին և  
հարցական նայում Օոլովին)։

**ՕՌԼՈՎ.** — Այս ի՞նչ էր։ Զարամուխ... Գնա՞նք...  
**ՕԺԻԳՈՎ.** — Դժվարանում եմ բացատրել, ընկեր մայոր։  
(Օոլովը և Օժիգովը արագ դուրս են գալիս։ Բեմն առ-  
ծամանակ դատարկ է։ Հեասպան ներս է վազում Վա-  
չեն)։

**ՎԱԶԵՐ.** — (Բարձր) Ընկեր մայոր... (Տեսնում է ոչ ոք չկա)։  
Չկա ընկեր մայորը. պայթե՛ց, պայթե՛ց...  
(Ներս է վազում Սվետլովը)։

**ՄՎԵՏԼՈՎ.** — (ծանր հեալով) Վլադիմիր Սերգեևի՛չ... (Տես-  
նելով Վաչեին) Որտե՛ղ է մայորը։  
**ՎԱԶԵՐ.** — Ընկեր կապիտան, պայթե՛ց... դիմամիտը պա-  
հեստում պայթեց, մեկ հոգի սպանվեց, երկուառ՝ վի-  
րավոր են։

**ՄՎԵՏԼՈՎ.** — Դիտեմ, ամեն ինչ գիտեմ։ (Անհանգիստ քայ-  
լում է ետ ու առաջ)։ Պետք է գտնել մայորին։  
(Դուրս է վազում, ետեից՝ Վաչեն։ Բեմը նորից առժա-  
մանակ դատարկ է։ Արագ ներս են մտնում Օոլովը և  
Սվալյանը։ Օոլովը գունատ է, ներվային)։

**ՕՌԼՈՎ.** — Տապալվում է գործը։  
**ԱՎԱԼՅԱՆ.** — Եվ ինչպես պատահեց...  
**ՕՌԼՈՎ.** — Դիմամիտ չկա այլևս։ Ուրեմն գերմանական  
տանկերը պետք է անցնեն։ (Նստում է, կրծում է  
շրջուները)։

(Դրսում շարունակվում է աղմուկը)։  
**ԱՎԱԼՅԱՆ.** — (Լոռում է մի պահ) Դեռ ամեն ինչ կորած չէ։  
(Տաղավարից դուրս նայելով) Դադարեցրե՛ք աղմուկը։

- ՕՌԼՈՎ.** — (Կարծես Երազից արքնացած) Այդ ինչպե՞ս  
**ԱՎԱԼՅԱՆ.** — (Մոտենալով Օռլովին) Վլադիմիր Սերգեևիչ՝  
 պարտիզանների մոտ դինամիտ կա:  
**ՕՌԼՈՎ.** — (Կտրուկ: Ռտեի է կանգնում, ուրախացած)՝  
 կա՞... Գյուտե՞ս հաստատ:
- ԱՎԱԼՅԱՆ.** — Կա: Պետք է հիմա և ետ մարդիկ ուղարկել:  
**ՕՌԼՈՎ.** — Ճշմարիտ ես: Ժամանակ չի կարելի կորցնել՝  
 Ո՞ւմ ուղարկենք:
- ԱՎԱԼՅԱՆ.** — (Մտածում է) Ինչպե՞ս եք դոնում Սեմյոն  
 պապին:
- ՕՌԼՈՎ.** — (Մտածում է) Սեմյոն պապի՞ն, Կարելի է: Փորձ-  
 ված է ծերուկը: Ես հավատում եմ նրան: Մի քանի հո-  
 գի էլ՝ դումարտակից: Որոշված է... .
- ԱՎԱԼՅԱՆ.** — Որոշված է:
- ՕՌԼՈՎ.** — (Մոտենում է Ելֆին) Ո՞վ կա այդտեղ:  
 (Ներս է մտնում Արտավագղը):
- ՕՌԼՈՎ.** — Կանչել այստեղ Սեմյոն պապին: Սպասիր, կանչի՞-  
 նակ կապիտան Խրոնիչենին: Արա՞գ:
- ԱՐԱՏԱՎԱԶԴՐ.** — Լսում եմ, ընկեր մայոր: (Արտավագղը գը-  
 նում է):
- ՕՌԼՈՎ.** — (Մտազբաղ): Էլս, Միտրաֆոն: Ի՞նչ անեմ քեզ  
 հետ:
- ԱՎԱԼՅԱՆ.** — Քնա՞ծ էր այդ Խրոնիչենը, թե՞...
- ՕՌԼՈՎ.** — Թե ի՞նչ...
- ԱՎԱԼՅԱՆ.** — (Հուզված): Չդիտեմ: Թունավորվեց մթերքը,  
 պայթեց դինամիտը: Երեկ խնդրում էր միջնորդել իրեն  
 այլ աշխատանքի տեղափոխել: Մոայլ է, ջղային, շդի-  
 տեմ ինչ է կատարվում նրա հետ, իսկ մենք...
- ՕՌԼՈՎ.** — Դու կարծես նույնիսկ հանդիմանում ես ինձ:  
 Ուինչ, իրավացի ես:
- ԱՎԱԼՅԱՆ.** — Թշնամի կա մեր մեջ..., ամեն ինչ Խրոնիչենի  
 շուրջն է պտտվում:  
 (Երեսում է Սեմյոն պապը):
- ՍԵՄ. ՊԱՊ.** — (Հուզված): Սա ի՞նչ փորձանք էր, ընկեր մա-  
 յուր:

**ՕՌՈՎ.** — (Գործնական): *Սեմյոն պապ, նստիր:* (Պապը նստում է: Օռլովը նստում է նրա կողքին): *Քո օգնությունն անհրաժեշտ է մեզ:*

**ՍԵՄ.** *ՊԱՊ.* — (Լուրջ): *Պատրաստ եմ ամեն րոպե: Խոսիր:*  
**ՕՌՈՎ.** — *Պետք է գնաս ձերոնց՝ պարտիզանների մոտ:* *Դինամիտ է հարկավոր մեզ,* *Սեմյոն պապ, հասկանո՞ւմ ես:* *Պիտք է դինամիտ խնդրես:*

**ՍԵՄ.** *ՊԱՊ.* — *Դինամիտ ունենք, որդիս:* *Պարտիզանն առանց դինամիտի չի կարող գործել:* *Եվ շո՞ւտ է անհրաժեշտ, զավակներս:*

**ԱՎԱԼՅԱՆ.** — *Օդի պես:*  
**ՕՌՈՎ.** — *Պապ, հասկանո՞ւմ ես, թե վաղը դինամիտ շինի...* (լոռում է):

**ՍԵՄ.** *ՊԱՊ.* — *Խոսիր, Վլադիմիր Սերգեևիչ, ավարտիր:* *միտքդ:* *Սեմյոն պապին հավատա, ինչպես ինքդ քեզ:*

**ՕՌՈՎ.** — *Եթե վաղը դինամիտ շինի, գերմանական տանկերը կանցնեն:* *Այդպես էլ ասա ձեր հրամանատարինք Հասկացա՞ր, պապ:*

**ՍԵՄ.** *ՊԱՊ.* — *Ամեն ինչ հասկանալի է:*

**ԱՎԱԼՅԱՆ.** — *Դժվար չէ՞ քեզ համար, Սեմյոն պապ:*

**ՍԵՄ.** *ՊԱՊ.* — *Դա ի՞նչ խոսք է:* *Այս վայրերն ինձանից ավելի լավ ոչ ոք չդիտե: Քայլել ջահելի հետ կմրցեմ:* *Զենքը՝ չի դողա ձեռքումս:* *Իսկ գերմանացու հետ՝ ես հաշիվ ունեմ, մե՞ծ հաշիվ:* *Ե՞րբ է հարկավոր գնալ:*

**ՕՌՈՎ.** — *Հենց հիմա:* *Քեզ հետ կդան երեք հոգի:* *Ահա?* (Մի գրություն է տալիս):

**ՍԵՄ.** *ՊԱՊ.* — *Հասկանալի է ամեն ինչ:* *Դինամիտ կլինի,* *զավակներս:* (Ոտքի է կանգնում):

**ՕՌՈՎ.** — *Դե, պապ, գնա պատրաստվիր:* *Մնացած կարգադրությունները Ավալյանը կանի:* *Բարի գնաս:* (Ձեռքը պարզում է, գորովաճենով սեղմում է ձեռքը):

**ՍԵՄ.** *ՊԱՊ.* — *Բարի մնաք:* *Մեծ պատվի եք ինձ արժանացնում:*

(Սեմյոն պապը գնում է):

**ԱՎԱԼՅԱՆ.** — (Նայում է Սեմյոն պապի ետևից: Շտկվելով):  
ԽՐՈՒՆԻՇԿԵՐ... (Ներս է մտնում ԽԵՐՈՒՆԻՉԵՐ, հևում է,  
հուզված):

**ԽՐՈՒՆԻՉԵՎ.** — Կանչե՞լ եք ինձ, ընկեր մայոր: Այս ի՞նչ  
կատարվեց... Սա ի՞նչ առեղծված է:

**ՕՌԼՈՎ.** — (Չոր, խիստ): Սպասի՛ր: (Նկատելով, որ Ավալ-  
յանը ուզում է գնալ. Ավալյանին): Կապիտա՛ն...

**ԽՐՈՒՆԻՉԵՎ.** — (Հուզված): Այս ի՞նչ է կատարվում... Կորց-  
րել եմ դլուխս, Վալողյա, աղատի՛ր ինձ, ես չե՛մ կա-  
րող այլև...

**ՕՌԼՈՎ.** — (Խիստ): Կապիտա՛ն:

**ԱՎԱԼՅԱՆ.** — (ԽԵՐՈՒՆԻՉԵՐԻՆ): Նա ձեզ համար Վալողյա չէ,  
այլ մայոր Օռլով:

**ԽՐՈՒՆԻՉԵՎ.** — (Շփորված): Ընկե՛ր մայոր...

**ՕՌԼՈՎ.** — (Ընդհատելով): Ի՞նչ ընկեր մայոր: Հիշո՞ւմ եք  
մեր զրուցը: Ո՞ւր է դինամիտը:

**ԽՐՈՒՆԻՉԵՎ.** — Ես ոչինչ չեմ հասկանում, հասկանո՞ւմ եք,  
ես ոչինչ չգիտեմ...

**ՕՌԼՈՎ.** — Զգիտե՞ս, չե՞ս հասկանում... Դու Կարմիր Բա-  
նակի հրամանատար ես, թե...

**ԽՐՈՒՆԻՉԵՎ.** — Վալո՞ղյա...

**ՕՌԼՈՎ.** — (Մեջնով կանգնելով դեպի ԽԵՐՈՒՆԻՉԵՐ): Լոի՛ր:  
(Արագ շրջվելով դեպի ԽԵՐՈՒՆԻՉԵՐ. կտրուկ): Վա՛ր դիր  
զենքդ:

**ԽՐՈՒՆԻՉԵՎ.** — (Շփորված): Բայց ինչո՞ւ համար. Վլադի-  
միր:

**ԱՎԱԼՅԱՆ.** — (Չենքնով ցույց տալով սեղանը): Վա՛ր դրեք,  
հրամայված է:

**ԽՐՈՒՆԻՉԵՎ.** — (Ինքնաբերաբ արձակում է գոտին, որից  
կախված է նազանը և մոտենում սեղանին: Օռլովին):  
Հանուն մեր բարեկամության:

**ՕՌԼՈՎ.** — (Չնայելով նրա կողմը): Կապիտան ԽՐՈՒՆԻՉԵՐ,  
դուք կալանքի տակ եք առնված:

**ԽՐՈՒՆԻՉԵՎ.** — Վալո՞ղյա...

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ԳՈՐԾՈՂԱԿԹՅԱՆ ԵՐԲԱՐԴ

ՊԱՏԿԵՐ ԶՈՐՅՈՐԴ

Մոլովի զորամասի սանմասը: Ուշ գիշեր: Քարայր: Մեծ քարախոռոշ: Սանմասը վարագույրով կիսով շափ քաժանված է: Ավելի ընդարձակ՝ ձախ մասում պառկած էն գումարտակի ծանր վիրավորները՝ 5 հոգի: Առջևի պլանում պառկած է Դիլանյանը: Վիրավորները բնած են: Վարագույրի այս կողմը, խորքում՝ բարձրադիր ինքնազործ սեղան՝ վիրահատման համար փոքրիկ սեղան՝ վիրահատման զանազան պարագան պարագաներով: Քարայրի մուտքից դուրս երեսում է աստղազարդ երկնիմի կտորը, անտառի փեշը՝ լուսավորված լուսնյակի լույսով: Անահիտը, զլովսն առած ափերի մեջ, անշարժ նստած է, իսկ Օքսանան վիրակապ է փարարում:

**ՕՔՍԱՆԱ.** — (Դադարում է վիրակապը փարարելուց): Անտառիտ Արդարովնա, Սեմյոն պապը երեք օր է շկատ: Սիրտը ինչոր անհանդիսութ է: Պարտիզանները երեկ վերադարձան, բերեցին այդ խորհրդավոր արկղները, իսկ Սեմյոն պապը և Սաշկոն շկան... Մարդիկ լուակյաց են դարձել, այս դուք էլ լոել եք...

**ԱՆԱՀԻՏ.** — Զորամասը պետք է մարտական գործողության մեկնի: Բայց բոլորը չեն գնում, Օքսանա: Ամենից առողջները: Կնշանակի կվերադառնաք շուտով: Դու էլ պետք է մեկնես, Օքսանա: Պատրաստ ես մեկնելու:

**ՕՔՍԱՆԱ.** — Իսկ ի՞նչ է հարկավոր պատրաստ լինելու համար՝ շինել, գլխարկ, սանպայուսակ: Ահա բոլորը: Եվ քայլի՛ր, Օքսանա, զինվորների հետ՝ գիշեր ու ցերկէ: Իսկ դուք... մնում եք: Դե, իհարկե, առանց ձեզ ինչպես կարող են մնալ վիրավորները:

**ԱՆԱՀԻՏ.** — (Մեղմ): Օքսանա, սիրելիս, ասա, պատահե՞լ է, որ դու շատ տիրես, շատ...

**ՕՔՍԱՆԱ.** — Հապա ինչպես: Տիրությունը նույնքան մարդ-

կային է, որքան և ուրախությունը: Երբ տիսրում եմ՝  
հաճախ սկսում եմ թափառել և երազել:

ԱՆԱՀԻՏ. — Երազել... Իսկ ինչի՞ մասին:

ՕՔՍԱՆԱ. — Ինչ որ սիրտս թելադրի: Այ, այնտեղ, ես դուրս  
էի գալիս գետի ափը... Վաղ առավոտյան երգում են  
սոխակները, և թեթևանում էր սիրտս: Իսկ երբ ուրախ  
եմ լինում, շատ շեմ ընկնում ուրախության ետևից,  
կարող է փախչել:

ԱՆԱՀԻՏ. — Ես էլ երևանում, ուսանողուհի եղած ժամա-  
նակս, սիրում էի իշնել Զանդիլի ձորը... Ապրի՛լ, ծաղ-  
կել են դեղձենինե՛րը... Չորր լցված է ծաղիկների-  
բուրմունքով: (Լոռում է մի պահ, երազկոտ, ցածր): Ման-  
կությանս տարիներին Արսենի հետ որքան էինք թա-  
փառում ջորաթաղի այգիներում... Ես փոքր էի, Օքսա-  
նա, Արսենն ավագն էր մեր մեջ, նա գրկելով թոշնում  
էր քարերի, լայն առուների վրայից, իսկ ես ծաղիկներից  
մինչեր էի հյուսում նրա համար... Որքան սիրելի, մեծ  
և հզոր էր նա իմ աշքում... իսկ այժմ.. (Լոռում է):

ՕՔՍԱՆԱ. — (Մոտենալով) Անահիտ Աբգարովնա... նա կա-  
ռողջանա՞...

ԱՆԱՀԻՏ. — (Լոռ է):

ՕՔՍԱՆԱ. — (Վեր է կենում տեղից, վերցնում է սանսայու-  
սակը, զննում): Պատրաստ եմ մեկնելու:  
(Վարագույրի ետևից ծանր տնտոցի ձայն է լսվում):

ՕՔՍԱՆԱ. — (Անհանգիստ): Մայորն է...

ԱՆԱՀԻՏ. — (Արագ մոտենում է Դիլանյանին): Արսեն...  
ի՞նչ ես կամենում...

ԴԻԼԱՆՅԱՆ. — Անահիտ... դո՞ւ ես... (ծանր շնչում է): Այլ-  
վում է մարմինս... Չուր կարելի՞ է...

ԱՆԱՀԻՏ. — Այս րոպեիս: (Չուր է բերում: Բարձրացնում է  
գլուխը, զուր է տալիս):

ԴԻԼԱՆՅԱՆ. — Շնորհակալ եմ: Օոլովը չի՞ եկել:

ԱՆԱՀԻՏ. — Նա շուտով պետք է դա: Հանդիսաւ պառկիր: Ու-  
րիշ ի՞նչ ես կամենում:

**ԴԻԼԱՆՅԱՆ.** — (Լուս է մի պահ): Նստիր այսուեղ: (Անահիտը նստում է կոնյդին): Ասա, եթե մի բան խնդրեմ, կկատարե՞ս:

**ԱՆԱՀԻՏ.** — Ասա, ի՞նչ ևս կամենում...

(Օհսանան լարված, վարագույրի ետևից լսում է):

**ԴԻԼԱՆՅԱՆ.** — (Խորհրդավոր, ցածր ձայնով): Անահիտ, սիրելի քռւյր, փրկություն շկա... Ես այդ զգում եմ. (Խոսում է հանկարծ զարմանալի հանգիստ): Ես ավելորդ բեռ եմ դարձել գումարտակի համար... (Անահիտն անհանգիստ շարժվում է տեղում): Սպասիր... Ծոլով շատ է մտահոգվում իմ մասին, ես նրանից ժամանակ և ուշադրություն եմ խլում: Բոլորիցդ... (Լոռում է): Ազատիր և քեզ և ինձ այս վիճակից...

**ԱՆԱՀԻՏ.** — Կբուժենք քեզ, Արսեն:

**ԴԻԼԱՆՅԱՆ.** — Ասա՛ եթե դա բոպեն, Երբ դու զգաս, որ ամեն ինչ վերջացած է, և այլևս հույս շկա...

**ԱՆԱՀԻՏ.** — Պետք շեն այդ խոսքերը:

**ԴԻԼԱՆՅԱՆ.** — Լսիր ինձ, Անահիտ..., Զէ՞ որ դու քռւյր լինելուց բացի, ուզմիկ ես... Երբ զգաս, որ իմ գոյությունը խանգարում է գործին, և ես բեռ եմ, կտա՞ս մի դեղ, որը վերջակետ լինի... Հասկանո՞ւմ ես...

**ԱՆԱՀԻՏ.** — (Կոահելով ինչ է ուզում իրենից Դիլանյանը, հազիվ զալելով հոգմունքը, ոտմի է կանգնում, զլուխը ետ զցում, լուռ է):

**ԴԻԼԱՆՅԱՆ.** — Անահիտ... Պատասխանիր... Կկատարե՞մ խնդիրքս...

**ԱՆԱՀԻՏ.** — (Կովելով ինքն իր նետ: Աշքերը կիսախոսի): Եթե դա այդ բոպեն, կկատարեմ, Արսեն:

**ԴԻԼԱՆՅԱՆ.** — (Հանգիստ) Շնորհակալ եմ: Հիմա նստիր ինձ մոտ, բռնիր ձեռքս: (Անահիտը նստում, բռնում է Դիլանյանի ձեռքը: Խոր լոռիքյուն):

**ՕՔՍԱՆԱ.** — (Հեռանում է վարագույրից շշուկով): Աստված իմ... Ահա թե ի՞նչն էր անհանգստացնում նրան (Սըրբում է արցունքները):

(Արագ ներս է գալիս Դիմիտրին՝ հարմոնն ուսին անցկացրած: Օքսանան չի նկատում:

ԴԻՄԻՏՐԻ.— (Ցածր) Օքսանա...

ՕՔՍԱՆԱ.— (Լուս շրջվում է դեպի նա):

ԴԻՄԻՏՐԻ.— Ի՞նչ է պատահել, Օքսանա...

ՕՔՍԱՆԱ.— Ոչինչ, հենց այնպես... Ցածր խոսիր:

ԴԻՄԻՏՐԻ.— Երևում է՝ շատ ես սպասել ինձ, դրանից է...

(Օքսանան չի խոսում): Ես կես ժամ առաջ եկա: Դու հասկանո՞ւմ ես, ամեն ինչ պատրաստ է... Կիրճի կողմը գերաններ էինք կրում... բայց դու ինչոր անհանգիստ ես:

ՕՔՍԱՆԱ.— (Քննչանքով) Շատ ես թափառում... նայում ես մահվան աշքերին...

ԴԻՄԻՏՐԻ.— (Ուրախացած): Օքսանա, սիրելին... Մեզ մահ չկա... (Հարմոնն առնում է ծնկներին): Առո՛ւ պահիր հոգիդ... (Նվազում է հարմոնը և ձայնակցում):

Выходила на берег Катюша,  
На высокий, на берег крутой...

ՕՔՍԱՆԱ.— (Անհանգիստ ցած է բռնում ձեռքը): Դադարեցրո՛ւ, մայորը ծանր է... (Դիմիտրին լոռում է, Օքսանան մոտենում է վարագույրին: Վարագույրի ետև իր տեղում շարժվում է Դիլանյանը: Բարձրացնում է գլուխը):

ԴԻԼԱՆՅԱՆ.— (Անահիտին): Անահիտ... նվազում էին... Ո՞վ էր նվազում... Ինչո՞ւ դադարեցին:

ԱՆԱՀԻՏ.— Դա երևի Դիմիտրին էր, հարմոնիստը... Ցանկանո՞ւմ ես նվազի... Այս լուսեիս: (Մոտենում է վարագույրին: Դիմիտրիին): Շարունակիր, Դիմիտրի, նվազիր... (Վերադառնում է իր տեղը և նստում Դիլանյանի կողքին):

ԴԻՄԻՏՐԻ.— (Զգում է հարմոնը, նվազում է. «Անձրեն եկավ շաղալեն» եղանակը):

**ԴԻԼԱՆՅԱՆ.** — (ՄԵՂՄ): Անձրւն եկավ շաղալեն,  
Ուռու տերև դողալեն...

**ԱՆԱՀԻՏ.** — Ինչպես ես քեզ զգում, Արսեն...

**ԴԻԼԱՆՅԱՆ.** — (Շոյում է Անահիտի զլուխը): Հիմա լա՞վ  
եմ... Շատ շարշարեցի քեզ... ներիր... Երդիր, Անահիտ...

**ԴԻՄԻՏՐԻ.** — (Շարունակում է մեղմ նվագել)...

**ԱՆԱՀԻՏ.** — (ՄԵՂՄ): Հրես եկավ իմ ախալեր,  
Ալ ձին տակին խաղալեն...

**ՕՔՍԱՆԱ.** — (Չեռներն առած ծնկների մեջ, լուր նստած  
լսում է, աշբերից նոսում է արցունքը):

**ԴԻԼԱՆՅԱՆ.** — Ինչ լա՞վ է նվագը... (Երազկոտ): Հիշո՞ւմ  
ես ծիածանը անձրւից հետո, Նորքի այգիների վրա...  
(Լոռում է հանգիստ): Հոգիս խաղաղ է... Ճավ չէ, որ  
այսպես...

**ԱՆԱՀԻՏ.** — Արսեն...

**ԴԻԼԱՆՅԱՆ.** — Սպասիր... Զավակներիս կպատմես, թե ինչ-  
պես հանդիպեցինք և ինչպես բաժանվեցինք այս բար-  
ձունքներում:

**ԱՆԱՀԻՏ.** — Արսեն, այդպես մի՛ խոսիր... Դու ինքդ կպատ-  
մես...

**ԴԻԼԱՆՅԱՆ.** — Կպատմես զավակներիս, թե ինչպե՞ս էինք  
խլում հաղթանակը թշնամուց... Մի վշտացիր...  
(Ներս են գալիս Օռլովը և Սվետլովը: Երկուսն էլ՝  
կազմ ու պատրաստ, զինված: Առաջինը նկատում է Դի-  
միտրին: Դադարեցնելով նվազը, ոտքի է կանգնում):

**ՕՌԼՈՎ.** — Այս ի՞նչ է... (Նկատելով, որ Օքսանան նեկեկում  
է): Օքսանա...

**ՕՔՍԱՆԱ.** — (Ոտքի է կանգնում, բայց լուր է):

**ՕՌԼՈՎ.** — (Անհանգստացած): Բա՞ն է պատահել մայորի  
հետ...

**ՕՔՍԱՆԱ.** — (Մոտենում է Օռլովին: Ցածր, խուլ ձայնով,  
զգացված է, որ ուժ է գործադրում իր վրա): Ես պար-  
տավոր եմ զեզ հայտնել... Մայորն Անահիտ Արդարով-

նային ասաց, որ բեռ չի ուզում դառնալ գումարտակի.  
Համար և... երբ գա այն րոպէն, և քույրն զգա, որ ինքը  
բեռ է, կտա՞ իրեն... (Լոռում է):

ՕՌՈՎ. — (Լարվում է): Ի՞նչ...

ՕՔՍԱՆԱ. — Թույն...

ՕՌՈՎ. — Ինչպե՞ս է վիճակը:

ՕՔՍԱՆԱ. — Ծանր:

ՕՌՈՎ. — Կարելի՞ է հիմա նրան տեսնել...

(Դիլանյանը լսելով Օռլովի ձայնը, զերբնական նիզով  
բարձրանում է արմունկների վրա):

ԴԻԱՆՅԱՆ. — (Վարագույրի ետևից): Օռլով, Վալո՞դյա...

(Անահիտը ոտքի է կանգնում: Արբնանում են վիրա-  
վուները և բարձրացնում զլուխները):

ՕՌՈՎ. — Նա՞ է... (Արագ անցնում է 'Դիլանյանի մոտ):

(Նրա ետևից մտնում է Սվետլովը: Օքսանան նստում է  
խորքում, սեղմում ձեռները ծնկների մեջ ու անշարժա-  
նում: Դիմիտրին մնում է կանգնած):

ՕՌՈՎ. — (Բռնում է Դիլանյանի ձեռքը: Զսպելով հուզմուն-  
ֆը): Արսե՞ն, եղբա՛յրս...

ԴԻԱՆՅԱՆ. — (Խոսում է ծանր) Վալո՞դյա...

ՕՌՈՎ. — Եկել եմ քեզ հրաժեշտ տալու, Արսեն... (Գրկում  
է):

ԴԻԱՆՅԱՆ. — (Ծանր) Մեկնո՞ւմ ես... Ո՞ւր... Որտե՞ղ է  
Ավալյանը...

ՕՌՈՎ. — Քեզանից թաքցնելու ոչինչ չունեմ... (Նայում է  
շորս կողմը: Նկատում է մյուս վիրավորներին, որ  
բարձրացած իրենց են նայում): Մրանցից ևս գնում եմ  
գերմանական տանկերի ճանապարհը փակելու, Ավալ-  
յանն այնտեղ է: Դինամիտ կա, պարտիզաններն ու-  
ղարկեցին, հասկանո՞ւմ ես:

ՄԻ ՎԻՐԱՎՈՐ. — (Հուզված): Ընկե՛ր մայոր, մե՛զ էլ տա-  
րեք, կովելու իրավունք տվեք մեզ... Միայն մեզ տեղ  
հասցնեն... Միայն ավտոմատ տան մեր ձեռքը, կիս-  
փե՞նք գերմանացուն...

ՎԻՐԱՎՈՐՆԵՐ. — Տարե՛ք, ընկեր մայոր, օդակար կւհնենք,  
խնդրում ենք...

ՕՌԼՈՎ. — Շնորհակալ եմ, ընկերներ: Հպարտ եմ ձեզա-  
նով...

ԴԻԼԱՆՅԱՆ. — (Հազիվ է խոսում, ծանր շնչելով): Մեկնո՞ւմ  
ես... Վալողյա... Անահիտ, տուր այն տետրը...

(Անահիտը վերցնում է Դիլանյանի սլանշետը, հանում  
է տետրակը և հաֆճնում՝ Դիլանյանին):

ԴԻԼԱՆՅԱՆ. — Վերցրու, Վալողյա...

ՕՌԼՈՎ. — Սա ի՞նչ է, Արսեն...

ԴԻԼԱՆՅԱՆ. — Իմ անքուն գիշերների պտուղն է... Այդտեղ  
իմ դիտողություններն են, դրանցումները. լեռնային  
մարտերի մասին:

ՕՌԼՈՎ. — (Թերելով տետրակը, կարդում է): «Գումարտա-  
կի մարտական գործողությունները լեռնային պայ-  
մաններում»... (Շարունակում է թերել): «Պաշտպա-  
նությունը՝ լեռներում», «Հարձակումը՝ լեռներում»...

ԴԻԼԱՆՅԱՆ. — Ցավում եմ, որ չկարողացա ավարտել...  
Հանձնում եմ քեզ... Ավարտիր...

ՕՌԼՈՎ. — Մենք քեզ հետ կավարտենք, Արսեն...

ԴԻԼԱՆՅԱՆ. — (Պայծառացած): Ամբողջ հոգով հաջողու-  
թյուն եմ մաղթում: Դիմացիր, կհաղթե՞նք: (Խում է մի  
պահ): Թող նվագի...

ՕՌԼՈՎ. — (Նշան է անում Սվետլովին):

ՍՎԵՏԼՈՎ. — (Մոտենում է վարագույրին: Դիմիտրիին): Նվա-  
գիր, Օստապենկո:

ԴԻՄԻՏՐԻ. — (Նվագում է նույն երգը):

(Մի պահ տիրում է լուրջուն: Միայն հարմոնի մեղմ  
նվագի ելեեցներն են թրոռում):

ԴԻԼԱՆՅԱՆ. — (Փորձում է նստել: Օլովը և Անահիտը օգ-  
նում են: Ոզեռոված): Անահիտ, կնոջս... զավակնե-  
րիս... կհամբուրես... շնորհակալ եմ ձեզնից...

ՕՌԼՈՎ. — Արսեն...

ԴԻԼԱՆՅԱՆ. — Տղայիս... Արտիկիս նամակին՝ չկարողացա

պատասխանել, Կասես, որ համաձայն եմ, թող զինվորակա'ն դառնա... կհաղթե'նք... Հանգիստ եմ: Իմ հըրաժեշտը բոլորիդ... Ինձ շվիճակվեց տեսնել հաղթանակը... օ՛րը... (Գլուխը ընկնում է Անահիտի քեերին՝ Մահ):

**ԱՆԱՀԻՏ.**— (Խեղդվելով): Արսե՞ն... Թանկագի՞նս... (Գլուխը դնում է Դիլանյանի կրծքին և մնում այդպէս անշարժ):

**ԴԻՄԻՏՐԻ.**— (Կտրում է նվազը և ոտքի կանգնում):

**ՕՔՍԱՆԱ.**— (Ներս է վազում, մոտենում Անահիտին: Գրկում է ուսը):

**ՍՎԵՏԼՈՎ.**— (Մոտենում է Անահիտին և Օքսանային):

**ՕՌԻՈՎ.**— (Դանդաղ ոտքի է կանգնում: Սվետլովին, հուզմունքը խեղդելով): Ինչպե՞ս պետք է գրես այս ամենի մասին, Ալեքսանդր...

**ՍՎԵՏԼՈՎ.**— (Հուզված): Եվ կդրե՛մ, Վլադիմիր Սերգեևիշ,  
կդրե՛մ... Արյունովս կդրեմ:

(Օռլովը հանում է գլխարկը և զգաստ ժարանում տեղում: Գլխարաց, անշարժ, գլուխը կրծքին քեֆած կանգնած է Սվետլովը: Վարագույրի ետև արձանացել է Դիմիտրին):

## ՎԱՐԱԴՈՒՅՐ

### ՊԱՏԿԵՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ուշ երեկո: Գեներալ Լիբսի առանձնասենյակը՝ գերմանական լեռնային զորքերի կորպուսի շտաբում: Ընդարձակ սենյակ: Երկու դուռ: Մեկը տանում է կից սենյակը, մյուսը՝ միջանցքը: Մեկ լուսամուտ: Լուսամուտի փեղկը բաց է, բայց վերից վար պատունանք վարագուրված է սև մահուլով: Գրասեղան, բիկնարուներ, բազմոց, դաշնամուր: Աջում կլոր սեղան, վրանց շաման և բարձրադիր բաժակներ: Պատից կախված է

Կովկասյան ռազմանակատի քարտեզը: Աջ անկյունում  
մանիկեն՝ վրան շերֆեզկա, լեռնցու փափախ, սպի-  
տակ բաշլիղ: Լիբոր նստած է դաշնամուրի մոտ, նվա-  
գում է վալս: Ռիխտերը բազմոցին թիկնած ծխում է:

**ԼիԲՍ.** — (Շարունակելով նվազը: Գլխով է անում Ռիխտե-  
րին) Շարունակեցեք, գնդապետ, ես լսում եմ ձեզ:

**Ռիխտեր.** — Ոչնչացնե՛լ. ահա այս նշանաբանով ես մտա-  
բոլշևիկների այս անիծյալ երկիրը: Բայց ինձ անհան-  
դըստացնում է, որ մենք ուշանում ենք, պարոն գեներալ,  
պատերազմը ձգձգվում է:

**ԼիԲՍ.** — (Ընդհատելով նվազը, վեր կենալով տեղից) Հաս-  
կանում եմ ձեզ: Համեցեք այստեղ: (Մոտենում է պա-  
տից կախված Կովկասյան ռազմանակատի քարտեզին,  
ձեռքով ետ տանում ծածկոցը, ձեռքն է առնում ցուցա-  
փայտը): Ահա, նայեցեք քարտեզին:

**Ռիխտեր.** — (Մոտենալով քարտեզին) Լսում եմ, պարոն գե-  
ներալ:

**ԼիԲՍ.** — (Ցուցափայտը շարժելով) Ահա ձեզ Կովկասյան-  
ռազմաճակատը՝ Յեմեսյան ծովախորշից մինչև Կալ-  
միկյան տափաստանները: Մի վլթիսարի տարածությունը:  
Ֆյուրերն այս ռազմաճակատն է նետել գերմանա-ու-  
մինական 30 դիվիզիա: 30 դիվիզիա...

**Ռիխտեր.** — Ճշմարիտ է, պարոն գեներալ:

**ԼիԲՍ.** — Այդպիսի ռազմական մի խոշոր ուժի ի՞նչ պետք է  
հակադրի սովետական ստավկան... Բոլշևիկներին փոր-  
կում է միայն բնական արգելքը: Ահա նայեցեք, մեր  
հատվածում (շարժում է ցուցափայտը) Կուբանյան  
հարթավայրը ընդհատվում է Կովկասյան լեռնաշղթա-  
յով:

**Ռիխտեր.** — Ֆյուրերի գաղտնագրում հրամայված է 15  
օրում վերցնել լեռնանգքները, դուրս գալ Սև ծովի-  
ափը, գրավել Տուափսեն, Սուխումը...

**ԼիԲՍ.** — Կվերցնենք... Ապա մի թվեցեք: (Ինքնազոն) Վերև  
լեռնանցքում կովում են «Վիկինգ» դիվիզիան, աշ՝ ալ-

պիական դիվիզիայի գրենադերները, ձախ՝ դեներալ  
էդելզեյերի բավարական լեռնային հրածիգները և այլն:  
Իմաստուն է Ֆյուրերը: Նա ամեն ինչ հաշվել է: (Աիբ-  
սը, քարտեզից նեռանալով, նորից ընկղմվում է բազկա-  
րոռում): Ֆյուրերը Կովկասյան ճակատ է ուղարկել գե-  
ներալ Ֆլեմիի աֆրիկյան կորպուսը, որը Կովկասն  
առնելուց հետո, կարշավի իրան, իրաք, Հնդկաստան...  
Համաշխարհային մոնարխիա՝: Ինձ դարմացնում է  
բոլշևիկների ֆանատիկ համառությունը: Ինչի՞ վրա են  
նրանք հույս դնում... (Շարունակում է նվազել ուրախ  
վալս):

**ԹԻՒՏԵՐ.**— Այո, ֆանատիկ համառություն: Վերցրեք թե-  
կուղ այդ Օոլովին: Կտրված ամեն տեղից, մեր խոր  
թիկունքում, ուտելիքը վերջանում է, զինամթերքը՝  
նույնպես, չորս կողմից սեղմել ենք քարաժայոխին, քա-  
նի անդամ ոմբակոծեցինք, հետո թուցիկները... էլի  
շնչում է. ոչ միայն շնչում, այլև դործում: (Վառում է  
սիգարը): Նույնը և այդ հայ Դիլանյանի ջոկատը: Իսկ  
հիմա միացել են (Քմծիծաղով): Երեկ միասին մեռնելն  
ավելի հաճելի է: Հա՛... Հա՛...

**ՃԻԲՄ.**— (Զղային) Օոլովին և Դիլանյանին պետք է խեղղել:  
Բավական է: (Ուժեղ ակորդով ավարտում է նվազը):  
Ֆոնբերգի գումղը մեկ ամիս է, ոչինչ չի կարողանում  
անել, խայտառակություն: (Ոտքի կանգնելով): ՄԵԿ  
բատալյոն ևս պետք է նետել Օոլովիի վրա...

**ԹԻՒՏԵՐ.**— Գուցե և գունդ: Միանդամից, մի հարվածով  
վերջ տալ:

**ՃԻԲՄ.**— Օոլովը մեզ շատ է խանդարում և հետո էլ կխան-  
դարի: Ի՞նչ է միտքը: Ինչո՞ւ է նա թառել ժայռերին և  
փորձ չի անում դուրս գալ օղակումից: Համարձակ և  
փորձված օֆիցեր է այդ Օոլովը: Նա ֆոն Կլայստի  
տանկերի մասին կարող է գլխի ընկած լինել...

**ԹԻՒՏԵՐ.**— Դրա համար էլ պետք է խեղղել Օոլովին իր բը-  
նում և որքան կարելի է՝ շուտ:

**ՀԻԲԱ. — Այու:** (Մի բան նիշելով) Պարոն գնդապետ, ձեզ չի  
թվում, որ այն ծերունին, որին բռնել են անտառում  
մեր հետախույզները, շատ բան գիտես:

**ՌԻԽՏԵՐ. — Այու:** Պետք է իմանա, բայց լռում է: Այսօր,  
հավատացած եմ, նա այլ կերպ կխոսի:

**ՀԻԲԱ. — (Նայում է ժամացույցին)** Ժամը իննին նրան պետք  
է բերեն ինձ մոտ: (Մոտենում է կլոր սեղանին, լցնում  
բաժակները): Ռիխտեր, Ֆյուրերը Բաքուն վերցնելը  
պատերազմի ավարտի պարուն է համարում այս մա-  
սում: Հինգ օրից սկսում ենք... հարձակումը. վաղը Ֆոն  
Կլայստից ստանում ենք տանկեր... Տանկային դիվի-  
զիա... Բոլշևիկների ռեռլուցիայի տոնը կշնորհավո-  
րենք... հա՛, հա՛, հա՛... (Բարձրացնում է շամպայնով  
ի բաժակը, խփում Ռիխտերի բաժակին):

(Ներս է մտնում գերմանական մի սպա):

**ԿԱՊԻՏԱՆ. — Պարոն գեներալ,** թույլ տվեք զեկուցել. ըն-  
դունարանում սպասում է լեռնցին: Նա խնդրում է  
շտապ ընդունել իրեն:

**ՀԻԲԱ. — Վաղուց է սպասում:**

**ԿԱՊԻՏԱՆ. — Կլինի հինգ րոպե:**

**ՀԻԲԱ. — Ես ձեզ զգուշացրել եմ, որ նրան սպասեցնել չտալ  
ընդունարանում:** Ներս կանչեցեք:

**ԿԱՊԻՏԱՆ. — Լսո՞ւմ եմ:** (Կապիտանը արագ գնում է):

**ՌԻԽՏԵՐ. — Անակնկալ այցելություն այսպիսի ուշ ժամի՞:**

**ՀԻԲԱ. — Սատանա է այդ լեռնցին, բայց հավատարիմ է  
մեզ:**

(Ներս է մտնում Օժիգովը, գլուխ է տալիս, մնում է  
կանգնած տեղում):

**ՀԻԲԱ. — Ա՛, պարոն Օժիգով:** Խիստ հաճելի է ձեր այցելու-  
թյունը: Մենք ձեզ վաղուց սպասում էինք: Ինչպես է  
Օռլովի գումարտակը: Դեռ քաղցից շե՞ն մեռել:

**ՕԺԻԳՈՎ. — Կմեռնե՞ն,** բոլորը կմեռնեն: Ես ատում եմ նը-  
րանց: Հայրս նույնպես ատում էր:

**ԼիԲԱ.** — (Մոտենում է մանեկենին, պտտեցնելով այն): Զեր  
հայրը խոշոր կալվածատեր...

**ՕԺԻԳՈՎ.** — Նա կալվածատեր էր: Նրան աքսորեցին: Հայրը  
երազում էր Կովկասի լեռնցիների անկախությունը՝  
ձեր հովանավորության տակ: ՀՀ տարի սպասել եմ այդ  
օրվան: Կմեռնե՞ն, բոլորը կմեռնեն:

**ԼիԲԱ.** — Դերմանիան շնորհապարտ է ձեզ:

**ՌԻԽՏԵՐ.** — Դուք ծառայե՞լ բոլշևիկներին...

**ՕԺԻԳՈՎ.** — Այո, ես ծառայել եմ բոլշևիկներին: Եվ վասր  
չեմ ծառայել: Ես խորհտնտեսության գլխավոր անաս-  
նաբույժ եմ եղել: Պատերազմի այս մեկ տարում, չեմ  
թաքցնում, նույնպես ծառայել եմ նրանց և վստահու-  
թյուն շահել: Այժմ այլևս անկարող եմ: Իմ մեկ ամսվա-  
ձեզ ծառայելը կարծեմ ամենալավ ապացույցն է, որ  
այլևս անկարող եմ:

**ԼիԲԱ.** — Հասկանում եմ... Հավատում, պարոն Օժիգովը  
նստեցեք, հանգստացեք:

**ՕԺԻԳՈՎ.** — Շնորհակալ եմ: Շատ կարճ ժամանակով եմ  
եկել: Բոպեներս հաշվված են:

**ԼիԲԱ.** — Զեզ ոչ ոք չնկատե՞ց:

**ՕԺԻԳՈՎ.** — Ես շատ զգույշ եմ:

**ՌԻԽՏԵՐ.** — (Խոսում է կոտրատված): Մութ գիշեր, մութ ձեզ  
օգուտ, պարոն Օժիգով:

**ԼիԲԱ.** — Ինչպես են ձեր գործերը: (Լցնում է գինու գա-  
վարները):

**ՕԺԻԳՈՎ.** — Առայժմ ոչինչ: Կասկածանքները հեռացնում եմ ա-  
Անտառում գիշերը գրողի ծոցն ուղարկեցի մի զինվորի,  
որ իմ թելադրանքով էր գործում:

**ԼիԲԱ.** — Ինչո՞ւ:

**ՕԺԻԳՈՎ.** — Նա վստահելի շէր: Ունեմ մեկ ուրիշ վստահե-  
լին: Թունավորեցի մթերքը, պայթեցրի դինամիտի պա-  
շարը: Դանդաղ գործողության ականով: Կասկածում են  
խրունիչներ վրա, ես ձեզ պատմել եմ նրա մասին: Նա  
կալանքի տակ է առնված:

**ՀԻԲՍ.** — Դուք փորձված եք: (Փող է տալիս Օժիգովին): Ուշիշ  
ի՞նչ նորություն:

**Օժիգով.** — Պարոն գեներալ, Օռլովը պատրաստվում է  
դուրս գալ պաշարումից: Պետք է կանխել:

**ՀԻԲՍ.** — Արդե՞ն: Նա այլևս չի կարող: Ամեն կողմից սեղ-  
մել ենք նրան: Պարոն Օժիգով, Օռլովն այլ օպերա-  
ցիայի չի պատրաստվում:

**Օժիգով.** — Ես տեղեկություն չունեմ:

**ՀԻԲՍ.** — Աշխատեցեք իմանալ... (Փող է տալիս): Կսանանմ  
ձեր տեղեկություններին:

**Օժիգով.** — Կաշխատեմ...

**ՌԻԽՏԵՐ.** — Պարոն-Օժիգով, մի ծերունի բռնել, գուցե դուք  
ճանաչեք...

**Օժիգով.** — (Անհանգիստ) Մերունի՞... Ի՞նչ ծերունի...

**ՀԻԲՍ.** — Գնդապետ, ինչպես էր նրա ազգանունը...

**ՌԻԽՏԵՐ.** — Հերր Օժիգով, նա շուտով այստեղ: Պարզենք...

**ՀԻԲՍ.** — Դուք մեզ կօդնեք:

(Ներս է մտնում կապիտանը):

**ՀԻԲՍ.** — (Դառնալով Օժիգովին) Պարոն Օժիգով, դուք ան-  
ցեք հարևան սենյակը: (Զեռքով ցույց է տալիս ձախ  
դռան կողմը) Լսեցեք ծերունուն, երբ կտամ ձեր ազ-  
գանունը, ներս եկեք:

**Օժիգով.** — Լսում եմ:

(Օժիգով արագ անցնում է կից սենյակը):

**ՀԻԲՍ.** — (Կապիտանին) Ներս բերեք ծերունուն: (Նստում է  
դաշնամուրի մոտ: Նվազում է):

**ԿԱՊԻՏԱՆ.** — Իսկո՞ւն: (Կապիտանը գնում է):

**ՌԻԽՏԵՐ.** — Երարոն գեներալ, շուտ վերջացնենք, եթե նա  
մեզ ոչինչ չասի: Այս անհծյալ երկրում մեծից փոքրը  
այդպիսին են:

**ՀԻԲՍ.** — Ոչ բոլորը: Ահա Օժիգովը... Մի հուզվեք: (Նստում  
է դաշնամուրի մոտ, նվազում է):

**ՌԻԽՏԵՐ.** — (Հուզված նստում է բազմոցին):

(Դոների մոտ երեսում է Սևմյոն պապը: Նա զիխաքաց է:

**Շապկանց:** Շապիկը՝ պատառուած, երեսին՝ սպիներ,  
Զեռմերը՝ ետ կապած: Երեսում է, որ նրան շարշարել  
են: Նա հոնքերի տակից անայլայլ նայում է դիմացը:  
Նրա հետեւում բարանում են զգաստ վիճակում մի սպա  
և մի զինվոր):

**ԻիԲՄ.**— (Կեղծ բաղաժավարությամբ, շարունակելով նվա-  
զը) Պարի երեկո, նստեցեք, (ցույց է տալիս բազկա-  
բոռը):

**ՍԵՄ. ՊԱՊ.**— (Լուս է):

**ԻիԲՄ.**— Զեր հասակում շատ կանոնելն օգտակար չէ... Ես  
տեսնում եմ, որ ձեզ հետ լավ շեն վարվել: Կկարդա-  
դըրեմ, որ վերջ տան: Միայն մի համառեք: Ասացեք,  
ինչ որ գիտեք և ես խոստանում եմ ձեզ աղատ արձա-  
կել: Ապա... (Ուժեղ զարկում է դաշնամուրի ստեղնե-  
րին, դադարեցնելով նվազը, ոտքի է կանգնում):

**ՍԵՄ. ՊԱՊ.**— (Լուս է):

**ԻիԲՄ.**— Գուցե դուք միայն ինձ եք ցանկանում պատմելի  
կիսնդրենք պարոն գնդապետին...

**ՍԵՄ. ՊԱՊ.**— (Խոսում է դանդաղ, ծանր) Ինչո՞ւ համար է  
այս ամենը: Ես արդեն և անցյալ օրը, և երեկ պա-  
տասխանել եմ, որ ոչ մի պարտիզանական ջոկատի և  
ոչ մի Օռլուկի մասին ոշինչ շղիտեմ: Եթե շղիտեմ,  
ինչպես կարող եմ պատմել:

**ԻիԲՄ.**— Շատ գեղեցիկ: Հապա ի՞նչ էիք անում այս անտա-  
ռում:

**ՍԵՄ. ՊԱՊ.**— Ես ասացի, որ մեր գյուղից գնում էի հարե-  
վան գյուղը ուտելիք ճարելու:

**ԻիԲՄ.**— Գեղեցիկ: Ինչո՞ւ ձեզ հետ դտնվող երեխան վիա-  
խել է:

**ՍԵՄ. ՊԱՊ.**— Երեխա է, ո՞վ գիտե: Գերմանացիներից նա  
շատ է վախենում: Նա իմ հարևանի տղան է: Ի՞նչ կապ-  
ունի ինձ հետ:

**ԻիԲՄ.**— Այդպես, Ուրեմն դուք ոշինչ շունեք ասելու...

**ՍԵՄ. ՊԱՊ.**— (Հանգիստ): Ոշինչ շունեմ ասելու,

- ՈՒԽՏԵՐ.— (Զղային): Պարո՞ն գեներալ...
- ԼԻԲԱ. — Սպասեցէք, Ռիխտեր: (Սեմյոն պապին): Դուք դեռ  
 կխոսէ՞ք, անպայման կխոսէք: (Բարձր): Ահա պարոն  
 Օժիգո՞վն ասում է, որ դուք շատ բան գիտեք: Այս, պա-  
 րոն Օժիգո՞վն այդպես էլ ասում է:
- (Դոների մոտ երեսում է Օժիգովը, ձեռքերը ետ ծալած):
- ՕԺԻԳՈՎ. — (կեղծ ժպիտով): Այդ ես եմ, Սեմյոն պապ,  
 դու երևի այսպիսի հանդիպման շէիր սպասում:
- (Տիրում է կարնատե լոուրյուն):
- ՍԵՄ. ՊԱՊ. — (Հանդարտ, զսպելով հուզմունքը): Ես այս  
 մարդուն առաջի՞ն անգամն եմ տեսնում:
- ՕԺԻԳՈՎ. — (Դանդաղ մոտենում է Սեմյոն պապին: Շեշտակի  
 նայելով): Առաջին անգամն ես տեսնում: Ընկա՞ր թա-  
 կարդը, Բոլորդ պետք է ընկնեք:
- ԼԻԲԱ. — Տեսա՞ք, որ ճանաշեցիք: Այժմ պատմեցեք ամեն-  
 ինչ, մենք ձեզ ազատ կարձակենք, հարգելով ձեր տա-  
 րիքը:
- ՕԺԻԳՈՎ. — Պատմի՞ր: Ինչո՞ւ էիր գնացել պարտիզանների  
 մոտ: Օոլովն ի՞նչ էր հանձնարարել քեզ: Պատմի՞ր,  
 կյանքդ փրկելու համար:
- ՍԵՄ. ՊԱՊ. — Ես սրան առաջի՞ն անգամն եմ սեսնում:
- ՕԺԻԳՈՎ. — Ստո՞ւմ ես, պառաված աղվես:
- ՍԵՄ. ՊԱՊ. — (Հանգիստ): Ես այս մարդուն առաջի՞ն ան-  
 գամն եմ տեսնում:
- ՈՒԽՏԵՐ.— (Զղային): Պարո՞ն գեներալ...
- ԼԻԲԱ. — (Չար): Խոսի՞ր, ծերուկ, եթե ապրել ես ուզում:
- ՍԵՄ. ՊԱՊ. — (Զայրազին): Ոշինչ ինձանից շեք լսի:
- ԼԻԲԱ. — (Դանդաղ): Հիմա քեզ կկախենք... (Նայում է ժա-  
 մացույցին): Տալիս եմ 5 րոպե:
- (Դրսից լսվում է կրակոցի ձայն: Փոքր դադարից հետո.  
 և՝ երկու կրակոցի ձայն: Բոլորը լարվում են):
- ԼԻԲԱ. — Ի՞նչ կրակոցներ են: (Սեղմում է կոճակը):
- (Մտնում է կապիտանը):
- ԼԻԲԱ. — Ի՞նչ է պատահել: Պարզե՞լ:

**ԿԱՊԻՏԱՆ.**— Խսո՛ւմ եմ, (Գնում է):

**ԼԻԲՈՒ.**— (Նայելով ժամացույցին): Մնաց շուստ ըռպեհ:

**ՍԵՄ.** ՊԱՊ.— (Հպարտ և զայրագին): Կախի՛ր... Հրեշտակ... Բայց բոլորին կախել շես կարող: Մենք քո՛, սրա՛, (ցույց է տալիս Ռիխտերին): Նրա, (ցույց է տալիս Օժիգովին), բոլորի՛դ գերեզման ենք փորում: Կախի՛ր: Վախ շունե՛մ:

(Ներս է մտնում կապիտանը):

**ԿԱՊԻՏԱՆ.**— Պարոն գեներալ, այդում շրջող պահակները կրակել են մի փոքր տղայի ետևից: (Սեմյոն պապը լարվում է: Հազիվ է զապում հուզմունքը):

**ԼԻԲՈՒ.**— Ո՞վ է եղել, բռնե՞լ են:

**ԿԱՊԻՏԱՆ.**— Տղան ցանկապատից թռել է և անհայտացել դիմացի շենքերի փլատակների մեջ:

**ՕԺԻԳՈՎ.**— Այդ տղան սրա թոռը կլինի, Սաշկո՛ն...

**ՌԻԽՏԵՐ.**— (Սեմյոն պապին): Այն տղան քո թո՞ւ...

**ՍԵՄ.** ՊԱՊ.— Նրանք բոլո՛րն էլ իմ թոռներն են:

**ԼԻԲՈՒ.**— Շուրջկալել, գտնել այդ լակոտին: Ինչպե՞ս է մըտել այդին: Տակն ու վրա անել քաղաքը: Գտե՛ք, գետնի տակից էլ լինի:

**ԿԱՊԻՏԱՆ.**— Խսո՛ւմ եմ, (Գնում է):

**ԼԻԲՈՒ.**— (Նայում է ժամացույցին): 5 ըռպեն անցել է, (Լեյտենանտին): Լեյտենանտ, Հենց հիմա կախել սըրան: Կախել այս պատուհանին նայող ծառից, որ ես առավոտյան տեսնեմ սրան ճոճվելիս: (Վառում է սիգարը):

**ԼԵՅՏԵՆԱՆՏ.**— Խսո՛ւմ եմ: (Մոտենում է Սեմյոն պապին և բաշում դեպի դուռը):

**ՍԵՄ.** ՊԱՊ.— Սպասի՛ր...

**ԼԻԲՈՒ.**— Կա՛ց...

**ՍԵՄ.** ՊԱՊ.— Պարոն գեներալ: Ես քեզ հետ երկրորդ անգամն եմ հանդիպում: Առաջինը շե՞ս հիշում՝ 14 թվական, 28 տարի հետո նորի՛ց ենք հանդիպում իրար... Բայց

Հիմա ուժ ունեմ, զենք ունեմ։ Երկու հարյուր միլիոն է կանգնած իմ թիկունքում։ Ինձ մահ չկա՛, հասկանո՞ւմ ես, մահ չկա՛։ Այս անդամ պատասխանից չես փախ-շի։ Կոշնչացնե՛նք բոլորիդ։ Կմեռնե՛ք իմ որդիների ոտ-քերի տակ։

Օժիգով. — (Հարձակվում է Սեմյոն պասի վրա)։ Կսառ-կացնե՛մ քեզ։

Սել. ՊԱՊ. — Կա՞ց... Մի՛ մոտեցրու կեղտուտ ձեռքերդ։

Հիբ. — (Զեռքը ետ տանելով, դաժան)։ Լսիր, ծերուկ, թե ինչ է սպասում ձերոնց։ (Օժիգովին)։ Պարոն Օժիգով, անմիջապես մեկնեցեք քարանձավ, ներկայացեք Օռլու-վին, ասացեք, որ այս ծերուկը՝ Սեմյոն պապը խաբել է մեզ և գերմանական գումարտակը Քարայծի կածանով է բերում դեպի Օռլովի կայանը՝ քարաժայոերը։ Խորհուրդ տվեք օղակը պատռել աղբյուրի՝ ճանապարհով։ (Պառ-զա)։ Աղբյուրի՝ ճանապարհով... Մնացածը թողեք մեզ, հասկանալի՞ է։

Օժիգով. — Հասկանալի է։ (Լուսմ է)։ Բայց այն տղան, որի ետևից կրակել են, սրա թոռը կլինի։ Այսպիսի սիտուա-ցիայում ինձ համար դժվար է վերադառնալ։

Հիբ. — (Խիստ)։ Պարո՛ն Օժիգով, ետ նահանջել, սազա-կան չէ ձեզ։ Քարայր գնում եք վերջին անգամ։ Վտան-դի տեպքում՝ փախչել։ (Ոտքի է կանգնում)։ Կատարե-ցե՛ք հրամանը։

Օժիգով. — Լսո՛ւմ եմ, պարոն գեներալ։

Հիբ. — Լսեցի՞ր, ծերուկ, թե ի՞նչ է սպասում ձերոնց։ (Ինքնարավական նստում է դաշնամուրի մոտ, նվա-զում է վալսը)։

Ռիկեր. — Կախել պետք է բոլորին՝ մեծից փոքր և կկա-խենք։

Ռիկեր. — (Լեյտենանտին)։ Տանե՛լ... (Լեյտենանտը քա-շում է։ Սեմյոն պապն ազատվելով նրա ձեռքից)։

Սել. ՊԱՊ. — (Գլխով ցույց տալով Օժիգովին)։ Մա՞ է ձեր հույսը... Զեք ազատվի դատաստանից... (Օժիգովին)։

Իսկ քեզ, հուղա, նղովում եմ, լիդիր սրանց ոտքերը՝  
Կմեռնե՛ք իմ որդիների ոտքերի տակ... Հեռու չէ այդ  
օրը... (Դերմանական զինվորներն ուժով դուրս են տա-  
նում):

**ՀԻՄ.**— (Ուժեղացնելով նվազը, համարյա գոռում է): Տա-  
նե՛լ... Կախե՛լ...

### ՎԱՐԱԳՈՒՅՐ

#### ՊԱՏԿԵՐ ՎԵՅԵՐՈՐԴ

Սկսում է լուսանալ: Մեմ-մեկ հանգչում են աստղե-  
րը: Բարձրադիր լեռների ֆոնի վրա, ոչ շատ հեռվում,  
Երեսմ են բարձայները կախված լեռնային խճուղու  
վրա, որ ոլորապտույտ կորչում է անտառապատ լեռ-  
ների մեջ: Դեպի ձախ՝ վիճ: Բեմը դարձավոր անտառում  
մի բարձունք է, որն օղակվում է երկու կողմից՝ ձախից  
և աջից՝ ծառերով, բիուտներով: Դեսի աջ՝ խորժում  
ավելի բարձր բարձունք՝ ծածկված խիտ բիուտով, որը  
համեմատաբար իշխող դիրք ունի տեղանքի վրա: Վա-  
րագույրը բացվելիս, բեմը դատարկ է, անտառը՝ խոր-  
իթրդավոր, լուս: Մեկ-մեկ լսվում է զիշերահավերի  
ընդհատվող վայոցը և գետի հեռավոր խշոցը:

**ԴԻՄԻՏՐԻ.**— (Բեմ է մտնում աջ կողմից: Կանգ է առնում,  
դիտում է շրջապատը, ապա բերե սովում):  
(Երեսմ են Վասիլին, Ֆոման, Եգորը, Արտավազոր և  
Կարոն: Ֆոման, Եգորն ու Կարոն ուսերին՝ արկղների  
մեջ, բերում են դինամիտը: Բոլորը կանգ են առնում,  
խորիթրդավոր շորս կողմն են նայում):

**ԴԻՄԻՏՐԻ.**— Ժայռեր չե՞ք տեսել, ի՞նչ է...

**ԵԳՈՐ.**— (Ծոր տալով): Շունչ առնենք մի քիչ: Ծանր է այս-  
անիծածը:

**ԴԻՄԻՏՐԻ.**— Կարելի է: Սա մեր վերջին կայանն է: Հան-  
գըստանանք մի քիչ: Երկար էր ճանապարհը:

(Արկղները դինամիտով ֆուման և Կարոն զգուշությամբ  
գետին են դնում: Եզորը մի ժիշ անզգույշ է իշեցնում):

ԴԻՄԻՏՐԻ. — (Վրա հասնելով): Կամաց, Եգոր, կարտոֆիլի  
պարկ է, ի՞նչ է... (Օգնում է, իշեցնում են):

ՎԱՍԻԼԻ. — Շունչներս տեղն ընկավ:

ԱՐՏԱՎԱԶՐԻ. — (Նույնպես նստելով) Լուսանում է...

ԵԳՈՐ. — Ռտքերս ոնց որ իմս շինեն: Չեն շարժվում կար-  
ծես:

ԴԻՄԻՏՐԻ. — Ստամոքսդ դատարկ է, կնշանակի ոտներդ  
անշարժ են: Այդպես չէ՝, Եգորուշկա: Միայն մի նեղա-  
նա, հանաքով իմ ասում:

ԵԳՈՐ. — Տղերք, էդ ինչի՞ց է, երբ մարդու միտքը զբաղված  
է լինում, մոռանում է այս անիծվածի մասին (ցույց է  
տալիս ստամոքսը): Ի՞նչ թաքցնեմ ձեղանից, դոտու  
վրա մի նոր ծակ էլ եմ ավելացրել: (Խեր նայում է Դի-  
միտրիին):

ԴԻՄԻՏՐԻ. — (Չեռքի ափերն օղակ կազմելով, նայում է ժա-  
րաժայոերի ուղղությամբ): Հապա նայեք այն քարա-  
ժայոին, որի տակ դինամիտ է դրված, ինչպես է կախվել  
ճանապարհի վրա: Բավական է կարծես ուսով հրես և  
գերմանական տանկերին կասենք՝ կանգ առ, անցնելն  
արդելված է...

ԵԳՈՐ. — (Ծոր տալով) Ինչպես չէ... Այդքան հեշտ է...  
Դու դեռ պայթեցրու, հետո խոսիր:

ԴԻՄԻՏՐԻ. — Եգորուշկա', նորի՞ց...

ՎԱՍԻԼԻ. — Լավ, լավ: Տղաները հիմա այնտեղ սպասում են  
դինամիտի վերջին արկղներին, վիճելու ժամանակ եք  
դտել:

(Անտառի լուսության մեջ լսվում է կկուի ձայնը - «Կո՛ւ-  
կու, կո՛ւ-կու»):

ՎԱՍԻԼԻ. — (Ականջ է դնում): Այս ժամին էլ կկո՞ւ կերպի...

ԿԱՐՈ. — Անքուն կկու է երևոս:

(Եռից լսվում է - «Կո՛ւ-կու», «Կո՛ւ-կու»):

ԴԻՄԻՏՐԻ. — (Ականջ է դնում): Մա առաջին վաշտի հայ

**ԱՄԱՐՉԻՆԱՆ** է: Անիծածը բոլոր թոշունների նման երգում է: Իսկ ես՝ միայն ահա... (Բուի ձայն է հանում: Ականջ է դնում. լսվում է. «Կո՛ւ-կու», «Կո՛ւ-կու»): Կնշանակի աճանապարհը բաց է»: Տղաները մոտենում են: Դե, պատրաստվենք: Շուտով մայոր Օռլովն էլ կդա: (Ոտքի է կանգնում):

**ԴԻՄԻՏՐԻ.** — (Կոանում է արկղի վրա): Դե, վերցրե՛ք... (Հանկարծ ուղղվում է տեղում, փորձված հետախույզի սովորությամբ ձեռքը դնելով ականջին): Սը՛ս... (Բոլորը լոռում են):

**ԴԻՄԻՏՐԻ.** — Ոտնաձայն շե՞ք լսում... Շո՛տ, արկղները, այս կողմ... (Բոլորը մի ակնբարում վերցնում են արկրղները և անհետանում դեպի ձախ: Մի առժամանակ բեմը դատարկ է: Բեմի խորֆից՝ ձախ անկյունից՝ երեսում է Վաշեն, տնտղում է չորս կողմը):

**ՎԱԶԵ.** — (Ձեռքով նշան է անում): Բերեք:

(Դուրս են գալիս ևս երկու զինվոր, որոնք գրկած բերում են Սաշկոյին: Սաշկոն անզգա է, մի ձեռքը անօգնական նոնվում է, մյուսը՝ կապված է կրծքին):

**ՎԱԶԵ.** — (Օգնելով): Վայր դրեք այստեղ... Զգույշ...

**ԴԻՄԻՏՐԻ.** — (Արագ մոտենալով Վաշեին և մյուսներին): Վաշե՛...

**ՎԱԶԵ.** — (Հանկարծակի գալով, շուր է գալիս): Դիմի՛տրի, ընկերներ, մեռնում է տղան... Սաշկոն...

**ՎԱՍԻԼԻ.** — (Կոանալով Սաշկոյի վրա, երեսը մոտեցնում է դեմքին): Դեռ շնչում է, բայց թույլ...

**ԴԻՄԻՏՐԻ.** — (Վաշեին) Ի՞նչ է պատահել Սաշկոյին...

**ՎԱԶԵ.** — Ոչինչ չգիտեմ: Քարածայոից (ձեռքով ցույց է տալիս քարածայոի կողմը), դինամիտը տեղավորելուց հետո իջանք հետախուզության: Բարձրանում ենք կածանով, որ շրջկենտրոնն է տանում և հանկարծ մի թվի մոտ տեսանք ընկած է Սաշկոն երեսի վրա, ուշաթափ, աշ ձեռքն առաջ պարզած: Վիրավոր է ձեռքից: Երևամ է՝ արյուն շատ է կորցրել...

**ԱՐՏԱՎԱԶԴԻ.** — Ազ ձեռքը պարզա՞ծ... սողացել է խեղճ  
տղան...

(Ազ կողմից մտնում են Ավալյանը, մի լեյտենանտ, մի  
խումբ զինվորականներ):

**ԴԻՄԻՏՐԻ.** — Ընկեր կոմիսա'րը... (բոլորը ձգվում են):

**ԱՎԱԼՅԱՆ.** — Ի՞նչ է պատահել: (Նկատելով գետնին պառկած  
Սաշկոյին) Սաշկո՞ն... (Արագ մոտենում է, կոանում):

**ՎԱԶԵՐ.** — Աղբյուրի կածանում դժանք, վիրավոր, անդգա  
վիճակում...

**ԱՎԱԼՅԱՆ.** — (Կտրուկ, ուղղվելով) Հետո կպատմեք... (Նա-  
յում է աջ կողմում կանգնած զինվորականներին):

Արա՞գ, սանմաս հասցրեք:

(Զինվորներն արագ մոտենում են, զգույշ վերցնում են  
Սաշկոյին, բոլորի լուս հայացքի տակ դուրս են տա-  
նում):

**ԱՎԱԼՅԱՆ.** — (Եռանդուն՝ Դիմիտրիին): Ո՞ւր է դինամի-  
տը...

**ԴԻՄԻՏՐԻ.** — Այնտեղ... (Չեռքով ցույց է տալիս), ժայռե-  
րի մեջ...

**ԱՎԱԼՅԱՆ.** — Մնացածը տեղ հասցնել... (Դիմիտրիին)  
Շարժվեցե՞ք:

(Դիմիտրին, Վասիլին, Ֆոման, Եգորը, Արտավազդը և  
Կարոն նեռանում են ձախ, փոքր անց՝ դինամիտի ար-  
կրղներով երեսմ են բեմի խորքում և անհետանում  
բարձունքի ետևը):

**ԱՎԱԼՅԱՆ.** — (Լեյտենանտին): Լեյտենանտ Անդրե'և, հե-  
տախուզում եք անտառը և դիրք բռնում անտառի  
հյուսիսային փեշին, մինչև պայթյունը ոչ մի գերմա-  
նացի շպետք է անցնի:

**ԼԵՅՏԵՆԱՆՏ.** — Խո՛մ եմ, ընկեր կոմիսար: (Չեռքով է  
անում կանգնած զինվորներին և շարժվում դեպի ձախ  
կողմը՝ անտառը: Լեյտենանտը և զինվորները արագ նե-  
ռանում են):

**ԱՎԱԼՅԱՆ.** — (Նստում է: Նայում է ժամացույցին և ապա

շուրջը): Մա կլինի հրամանատարական կետը: (Հանում  
է դաշտային պայուսակից քարտեզը, նայում է: Ապա  
նայում է ժամացույցին): Օռլովը հիմա այստեղ կժա-  
մանի: (Վաշեին): Մեծ առավոտ է բացվում, ա՞, Մա-  
րրոյան, համաձա՞յն ես:

ՎԱԶԵ.— Համաձայն եմ, ընկեր կոմիսար: Բարի առավոտ  
կլինի մեղ համար:

ԱՎԱԼՅԱՆ.— Համողվա՞ծ ես...

ՎԱԶԵ.— Համողված եմ. հայրս ասում էր՝ եթե երկու մարդ  
համաձայն են, գործն արդեն հաջողված է...

ԱՎԱԼՅԱՆ.— Իսկ ովքե՞ր են այդ երկուառ...

ՎԱԶԵ.— Դուք, մեկ էլ՝ ե՛ս, ընկեր կոմիսար...

ԱՎԱԼՅԱՆ.— (Կոանում է քարտեզի վրա): Գերմանացին  
եթե գլխի ընկնի, կարող է մեղ ծուղակի մեջ դցել...

ՎԱԶԵ.— Այստեղ ոչ մի գերմանացի էլ չի կարող երևալ:  
Գերմանացին խուլ անտառ չի սիրում: (Ոգեռուված):  
Ընկեր կոմիսար, գիշում եմ՝ այսպիսի մի գիշեր էր...

ԱՎԱԼՅԱՆ.— Այսպիսի...

ՎԱԶԵ.— Ուղիղ այսպիսի...

ԱՎԱԼՅԱՆ.— Այսպիսի անտառ...

ՎԱԶԵ.— Այսպիսի.... Ո՞չ, ընկեր կապիտան, ի՞նչ եմ  
ասում: Մեր կոուվա անտառներն ուրիշ են... Ավելի  
խորհրդավո՞ր... Եվ ահա, գիշերով՝ ես ու հայրս դուրս  
եկանք որսի... Հայրս ասաց... Այ տղա, Վաշե'...

ԱՎԱԼՅԱՆ.— (Ընդհատելով) Սպասիր... Հետո, հետո կը-  
պատմես...

ՎԱԶԵ.— Է՞ս, ի՞նչ գիշեր էր...

ԱՎԱԼՅԱՆ.— Մարդիկ են գալիս... (Ականջ է դնում):  
(Մտնում են Օռլովը, Սվետլովը, Երկու քիկնապահ  
զինվոր: Թիկնապահ զինվորներից մեկի ձեռքին լապ-  
տեր կա, բայց չի վառվում):

ՕՐԼՈՎ.— (Ավալյանին) Հանդիպեցինք ճիշտ Ժամին: (Վա-  
շեին: Չեռքով ցույց է տալիս դեպի լեռնային խնուղին):  
Նոթերը կիտած սպասո՞ւմ է քարաժայոր: (Նայում է

ժամացույցին) Առտենում է ժամանակը... (Զինվորներին) Բարձրացեք, ահա այնտեղ (ձեռքով ցույց է տալիս քեմի աջ անկյունը՝ բարձունք), թիււտներից հըսկեցեք: Լապտերը կվառեք ի՞մ ազդանշանով:

(Զինվորները վազքով հեռանում են դեպի բարձունք):

**ՕՌԵՂՎ.**— (Ավալյանին) Ավալյա՛ն, մեկնիր: Կսպասենք ազդանշանին: Պայթյունը ղեկավարում ես ինքդ: Զգույշեղիր: Պայթյունից հետո կսպասեմ քեզ:

**ԱՎԱԼՅԱՆ.**— Ամեն ինչ հասկանալի է:

**ՕՌԵՂՎ.**— Դև, զնաս բարով: (Պարզում է ձեռքը):

**ԱՎԱԼՅԱՆ.**— Բարի մնաք (սեղմում է ձեռք):

**ՕՌԵՂՎ.**— Սարոյա՛ն, ուղեկցիր կոմիսարին:

**ՍԱՐՈՅԱՆ.**— Խոր եմ:

(Ավալյանը և Վաշին արագ հեռանում են):

**ՕՌԵՂՎ.**— (Սվետլովին, որ դեռ ծխում է): Այսօր քշախում ես դարձել: Հասկանում եմ: Հուզվում ես:

**ԱՎԵՏՂՈՎ.**— Ոսկի տղաներ ունես, Վլադիմիր Սերգեևիչ՝ Սրանց հետ սարերն էլ շուր կտաս, ուր մնաց մի քարածայու: Կիսաքաղց, հոգնած, մահվան երախում, քայց պողպատի պես ամուր են... Եվ չդիտեմ, թե ո՞ւմ առաջնություն տամ:

**ՕՌԵՂՎ.**— Սպասիր մի պայթեցնենք քարածայու, փակենք տանկերի ճանապարհը... Արյուն է կաթում սրտիցս, երբ նայում եմ սրանց գունատ, նիհարած դեմքերին: Ժամանակն է: (Նայում է ժամացույցին) Ինչ-որ ձայն շկա այնտեղից...

**ԱՎԵՏՂՈՎ.**— Ես հիշում եմ մի այսպիսի դեպք և միշտ խորհրդածում դրա մասին: (Մի պահ լուսիմ է) 42 թ. առաջին օրերն էին: Բանակի թերթից գնացել էի Կերչի թերակղզին, դիվիզիաներից մեկը... Գիշերը նստած ենք բլինդաժում: Բլինդաժում գեներալն է՝ դիվիզիայի հրամանատարը, մի քանի շտաբային սպաներ: Ոչ ոք չի քնում, գերմանացին կատաղել էր այդ օրը: Լուրջ էր դրությունը: Իսկ դրսում՝ ցուրտ, սառնամանիք, ծովից

փշում էր սառը քամին: «Դիմում եմ դեներալին՝ «Ասացեք, ընկեր դեներալ, ո՞ւմ մասին կարելի է գրել թերթում, ո՞վքեր են վերջին մարտերի հերոսները»: Գեներալը դիմում է ինձ. «Գերմանացին կրա՞կ է թափոամեր դիրքերի վրա: Այո՛: Դրսում սառնամանի՞ք է՞ Այո՛: Զինվորները դիմանո՞ւմ են թշնամու գերակշռող ուժերին: Եվ ինչպես են դիմանում: Ուրեմն գնացեք խրամատները և պատահած առաջին զինվորի մասին գրեցեք...»:

**ՕՌԼՈՎ.**— Իմաստուն խոսք է ասել դեներալը: (Նայում է ժամացույցին, ոտքի է կանգնում) Ժամանա՞կն է...  
(Արագ ներս է գալիս Ֆիմիտրին: Հեվում է: Վազել է):

**ԴԻՄԻՏՐԻ.**— Ընկե՛ր մայոր, ամեն ինչ պատրաստ է... Դինամիտի վերջին արկղները տեղավորված են քարաժայուի փորվածքում: Միացված է լարը... Սպասում են Զեր ազդանշանին: Հետախույզները տեղեկություն են բերել... Գերմանական տանկերը մոտենում են... Շատ են, ընկեր մայոր...

**ՕՌԼՈՎ.**— (Հանդարտ) Լավ: Նստիր հանդստացիր: Վազել ես: (Սվետլովին) Սվետլով, արագ բարձրացիր մարտիկների մոտ, թող վառեն լապտերը, միայն դեռ թող թփերի մեջ պահեն: Սպասեն իմ ազդանշանին: Երբ կվառվի ձեռքիս լապտերը, բարձրացնեն իրենցը:

**ՍՎԵՏԼՈՎ.**— Լսո՛ւմ եմ, ընկեր մայոր: (Վազում է դեպի բարձունքը):

**ՕՌԼՈՎ.**— Սկսո՞ւմ ենք...

(Լսվում է տանկերի հեռավոր դդիրդը: Բարձունքից ներքե է վազում Սվետլովը):

**ՍՎԵՏԼՈՎ.**— Ամեն ինչ պատրաստ է, ընկեր մայոր:

**ԴԻՄԻՏՐԻ.**— Տանկե՛րը...

**ՕՌԼՈՎ.**— (Բարձր): Հանուն հայրենիքի՛... (Բարձրցնում է ձեռքը, վառում է ձեռքի լապտերը):

(Բարձունքում, կիսախավարում երեսում է լույսը, ոչ

Երեք անգամ բարձրանում և իջնում է: Սվետլովը մո-  
տենում է և բռնում Օոլովի թեր: Բոլորի հայացքը բա-  
րձայնի կողմն է: Տիրում է խոր լոռիրյո:ն: Սպասո-  
ղական վիճակ: Միայն մոտեցող տանկերի ձայնն է.  
լսվում: Հանկարծ ուժեղ պայրյունը և դղիրդը բռնում են  
ամբողջ տարածո:քյունը: Դրան հաջորդում է փլուզու-  
մի դղիրդը: Դադարում է տանկերի ձայնը, ապա տի-  
րում է խորհրդավոր լոռիրյուն):

ՕՌԼՈՎ. — (Հեռադիտակն իջեցնելով) Կատարվե՞ց... պայ-  
թե՞ց...

ՍՎԵՏԼՈՎ. — (Գրկում է Օռլովին) Գեղմանական տանկերի  
ճանապարհը փա՛կ է:

*ՕՌԼՈՎ.— (Լարված) Փա՞կ է, արդյոք, այդ մասին կհայտնի Ալալյանը:*

**ՍՎԵՏԼՈՎ.** — Հանդստացա՞ք, վլադիմիր Սերգեևիչ:

ՕՌԼՈՎ.— Դեռ ոչ, Ալեքսանդր, սպասենք Ավալյանին: (Թիմիտրիին) Չի՞ երևում Ավալյանը:

Դիլլիմինիք. — Դեռ ոչ, ընկեր մայոր...

ՕՌԼՈՎ.—Տանկերի ձայնը շարունակվում է, միթե շիփակված ճանապարհը...

ՍՎԵՏԻՈՎ. — Ռւբախանալ է Հարկավոր, Վլադիմիր Մեր-  
գեևիչ:

*ՕՌԼՈՎ. — Սպասիր... Ուշանում է Ավալյանը: (Դրսիտրին) Չի՞ երևոմ...*

ԴԻՄԻՏՐԻ. — Գալի՞ս են... Բայց ընկեր կոմիսարին բերուա  
են... վիրավոր է երևի...

ՕՌՈՎ. — Վիրավո՞ր է...  
Երկու զինվորի քեվերին նենված' ներս ... է զալիս.  
Եղանակ՝ Կաշեն, Ավալանք գլխաբաց է,

Ավալյանը, Ետևից կաշեաւ կատար կատար կատար  
փոշերաբախ: Նույնը՝ կաշեն): Կատարվեց,  
գողի բարի վրա կանգնելով): Կատարվեց,

Խողզուա և մի կոնդի):  
Օրվով նստեցնում են մի կոնդի):

**ՕՌԼՈՎ.** — Կատարվե՞ց... ի՞նչ է պատահել քեզ...

**ԱՎԱԼՅԱՆ.** — (Ծփելով նակատը) Մի անհանգստացեք:  
Պայթյունի ալիքից... (Բարձր): Այժմ պետք է սավառ-  
նե՞ն արծիւները...

**ՕՌԼՈՎ.** — Այու:

**ԱՎԱԼՅԱՆ.** — Մի բոռնցք կաղմած, ճեղքո՞մ ենք պաշար-  
ման օղակը:

**ՕՌԼՈՎ.** — (Կոանալով բարտեզի վրա: Վաշեն կողմից լու-  
սավորում է տեղը) Ճեղքում ենք շղթան դեպի ֆրոնտի  
դիմում: (Վաշեին) Վաշե', հայրդ այս դեպքում ի՞նչ կա-  
սեր:

**ՎԱԶԵՐ.** — (Պատվի առնելով) Հայրս... հայրս էս տեսակ բան  
տեսե՞լ է, որ բան ասի: Ամեն ինչ ասված է...

### ՎԱՐԱԴՈՒՅՐ

#### ԳՈՐԾՈՂԱՔՅՈՒԹՅՈՒՆ ՉԱՐՉՈՐԴ

#### ՊԱՏԿԵՐ ՅՈԹԵՐՈՐԴ

Գումարտակի վիրակապորյան մասը: Մեծ բարախո-  
ռոշ: Պատերը՝ պատած մառլայով: Ուշ երեկո: Զախ  
անկյունում, առջևի պլանում, փայտե քախտի վրա,  
մեջի վրա անշարժ, աշխերը փակ, պառկած է Սաշկոն:   
Զախ անկյունում վառվում է նամփորդական լամպը, որը  
բույլ լույս է սփռում Յաշկոյի վրա: Թախտի մոտ նըս-  
տած է Անահիտը: Ոտքի վրա, անհանգիստ, հայացքը  
Սաշկոյին, կանգնած է Օքսանան:

**ՋՔՍԱՆԱ.** — (Տագնապալից) Ինչպես է հիմա նա... Կարծեք  
այելի լավ է, ոյնպես չէ...»

**ԱՆԱՀԻՏ.** — (Իջեցնելով Սաշկոյի ձեռքը) Ջարկերակը շատ  
թույլ է աշխատում: Արյուն շատ է կորցրել:

**ՋՔՍԱՆԱ.** — Կապրի... այո՞... ախ, խոսեր, մի բառ ար-  
տասաներ...

ԱՆԱՀԻՏ. -- (Վեր կենալով տեղից, բռնում է Օհսանայի քեզ):  
Կարծես քնեց:

ՕՔՍԱՆԱ. -- Եվ ի՞նչ կարող է պատահած լինել:

ԱՆԱՀԻՏ. -- Անլուծելի հանգուց: Եթե վաշեն և զինվորները մի փոքր ուշանացին, նա չեր ապրի: Սրսկումները հաղիւլ են պահպանում սրտի դործողությունը:

ՕՔՍԱՆԱ. -- Սեմյոն պապը եթե խմանա...

ԱՆԱՀԻՏ. -- Սեմյոն պապը... Քանի օր է նա չի երևոս...  
Ուր է, մեղ անհայտ է:

ՕՔՍԱՆԱ. -- Ի՞նչ առեղծված է սա, Անահիտ Աբգարովնա:  
Սիրոս լի է կասկածներով: Ի՞նչ պետք է լինի մեր  
գումարտակի վիճակը, ել շարժվելու տեղ շունենք—  
ետև անդունդ է: Իսկ գերմանացին մոտենում է:

ԱՆԱՀԻՏ. -- Օքսանա, դու գիտե՞ս, որ մենք պատրաստվում  
ենք դուրս գալ օղակումից:

ՕՔՍԱՆԱ. -- Իսկ ե՞րբ...

ԱՆԱՀԻՏ. -- Գուցե այսօր, գուցե վաղը... Բայց որ այլես  
այստեղ չի կարելի մնալ, դա ակներև է: Փակեցինք  
տանկերի ճանապարհը: Քանի գերմանական տանկ մը-  
նաց փլվածքի տակ: Փրփրել է գերմանացին:

ՕՔՍԱՆԱ. -- Նոսրանում է մեր ջոկատը: Վերջին օպերացիա-  
յում՝ տասներեք սպանված, 5 ծանր վիրավոր, 14 թեթև  
վիրավոր, այդ թվում՝ կապիտան Սվետլովը:

ԱՆԱՀԻՏ. -- Ինչ գնով էլ ուզում է լինի, պետք է դուրս գալ  
օղակումից:

ՕՔՍԱՆԱ. -- Սննդամթերքների վերջին փշրանքներն են մը-  
նացել: Դեղորայքը համարյա վերջացել է: Անահիտ  
Աբգարովնա, իսկ ի՞նչ պետք է լինի ծանր վիրավորնե-  
րի վիճակը: Նրանք շարժվել չեն կարող:

ԱՆԱՀԻՏ. -- Վիրավորներին պարտիզաններն իրենց մոտ են  
տեղափոխելու: Ես կմնամ նրանց հետ:

ՕՔՍԱՆԱ. -- Իսկ ե՞ս:

ԱՆԱՀԻՏ. -- Այդ կորոշենք:

ՕՔՍԱՆԱ. -- Որտեղ դուք, այնտեղ էլ ե'ս: Ես շեմ կարող

թողնել վիրավորներին և հեռանալ: Խոռո՞մ եք, Անահիտ  
Արգարովնա, մայորին այդպես էլ ասացեք:

ԱՆԱՀԻՏ. — (Կտրով, վեր կենալով) Օքսանա, անցիր վիրա-  
վորների մոտ, ստուդիո նրանց վիճակը և վերադար-  
ձիր:

ՕՔՍԱՆԱ. — Խոռո՞մ եմ: (Օքսանան գնում է):

ԱՆԱՀԻՏ. — (Դանդաղ մոտենում է, Սաշկոյին և նստում է  
նրա մոտ):

(Բեմում առժամանակ ծանր լոռուրյուն է: Ներս  
է մտնում Օժիզովը: Նկատում է պառկած Սաշկոյին: Ետ-  
է ընկրկում):

ԱՆԱՀԻՏ. — (Ինքնաբերաբար շրջվում է և նկատում է Օժի-  
զովին: Ոտքի է կանգնում) Բարե ձեզ, ընկեր Օժիզով:

ՕԺԻԶՈՎ. — (Անհանգիստ) Բարե ձեզ: Ի՞նչ է պատահել  
Սաշկոյին:

ԱՆԱՀԻՏ. — Վիրավոր է: Նրան գտել են մեր հետախույզնե-  
րը ուշագնաց: (Մոտենալով Օժիզովին) Մայորն ար-  
գելել է մոտենալ Սաշկոյին:

ՕԺԻԶՈՎ. — Նա ուշքի շի եկել: Ինչպես է վիճակը:

ԱՆԱՀԻՏ. — Ուշքի շի եկել:

ՕԺԻԶՈՎ. — Ես հիմա պարտիզանների մոտ պետք է մեկնեմ:  
Թույլ տվեք, մի վայրկյան մոտիկից նայել նրան:

ԱՆԱՀԻՏ. — Բայց մայորը կարող է դալ, անհարմար է:

ՕԺԻԶՈՎ. — Ասում եք, ոչինչ շի՝ պատմել... (Մոտենում է  
Սաշկոյին):

ԱՆԱՀԻՏ. — Գոնե մի խոսք արտասաներ...

ՕԺԻԶՈՎ. — (Նստելով Սաշկոյի մոտ, ձեռքը դնելով Սաշկ-  
յի նակատին) Մասն է ճակատը...

ԱՆԱՀԻՏ. — Զգույշ, թողեք հանգիստ մնա երեխան:

ՕԺԻԶՈՎ. — (Անհանգիստ) Գլուխս պայթում է... (Բռնում է  
գլուխը):

ԱՆԱՀԻՏ. — Դուք ձեզ վա՞տ եք զգում:

ՕԺԻԶՈՎ. — Կարելի՞ն է մի բաժակ ջուր...

ԱՆԱՀԻՏ. — Այս բոպեիս: (Հեռանում է Օժիզովից և Սաշկո-

յից դեպի սեղանը: Օժիգովիր գողունի նայում է Անտ-  
հիտի ետևից, հայացքը ճշանից շնեռացնելով, ձեռքը  
պարզում է դեպի Սաշկոյի կոկորդը, բայց Անտիտը  
շրջվում է ջրամանը ձեռին: Օժիգովիր ձեռն արագ եւ  
է ժաշում):

ԱՆԱՀԻՏ.— (Զնկատելով այդ, մոտենում է) ԽՄԵՍԵՔ:

ՕԺԻԳՈՎ.— (Ագամաքար խմում է ջուրը):

ԱՆԱՀԻՏ.— (Օգնում է Օժիգովին ոտքի կանգնելու: Երկու-  
սով առաջանում են): Դուք հուզված եք երևում, բայց  
է պատահել:

ՕԺԻԳՈՎ.— Հոգնել եմ, ուրիշ ոչինչ: Հետո անակնկալ էր ինձ  
համար Սաշկոյի հետ պատահածը: Բայց ի՞նչ կարող  
է լինել:

ԱՆԱՀԻՏ.— Չգիտեմ: Դեպքերն այնքան անակնկալ են:

ՕԺԻԳՈՎ.— (Լուս է):

ԱՆԱՀԻՏ.— Մի քանի օր է Մեմյոն պապը շկա: Դուք նրանից  
լուր չունե՞ք:

ՕԺԻԳՈՎ.— Ոչ, կորցրել եմ հետքը: Ինչո՞վ է մեղավոր այս  
երեխան: Է՞ս, հաջողությունը առայժմ խույս է տալիս  
մեղանից:

ԱՆԱՀԻՏ.— Հակառակ թշնամուն, դավաճանին, նա մե՛րը  
կլինի: Գունատ եք:

ՕԺԻԳՈՎ.— Շատ եմ թափառել, հոգնել եմ խիստ:

ԱՆԱՀԻՏ.— Գնացեք, հանգստացեք: Միայն քարայրից շատ  
չէնուանաք: Դադարեցված է ամեն տեսակի շարժում: Մա-  
յուր Օռլովի կարգադրությունն է:

ՕԺԻԳՈՎ.— (Լարվելով): Ճիշտ է վարվում ընկեր Օռլովը:  
Չգուշությունը մեծ գործերի նախօրյակին անհրաժեշտ  
է: Այդպես չէ...»

ԱՆԱՀԻՏ.— Կոահում եք դուք:

ՕԺԻԳՈՎ.— (Լարվելով) Վաղուց էի ասում այդ մասին: Վեր-  
ջապես: Ե՛վ շուտ պետք է մեկնի ջոկատը...

ԱՆԱՀԻՏ.— Այդ ինձ հայտնի չէ:

ՕԺԻԳՈՎ.— Դե, ես գնացի: Գուցե իմ կարիքն զգան: (Նա-

յում է Սաշկոյի կողմը) և ավ նայեցեք տղային: Յան-  
սություն ձեզ:

(Օժիգովն արագ գնում է):

ԱՆԱՀԻՏ. — (Մոտենում է, նստում կոնդին: Նորից ծանր  
լուրջուն):

ՍԱՇԿՈ. — (Թույլ, նվազուն ձայնով) Զո՞ւր...

ԱՆԱՀԻՏ. — (Արագ շարժվում է, հուզմունքը և ուրախությու-  
նը միախառնված) Խոսում է... (Արագ մոտենում է նը-  
րան) Սաշկո՛, տղա՛ս...

ՍԱՇԿՈ. — (Թույլ, նվազուն ձայնով) Զո՞ւր...

ԱՆԱՀԻՏ. — Հիմա, այս բուկեիս... (Արագ մոտենում է սե-  
ղանին, վերցնում է ջրամանը, մոտենում է Սաշկոյին:  
Չեռքն անց է կացնում զիխատակովը, զգույշ բարձրաց-  
նում է նրան) Ահա քեզ զուր, խմիր, սիրելիս:

ՍԱՇԿՈ. — (Խմում է) Այս որտեղ եմ... (Խոսում է կցկոտուր)  
Ո՞վ կա... Սեմյոն պա՛պը...

ԱՆԱՀԻՏ. — (Ուրախացած) Ես եմ, Սաշկո՛, զավակս...  
Հանգստացիր: Սեմյոն պապը, ի՞նչ... (Բարձրացնում  
է զլուխը):

ՍԱՇԿՈ. — (Թույլ) Պա՛պը... պապի՛կս...

ԱՆԱՀԻՏ. — (Շոյելով Սաշկոյի զլուխը) Հանգստացիր, նա-  
շուտով կդա:

ՍԱՇԿՈ. — (Թույլ, կցկոտուր) Նա մեռա՛վ..., Կախեցի՛ն...

ԱՆԱՀԻՏ. — (Հուզված) Ի՞նչ ես ասում, Սաշկո, Հետո՞ւ  
Հետո՞ւ... Դու որտեղի՞ց գիտես...  
(Ներս է գալիս Օքսանան):

ՕՔՍԱՆԱ. — Ուշքի եկա՞վ... Խոսո՞ւմ է...

ԱՆԱՀԻՏ. — Սաշկո՛, տղաս, խոսի՛ր...

ՍԱՇԿՈ. — (Բոլորվին բույլ) ... Ես... ևս... փախա... (Խեղդ-  
վելով): Նա... նա... Օ-ժի-դո՞ւր... (Գլուխը բուլացած  
ետ է ընկնում Անահիտի քերին):

ԱՆԱՀԻՏ. — (Խիստ հուզված): Օժիգովն այստեղ էր, Սաշ-  
կո... ի՞նչ... Օժիգովն ի՞նչ... (Սաշկոյի զլուխը դնում  
է բարձին):

**ԱՆԱՀԻՏ.**— (Օքանային): Առա՛ղ... Շպրի՛ցը... կա՛մֆոռտ...

### ՎԱՐԱԳՈՒՅՐ

#### ՊԱՏԿԵՐ ՈՒԹԵՐՈՐԴ

Երկրող գործողության իրադրությունը: Ամեն ինչ հավատված, պատրաստ: Զգացվում է, որ նանապարհի վրա են: Ուշ երեկո: Վարագույրը բացվելիս՝ Օռլովը լուս թեժված է սեղանին փուլած քարտեզի վրա, իսկ Դիմիտրին, նստած կոճողին, մաքրում է Օռլովի նազանը և ինչ որ երգ է մրմռում քրի տակ:

**ԴԻՄԻՏՐԻ.**— (Դադարեցնում է մաքրելը և աչքի տակով զննում է Օռլովին): Կատաղությունից հիմա տասը կաշշի փոխած կլինի դերմանական գեներալը:

**ՕՌԼՈՎ.**— (Մատիտը շարժում է քարտեզի վրա, մտազբաղ է):

**ԴԻՄԻՏՐԻ.**— (Ինքն իր հետ): Զարմանում ես ուղղակի... Հավատդ չի դալիս...

**ՕՌԼՈՎ.**— (Գլուխը շքարձրացնելով քարտեզից): Ինձ հե՞տ ես, Օստապենկո:

**ԴԻՄԻՏՐԻ.**— (Կարծես սրափվելով): Ոչ, ընկեր մայոր... Ի՞նձ հետ եմ: (Շարունակում է մաքրել: Նորից ինչն իրեն): Ինչե՞ր շտեսավ մեր դումարտակը... Զարմանալի բան... Չէ՛, մենք անմա՛հ ենք...

**ՕՌԼՈՎ.**— (Զկուրվելով քարտեզից: Ցրված): Ամենահարմարը սա՛ է: Ինձ հե՞տ ես, Օստապենկո:

**ԴԻՄԻՏՐԻ.**— Ընկեր մայոր, Վաշեի հայրը մեր գումարտակի կապակցությամբ անպայման մի բան կասեր:

**ՕՌԼՈՎ.**— (Նույն դիրքում, միայն հետաքրքրված քարձրացնում է գլուխը): Ի՞նչ կասեր...

**ԴԻՄԻՏՐԻ.**— Կասեր՝ փոքր կացի՞նն էլ մեծ ծառ կարող է

կտրել... (Ավարտում է նազանի մաքրելը, կանգնում է):

ՕՌՈՎ.— (Շտկվելով, մատիոր դնում է բարտեզին):

Պա՛րզ է:

ԴԻՄԻՏՐԻ.— Ընկեր մայոր, կարելի՞ է իմանալ, թե ի՞նչն է պարզ: Համեցեք, նագանը մաքրված է:

ՕՌՈՎ.— (Մոտենալով վերցնում է նազանը և դնում պատյանի մեջ): Պարզ է, որ պետք է շարժվենք:

ԴԻՄԻՏՐԻ.— Իսկ ինձ համար դեռ պարզ չէ, ընկեր մայոր:

ՕՌՈՎ.— (Զեռքը դնելով Դիմիտրիի ուսին): Հասկանում եմ քեզ:

ԴԻՄԻՏՐԻ.— Ինչո՞ւ եք ինձ թողնում այստեղ, ընկեր մայոր: Ես հիվանդապահ եմ, ի՞նչ է: Ես կովե՛լ եմ ուղում...

ՕՌՈՎ.— Քեզ վրա մեծ պառտականություն է դրվում, Օստապենկո՝ հսկել հիվանդներին և ծանր վիրավորներին, մինչև օգնություն կհասնի... Կմնաս պարտիզանների հետ... Կնվագես հարմոնդ, կուրախացնես սրտերը:

ԴԻՄԻՏՐԻ.— (Գլուխը կախ, լուր է:)

ՕՌՈՎ.— (Ժպտալով, բնիշորեն): Օստապենկո, անկեղծ ասա, լա՞վ աղջիկ է Օքսանան...

ԴԻՄԻՏՐԻ.— (Ոգեռված) Անկեղծորե՞ն... Ամեն մարդու համար լավը նա է, ում սիրու սիրեց...

ՕՌՈՎ.— Իսկ դու ճերմակ շուշան շե՞ս պահում քեզ մոտ, կապիտան Սվետլովի պես...

(Արագ ներս է մտնում Ավալյանը):

ԱՎԱԼՅԱՆ.— Ընկեր մայոր, զորամասը պատրաստ է հրթի: Պահակային ծառայության պետին կարգադրված է ոչ ոքի քարանձավներից նշված սահմանագծից իջնել շթույլատրել:

ԴԻՄԻՏՐԻ.— Ընկեր մայոր, ես կարո՞ղ եմ գնալ:

ՕՌՈՎ.— Գնացեք:

(Դիմիտրին դուրս է գնում):

ԱՎԱԼՅԱՆ.— Ուրեմն շարժվում ենք կես ժամից: Շտարից ոչ մի լուր չունենք: Աբաշիձեն ուշացավ:

ՕՌՈՎ.— Ճիշտ է:

**ԱՎԱԼՅԱՆ.** — Թոլոր զենքի ընդունակ մարդիկ իշնում են քարանձավից։ Կաշխատենք անցնել աննկատ։ Պարտիգանները կշեղեն թշնամու ուշադրությունը։ Եթե նկատեցին մեզ, ուժեղ բռունքով պատուամ ենք շղթան։ Վիրավորներին պարտիզանները տեղավորուամ են իրենց մոտ։ Նրանց մոտ մնում են բժշկուհի Անահիտ Դիլանյանը, սերժանտ Դիմիտրի Օստապենկոն։ Նրանց հետ կմնա մի ջոկ։ Համաձայն եք։

**ՕՌԼՈՎ.** — Համաձայն եմ։ Կարող ենք օգտագործել Քարայծի կամ Աղբյուրի ճանապարհը։

**ԱՎԱԼՅԱՆ.** — (Լուս Է)։ Վերջինին ես համաձայն շեմ։

**ՕՌԼՈՎ.** — Ինչո՞ւ Աղբյուրի ճանապարհը հետախուզել է Օժիգովը։

**ԱՎԱԼՅԱՆ.** — Հենց դրա համար էլ վտանգավոր եմ համարում։

**ՕՌԼՈՎ.** — (Մոտենալով ելքին)։ Ո՞վ կա այդտեղ։

**ՎԱԶԵ.** — (Ներս է մնալում Վաշեն՝ գլուխը վիրակապում)։ Լսում եմ, ընկեր մայոր։

**ՕՌԼՈՎ.** — Կանչիր այստեղ Օժիգովին։

**ՎԱԶԵ.** — Նա ձեզ է սպասում։

**ՕՌԼՈՎ.** — Ներս կանչիր։

**ՎԱԶԵ.** — Իսկո՞ւյն։ (Գնում Է)։

**ՕՌԼՈՎ.** — (Ավալյանին)։ Քեզ անհանգստացնուամ են վերջին դեպքերը։ Հասկանում եմ։

**ԱՎԱԼՅԱՆ.** — Ինձ մտատանջուամ է և Սեմյոն պապը, և Սաշկոյի առեղծվածային պատմությունը, և Օժիգովի դիրքը Չի խանգարի այդ մասին գրել պարտիզաններին։

**ՕՌԼՈՎ.** — Դա կօգնի դործին։

**ՕԺԻԳՈՎ.** — (Ներս գալով, գլուխ է տալիս)։ Ողջույն, ընկեր մայոր, ողջույն, ընկեր կապիտան։

**ՕՌԼՈՎ.** — Ողջույն։ Պարտիզանները դեռ չեն ժամանել։

**ՕԺԻԳՈՎ.** — Դեռ ոչ, սպասում եմ։

**ՕՌԼՈՎ.** — (Նստելով)։ Նստիր, Օժիգով։ (Օժիգովը նստում

- է): Ինձ և կոմիսարին հետաքրքրում է մի հարց: Զորա-  
մասը պետք է շարժվի, դու այդ գիտե՞ս:
- ՕԺԻԳՈՎ.** — Այո, ընկեր մայոր:
- ՕՌԼՈՎ.** — Այժմ ասա, պնդո՞ւմ ես քո ստուգած ճանապար-  
հի վրա:
- ՕԺԻԳՈՎ.** — Այո, ընկեր մայոր: Աղբյուրի ճանապարհով, ես  
արդեն ասել եմ, որ կարելի է իջնել: Ինչպես ինձ  
հայտնի դարձավ, Սեմյոն պապը գերմանացիներին  
համոզել է հետապնդել ձեր դումարտակը քարայծի  
կածանով: Գերմանացիները իրենց ուժերը կկենտրո-  
նացնեն այդ վայրում, և աղբույրի ճանապարհը համե-  
մատաբար անվտանգ կլինի:
- ԱՎԱԼՅԱՆ.** — Բայց դուք չեք գտնում, ընկեր Օժիկով, որ  
այդ ճանապարհը հեռացնում է մեզ նպատակակետից  
ֆրոնտի գծից:
- ՕԺԻԳՈՎ.** — Երկար ճանապարհը ձեզ չպետք է անհանգըս-  
տացնի, ընկեր կոմիսար: Խեռնցիներն ասում են՝ հեռա-  
վոր ճանապարհ ընտրիր, որ անփորձանք տուն հասնես:
- ԱՎԱԼՅԱՆ.** — Բայց ասված է նաև՝ նա' հեռում կգնա, ով չէ  
թեքի ճանապարհը:
- ՕԺԻԳՈՎ.** — Ես այս վայրերը հինգ մատիս պես գիտեմ:  
Հետո պարտիզանները կառաջնորդեն ձեզ:
- ԱՎԱԼՅԱՆ.** — Եթե գերմանացիները հարձակվեն մեզ վրա  
Աղբյուրի ճանապարհին, պարտիզանների օդնությունը  
մեզ չի փրկի ծուղակից:
- ՕՌԼՈՎ.** — Այդպես...
- ՕԺԻԳՈՎ.** — (Օռլովին): Ընկեր մայոր, դա իմ անկեղծ հա-  
մոզմունքն է: Որոշումը ձերն է, ինչպես կամենաք:  
(Անմիջապես ավելացնելով): Երկրորդ հավանականը  
կիրճի վրա կառուցած անցումն է: Բայց դա խիստ հա-  
մարձակ և վտանգավոր քայլ է:
- ՕՌԼՈՎ.** — Լավ, կրնարենք երկուսից մեկը: (Օժիգովին): Դուք  
գնացեք, կքննենք և կորոշենք:  
(Օժիգովը արագ նեռանում է):

**ԱՎԱԼՅԱՆ.** — Ինչո՞ւ է Օժիգովն այցելել Սաշկոյին։ Եվ ինչ-  
պես Անահիտն էր պատմում, նա անհանգիստ է եղել,  
հուղված, ինչո՞ւ Սաշկոն մեռնելիս տվել է Օժիգովի  
անունը։

**ՕՌՈՎ.** — Նա պնդում է աղբյուրի ճանապարհի վրա...  
Այդպես...

**ԱՎԱԼՅԱՆ.** — Վլադիմիր Սերգեևիչ, Օժիգովի ցույց տված  
ճանապարհը թակարդ է։ Ինձ թվում է, Սաշկոն իր  
մահով մի մութ պատմություն է վարագուրում։ Եկեք  
բաժանվենք երկու մասի։ Ես կրարձրանամ դեպի լեռ-  
նանցքը, մեղ հետապնդող գերմանացիներին ինձ վրա  
կգրավեմ, իսկ դուք խփեցեք նրանց թիկունքից։ Պար-  
տիզանները նույնպես կօգնեն։

**ՕՌՈՎ.** — Իսկ մինչ այդ մեկուսացնե՞լ Օժիգովին...

**ԱՎԱԼՅԱՆ.** — Այո՛։

**ՕՌՈՎ.** — Համաձայն եմ։ (Ներս է մտնում Վաշեն, գլուխը  
վիրակապած է)։

**ՎԱԶԵ.** — Ընկեր մայոր, ժամանել է պարտիզանների մի  
խումբ։ Շորոխով Անդրեյը խնդրում է շտապ ընդունել  
իրեն։

**ՕՌՈՎ.** — Ներս հրավիրիր Շորոխովին և կանչիր Օժիգո-  
վին։

**ՎԱԶԵ.** — Խոսմ եմ։ (Վաշեն դուրս է գնում)։

**ՕՌՈՎ.** — Խիստ ճշտապահ են պարտիզանները։  
(Ներս է մտնում Շորոխովը)։

**ՇՈՐՈԽՈՎ.** — Բարև ձեզ, ընկեր Ավալյան։

**ՕՌՈՎ.** — Ողջույն, ընկեր Շորոխով։ (Մոտենում, սեղմում  
է ձեռքը, նույնը Ավալյանը) Համեցեք։ (Ցույց է տալիս  
կոնդը)։

**ԱՎԱԼՅԱՆ.** — Ողջույն, Անդրեյ։ (Օռլովին)։ Մենք հին ծառ-  
նոթներ ենք, ընկեր մայոր, Նստիր, Անդրեյ։

**ՇՈՐՈԽՈՎ.** — Շնորհակալ եմ։ Ռոպեներս հաշվված են։ Ժա-  
մանել եմ տղաների հետ վիրավորներին տեղափոխե-  
լու, Արդեն ընկերներս գործի են անցել։ Պարտիզանա-

կան ՞մեր ջոկատը գիշերով այս կողմերում հարձակում  
է պատրաստում։ Կօդնի ձեզ դուրս գալու այս օղակու-  
մից։ Իսկ ես ահա՛ (ձեռքը տանում է ծոցագրավանը  
հանում է մի կնժած ծրագր և պարզում Օոլովին) մի ու-  
րիշ հանձնարարություն ունեմ... (հուզված է) մեր հրա-  
մանատարից։ (Հանձնելով, գլուխը կախում է):

**ՕՌԼՈՎ.**— (Բացում է ծրագր, սկսում է կարդալ և ետ-ետ է  
գնում դեպի սեղանը, խուլ ճայնով) Ճշտվե՛ց... Կարդա՛,  
Ավալյան։ (Թուղթը մեկնում է Ավալյանին, որ զարմա-  
ցած նրան է նայում):

**ԱՎԱԼՅԱՆ.**— (Վերցնում է ու կարդում):

**ՇՈՐՈԽՈՎ.**— (Գլխահակ կանգնած է) Ամոթ ենք զգում ձեր  
առաջ, ընկեր մայոր։ Այսօր պարզվեց։ Նրան մեր հե-  
տախույզները տեսել էին շրջկենտրոնում, գերմանա-  
կան շտաբ մտնելիս։ Դա այն գիշերն է եղել, երբ կա-  
խել են Սեմյոն պապին։

**ԱՎԱԼՅԱՆ.**— Ջուր չեի կասկածում։

**ՇՈՐՈԽՈՎ.**— Հետո մի արիկայի էլ բռնեցինք այսօր, նրա  
գործակցին։ Նա ամբողջապես խոստովանեց։

**ՕՌԼՈՎ.**— Հանցանքը և մերն է։ Նա հիմա ուր որ է, պետք է  
գա այստեղ։

**ԱՎԱԼՅԱՆ.**— Բաց թողեցինք ձեռքից...

**ՇՈՐՈԽՈՎ.**— Կգտնենք որտեղ էլ լինի... Նա մեր դատա-  
տանից չի աղատվի։

**ՕՌԼՈՎ.**— Նա դեռ ոշինչ չի կասկածում։

**ԱՎԱԼՅԱՆ.**— Կարծո՞ւմ եք...

**ՇՈՐՈԽՈՎ.**— Ընկեր մայոր, թույլ տվեք ինձ գնալ։ Վիրա-  
վորներին պետք է տեղափոխել։

**ՕՌԼՈՎ.**— Գնացեք։ (Շորոխովը գնում է):

**ՕՌԼՈՎ.**— Չեմ ներում ինձ այս պատմության համար։ Քա-  
նի անդամ հարցաքննեցի Խրունիշեն։ Երդվում էր  
ամեն ինչով, որ ինքը մեղք չունի։ Չէր նստում սրտիս  
նրա դավաճան լինելը։ Բայց փաստերը պերճախուն  
էին։ Այս հինգ օրը տանջում էր խիղճա։

**ԱՎԱԼՅԱՆ.** — Հիմա պարզ է, որ նա մեղք շումի այս գործումը Երեկ ես նրա մոտ անցաւ: Անձանաշելի է դարձել Աղատել է հարկավոր:

(Հանկարծ ներս է վազում Դիմիտրին: Ռւբախուրյուն է ցայտում աշքերից):

**ԴԻՄԻՏՐԻ.** — Բնկե՛ր մայոր... եկա՛ն...

**ՕՌԻՇՎ.** — Հանդարտ խոսիր, ովքե՛ր եկան...

**ԴԻՄԻՏՐԻ.** — Կապիտա՛նը, բնկեր մայոր, կապիտան Աբա-շիճե՛ն և...

(Ներս են մտնում Տանյան՝ բարձրահասակ, շիկահեր, Աբաշիճեն: Երկուսն էլ փաթարված պլաշչ-վրաններով):

**ԱԲԱՇԻՉԵ.** — (Դեն է նետում պլաշչը: Նետվելով դեպի Օռ-լովը, ողջագուրվում է) Ողջ և առո՞ղջ եք, բնկեր մայոր: Մի փոքր ուշացաւ:

**ՕՌԻՇՎ.** — (Հուզված) Կապիտա՛ն... (Թափահարում է Աբա-շիճեի ուսը):

(Տանյան նույնպես հանում է պլաշչը, հուզված է):

**ԱԲԱՇԻՉԵ.** — (Մոտենալով Ավալյանին) Կոմիսար Ավալ-յա՛ն... Այդպես էլ դիտեի: (Դառնալով Օռլովին, ցույց է տալիս Տանյային) Մանոթացեք, բանակի սանմասից...

**ՏԱՆՅԱՆ.** — Երրորդ կարգի զինբժիշկ Տատյանա Օդինցե՛վաւ: (Ավալյանը նույնպես ողջագուրվում է):

(Ներս է գալիս Վաշեն):

**ՎԱԶԵ.** — Բնկեր մայոր, Օժիգովը ոչ մի տեղ չկա:

**ԱՎԱԼՅԱՆ.** — Փախա՛վ մեր ձեռքից:

**ՕՌԻՇՎ.** — (Ավալյանին) Կապիտա՛ն, համաձայն քո կար-դադրության, քարանձավից իշնող բոլոր կածանները վակ են: Նա չի կարող փախչել: Ոտքի հանել պահա-կային ծառայությունը:

**ԱՎԱԼՅԱՆ.** — (Դիմիտրիին և Վաշեին) Գնացի՛նք...

(Ավալյանը, Վաշեն և Դիմիտրին գնում են):

**ԱԲԱՇԻՉԵ.** — (Անհանգստացած): Ի՞նչ է պատահել, բնկեր մայոր:

**ՕՌԻՇՎ.** — Կիմանաք: Ինչպես ասում են՝ Հոգուն վրա հա-

սաք: Պատմեցեք, ի՞նչպես են մերոնք... Կտուիել ենք  
աշխարհից...

**ԱԲԱՇԻՉԵ.**— Շուտով, շատ շուտով մեծ նորությունների  
հաղորդակից կլինենք: Ամենից առաջ, ընկեր մայոր,  
ձեզ սրտագին ողջուններ գններալից:

**ՕՌԼՈՎ.**— Մեծ պատիվ է:

(Ներս է գալիս Սվետլովը: Նրա մի քեր վիրակապի  
մեջ է: Նա հայացքով ընդգրկում է հավաքվածներին:  
Հանկարծ տեսնում է Տանյային, որը հազիվ է իրեն  
զապում):

**ՍՎԵՏԼՈՎ.**— (Տրորում է աշխերը) Երա՛զ է... (Հանկարծ)  
Տանյա՛, Տանյո՛ւշա... (Վազում է իրեն ընդառաջ եկող  
Տանյային):

**ՏԱՆՅԱ.**— (Ընկնելով նրա զիրկը) Մաշա՛... սիրելի՛ս...  
եկա... գտա... քեզ...

(Օվլովն անակնկալի եկած, զարմացած նրանց է նա-  
յում):

**ՕՌԼՈՎ.**— Ահա թե ի՞նչ: Մաշա, ահա թե որտեղ է հասել քո  
ճերմակ շուշանը:

**ՍՎԵՏԼՈՎ.**— Հեքի՛աթ է սա: Ահա թե ինչի մասին դժվար թե  
կարողանամ խոսքեր գտնել (Փայփայում է Տանյային)  
ինչպե՞ս ընկար այստեղ...

**ԱԲԱՇԻՉԵ.**— (Ժպտալով) Այդ մասին ես կասեմ: Կարճ:  
Բժշկուհի Տատյանա Օդինցևան ուղարկվում է մեր բա-  
նակի սանմասը: Օդինցելան բանակի թերթերից տեղե-  
կանում է որտեղ է կապիտան Սվետլովը: Իմ գնալուց  
հետո, որոշվում է, որ մի բժիշկ պետք է ինձ հետ մեկ-  
նի մեր պաշարված զորամասը... Տանյան...

**ՏԱՆՅԱ.**— Ես դիմում եմ բանակի սանմաս, մերժում են,  
ասելով, որ ձեր մոտ տղամարդ պետք է ուղարկվի:  
Դիմում եմ գեներալին և բացատրում, խնդրում, հա-  
մոզում: Գեներալը համաձայնում է: Ահա և ամբողջ  
պատմությունը:

**ԱԲԱՇԻՉԵ.** — Նա եկել է դեղորայքով, շոկոլադով, զանազան վիտամիններով իսկ ես՝ ուզմամթերքով:

**ՍՎԵՏԼՈՎ.** — Տանյա՛, սիրելի՛ս...

**ՕՌԼՈՎ.** — (Դիմելով Տանյային) Մեր գումարտակում բոլորը ճանաշում են ձեզ, ավելի շուտ՝ գիտեն սպիտակ շուշանի պատմությունը: Շատերը նույնիսկ ծաղիկներ են պահում իրենց մոտ, և, հավատացնում եմ, որ անկախ շոկոլադից ու վիտամիններից, ձեր ժամանումը ուրախալի է ոչ միայն կապիտան Սվետլովի, այլև բոլորիս համար:

**ՏԱՆՅԱ.** — Շնորհակալ եմ, ընկեր մայոր: Բարձր եք գնահատում: Պարտավորեցնում եք ինձ:

**ՍՎԵՏԼՈՎ.** — (Ոգեշնչված) Ընկերներ, այն ո՞ր երգում է ասված:

...Դու հիմա հեռո՞ւ ես, հեռո՞ւ ինձնից,  
Ռազմի ճամփան է քեզնից ինձ բաժանում.  
Քեք հասնելը դժուար է, դժվար,  
իսկ մահից՝ չորս քայլ եմ հեռու...

Հիմա փոխել է հարկավոր երդի խոսքերը...

(Տանյան և Սվետլովը մի անկյունում նստում են իրար կողքի):

**ԱԲԱՇԻՉԵ.** — Ընկեր մայոր, ի՞նչ ճանապարհով է շարժվելու գումարտակը:

**ՕՌԼՈՎ.** — Քարայծի... Դա անակնկալ կլինի գերմանացու համար: Դուրս կդանք անտառի հարավային փեղը, կպատռենք օղակը:

**ԱԲԱՇԻՉԵ.** — Ընկեր մայոր, ըստ երևույթին, մեր զորամասը պետք է փոխի իր ուղղությունը...

**ՍՎԵՏԼՈՎ.** — (Ոգեորված) Տանյա՛, սիրելի՛ս, (Մնացածը պատմում է ցածր ձայնով):

**ՕՌԼՈՎ.** — (Հետաքրքրված) Այդ ինչո՞ւ...

**ՏԱՆՅԱ.** — (Հուզված) Սաշա՛...

**ԱԲԱՇԻՉԵ.** — (Նայում է Սվետլովին և Տանյային) Ես ժա-

**Ժացույցս ուղղել եմ դեներալի ժամացուցի հետ՝  
23-ն անց է երեսուն րոպե... ժամը 4-ին...**

**ՍՎԵՏԼՈՎ. — (Հուշատետրից հանում է շուշանը, ոգեվորված)**  
**Տանյա՛...**

**ՕՌԻՈՎ. — Ի՞նչ կնշանակի այդ...**

**ՏԱՆՅԱ. — (Տեսնելով շուշանը) Մաշա՛...**

**ԱԲԱՇԻԶԵ. — (Նայում է Տանյային, որ խորհրդավոր ժըպ-  
տում է) Ընկեր մայոր, ես ամեն ինչ կպատմեմ Ձեզ: (Դի-  
մելով Սվետլովին և Տանյային) Դուք կարո՞ղ եք մի-  
քանի րոպե շխանգարել մեզ:**

**ՍՎԵՏԼՈՎ. — Ինդրեմ...**

**(Օղովը և Աբաշիձեն մոտենում են սեղանի վրա փոված  
քարտեզին):**

**ԱԲԱՇԻԶԵ. — Ընկեր մայոր, դեներալը հրամայել է հաղորդել  
հետևյալը: Մեր զորքերը... ժամը 4-ին անցնում են  
Հարձակմա՛ն...**

**ՕՌԻՈՎ. — (Ուրախ): Հարձակմա՛ն... Վերջապե՞ս...**

**(Օղովը և Աբաշիձեն գրկախառնվում են):**

**ՍՎԵՏԼՈՎ. — (Հարձակման լուրից ցնցված, գոռում է) Հար-  
ձակմա՛ն... Տանյա՛... (Գրկում է Տանյային):**

### ՎԱՐԱԴՈՒՅՐ

#### ՊԱՏԿԵՐ ԻՆՆԵՐՈՐԴ

Տեսարան՝ բարձրադիր անտառում, քարածայոի մոտ-  
թեմը լուսավորում է լիալուսինը: Անտառի եզրին, հեռ-  
վում՝ խումբ-խումբ մարտիկներ: Դեպի քարանձավը  
տանող կածանի երկարուրյամբ՝ առանձին մանր խմբեր:  
Բոլորը զինավառ, կազմ ու պատրաստ՝ երրի: Դեպի  
լեռներն են տանում ամֆիբատրնի պես վեր բարձրա-  
ցող կածանը: Երկների ֆոնի վրա, հեռվում երեսում է  
«Մազե» կամուրջը: Հայացքը դեպի զինավառ զորամա-  
սը, կանգնած է Օղովը: Նրա մոտ են Սվետլովը, Աբա-

շիձեն, Տանյան: Ազ անկյունում՝ Աճահիտը, Օքսանան,  
պարտիգաններ, զինվորներ:

(Ավալյանի նետ ներս է գալիս Խրունիչեր, կազմ-պատ-  
րաստ երթի: Նրանք մոտենում են Օռլովին և կանգնում:  
Օռլովը սեղմում է Խրունիչեի ձեռքը):

**ԱՎԱԼՅԱՆ.**— Ընկեր մայոր, ահա և Միտրաֆոն Պավլովիչ,  
անցած, ինչպես կասեինք՝ քավարանից:

**ՕՌԼՈՎ.**— (Մոտենալով Խրունիչեին, ձեռքը դնում է ուսին):  
Միտրաֆոն Պավլովիչ, սիրելիս: Ազնիվ էր Հոգիդ Հայ-  
րենիքի առաջ, ազնիվ է և Հիմա: Ահա քո զենքը, եղ-  
բայրս, վերցրո՞ւ:

**ԽՐՈՒՆԻՉԵՎ.**— Մահու շափի դաժան էին ինձ համար այս-  
օրերը և տագնապալից: Անցածն անցած է: Ուրախ եմ,  
որ ամեն ինչ պարզվեց:

**ԱԲԱՇԻՉԵՎ.**— Ընկեր մայոր, գումարտակը պատրաստ է  
երթի:

**ՕՌԼՈՎ.**— (Մի փոքր առաջանալով): Բանակի հրամանատա-  
րության անունից պատիվ ունեմ հաղորդելու հետևյա-  
լը: Առաջի՞ն՝ հրամանատարությունը բարձր է գնահա-  
տել մեր գործունեությունը թշնամու թիկունքում: Մեր-  
միացյալ զորամասը ներկայացված է կառավարական  
բարձր պարունակություն: (Ուրախություն)  
Երկրո՞րդ՝ այսօր նոյեմբերի յոթն է: Շնորհավորում եմ  
Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեզուլտիայի  
25-ամյակը: (Լսվում է ինքնարիոների զվոցը, որ  
քանի գնում մոտենում է) Սկսվո՞ւմ է... (Լսվում են  
ռումբերի հեռավոր պայրյունների ձայնը, ապա հեռա-  
ծիգ քննանորների հեռավոր որոտը): Սկսում ենք...  
կրակե՞լ...

**ՕՔՍԱՆԱՆ.**— Ի՞նչ է սա, ընկեր մայոր:

**ՕՌԼՈՎ.**— (Հանդիսավոր): Խազմաճակատի այս հատվա-  
ծում մեր զորքերն անցան հարձակման:

(Լսվում է ինքնարիոների շատ մոտ ձայնը: Մեր ինք-  
նարիոներն են, որոնք հավաքվածների գիսավերենում  
քոչում են առաջ: Ընդհանուր ցնծություն: Հոգնած ու

տառապած, մահը նաղքած ուզմիկների կրծքերից  
դուրս է պոռքում «ուռա»-ն: Մարդիկ գրկում են իրաց:  
Օքսանան ու Անահիտը սրբում են արցունքները):

**ԱՆԱՀԻՏ.**— Մե՛ր ինքնաթիռներն են... Զայնից եմ ճանա-  
շում...

**ՕՌՈՎ.**— (Բարձր): Հնկերնե՛ր, մեր առջև այժմ խնդիր է  
դրված՝ փակել լեռնանցքում թշնամու նահանջի ճա-  
նապարհը:

(Զախից՝ Դիմիտրին և Վաշեն ներս են բերում Օժիգո-  
վին: Նա առանց յափունջիի է, ձեռքերը՝ կապած:  
Օժիգովի մուտքը խուլ աղմուկ է առաջացնում, ապա  
լուրյուն է տիրում: Օժիգովը դժկամուրյամբ է ժայ-  
լում: Դիմիտրին ավտոմատով հրում է. «Քայլիր»...  
Օժիգովը կանգնում է զլխահակ մեջտեղում):

**ԴԻՄԻՏՐԻ.**— Ահա:

**ՎԱԶԵՐ.**— Գայլի վերջը թակարդն է:

**ՕՌՈՎ.**— (Դանդաղ մոտենում է Օժիգովին): Արձակեք ձեռ-  
քերը (Դիմիտրին և Վաշեն արձակում են):

**ՕՌՈՎ.**— Քանիսո՞վ ծախեցիր հուղարիդ հոգին: Խոսի՛ր:

**ՕԺԻԳՈՎ.**— (Լուս է):

**ՕՌՈՎ.**— Ինչպիսի՞ պատիժ ընտրեն այս մարդիկ քեզ հա-  
մար, որ թեթևանա հողը հազարավոր անմեղ մեռյալ-  
ների վրա:

**ՕԺԻԳՈՎ.**— (Լուս է):

**ՕՌՈՎ.**— Խոսք ունե՞ս մեռնելուց առաջ:

**ՕԺԻԳՈՎ.**— (Դանդաղ բարձրացնում է զլուխը, նայում է  
շուրջը և հանկարծ անսպասելի նետվում դեպի վիճի  
եզրով անցնող կածանը: Մի պահ բոլորը քարանում  
են):

**ՕՌՈՎ.**— (Զարմանալի արագ հանում է նազանը և հան-  
գիստ բարձրացնում). Զե՞ս փախչի... (Կրակում է):  
(Օժիգովը հանկարծ կանգ է առնում, փաքարփում է  
վիճի եզրին բարձրացած ծառին և ընկնում, զահավի-  
ծում անդունդը: Մի պահ լուրյուն):

**ՎԱԶԵ.** — (Չեռքը բարձրացնելով): Հայրս կասեր շանը՝ շա'ն մահ:

(Լսկում է նորից մեր նեռածիգ քնդանորների որոտը):

**ՍՎԵՏԼՈՎ.** — Այս լեռներում թշնամին, դավաճանը միայն մահ կգտնեն:

**ԱՎԱԼՅԱՆ.** — (Ոգեորված): Ճշմարիտ ես, Ալեքսանդր Վասիլևիչ: Գերմանական լեռնային դիվիզիաների զինվորները իրենց թևերին կրում են «լեռնային շուշան» խորհրդանշանը: «Էղելվեյս»... ծաղկի անոնով է կոչված նրանց դիվիզիան: Իմաստն այն է, որ նրանք ուզում էին գարնանը քաղել Կովկասյան լեռների ծաղիկները: Ո՛չ: Նրանք Կովկասյան լեռներում կքաղեն մահվա'ն ծաղիկը:

**ՍՎԵՏԼՈՎ.** — (Քաշվելով մի անկյուն, նստում է նուշատերում ինչո՞ր բան է գրում):

**ՕՌԼՈՎ.** — (Բարձր): Գումարտա՛կ, լսիր հրամանը: Բարձունքները թողնելուց առաջ ամեն մի հրամանատար, սերժանտ և զինվոր մի-մի քար դնի մայոր Դիլանյանի, Սաշկոյի և մյուսների եղբայրական գերեզմանին: Թողայս լեռներում բարձրանա նաև նրա'նց փառքի լեռը:

(Հանում է գլխարկը: Բոլորը նույնը: Խրունիչնին):

Միտրաֆոն Պավլովիչ, նշանակում եմ քեզ երրորդ վաշտի հրամանատար: Ընդունիր վաշտդ: (Արաշիձենին): Կապիտա՛ն, առաջնորդիր զորամասը, մինչև մենք կհասնենք ձեր ետևից:

**ԱՐԱՇԻՁԵ.** — Խոսմ եմ, ընկեր մայոր:

**ՕՌԼՈՎ.** — (Օքսանյին) Օքսանա, շարժվում ես զորամասի հետ: (Բոլորին): Շորոխով, ողջույն տարեք պարտիզաններին, շնորհակալություն, եղբայրներ: (Դառնալով զորամասին, բարձր): Գումարտա՛կ, դեպի լեռնանցքը, մա՛րշ...

**ՍՎԵՏԼՈՎ.** — (Բարձր): Վերջակե՛տ: (Ոգեորված փակում է նուշատերը, ոտքի կանգնում):

(Բեմը դանդաղ պտտվում է: Երեսում է դեպի լեռնանցքը տանող ոլորապույտ կածանը, որով քայլում է ժապա-

վենի պես ձգված զորամասը: Սկսում են դանդաղ բարձրանալ Ավալյանը, ապա Սվետլովը, Օռովը, Օհսանան, Վաշեն: Ներքեում նրանց ձեռքով են անում Անահիտը, Տանյան, Դիմիտրին, պարտիզանները, զինվորները):

**ԴԻՄԻՏՐԻ.** — (Շարֆի մեջ տեսնելով հեռացող եզրին)՝  
Ցտեսություն, Եգոր, Կհասնեմ քո ետևից:

**ԵԳՈՐ.** — (Ծոր տալով): Կհասնե՞ս, ինչպե՞ս չէ... Էլ ինձ  
հասնելը դժվար է, Դիմիտրի: Հիմա ուղիղ Բեռլինի՛ վրա  
ենք գնում:

**ԱՐՏԱՎԱԶԴԻ.** — (Վասիլիին): Վասի՛լի, դնաս բարո՛վ...  
Չմոռանաս նամակս... Առաջին պատահած դաշտային  
փոստարկով կգցես...

**ՎԱՍԻԼԻ.** — Անպայման, Արտավազդ, կհանդիպենք այն-  
տե՛ղ...

**ՎԱԶԵՐ.** — Ֆրիդրիխշտուա՛սսեի... Ֆրիդրիխշտրասսեի վրա  
Բեռլինո՛ւմ...

**ԴԻՄԻՏՐԻ.** — (Յածից): Օքսա՞նա, եթե սիրու նորից. վատ  
զգա, կարո՞ղ եմ դիմել քեզ:

**ՕՔՍԱՆԱ.** — (Վերից): Կարող ես, Դիմիտրի...

**ՎԱԶԵՐ.** — (Բարձունքից): Էս, Դիմիտրի: Բաժանվում ենք...  
Հայրս կասեր՝ լավ ընկերը հազար բարեկամից էլ լավ

է: (Բննելով Օքսանայի քեից): Քրոջս պես կպա-  
հեմ Օքսանային, Դիմի՛տրի... (Քայլում են դեպի վեր):

**ՍՎԵՏԼՈՎ.** — Տանյա՛, Տանյո՛ւշա... սիրելի՞ս... (Բարձրաց-  
նելով հուշատետրը): Այստեղ է ճերմակ շուշանու...  
Կտանեմ նրան, կանցկացնեմ բոլոր կրակների միջով...  
Մինչև հանգրվանը...

**ՏԱՆՅԱ.** — (Բարձրացնելով ձեռքը): Բարի ճանապա՛րօ...  
Սա՞շա, կդամ... Նորից կդունեմ քեզ...

(Լսվում է նորից քնդանոքների որոտը):

**ԱՎԱԼՅԱՆ.** — Անահիտ, ռազմի ճանապարհները բաժանում  
են մեզ... Կհանդիպենք դուցե նորից այդ ճանա-  
պարհներին... Մնաս բարո՛վ... (Քայլում է դեպի վեր):

**ԱՆԱՀԻՏ.** — Եթե չհանդիպենք այդ ճանապարհներին, կհանդիպենք մեր բարձունքներում, Հայաստանում... Անպայման...

**ՕՒԼՈՎ.** — (Բարձր): Հավիտյան կհիշեն մեզ այս բարձունքները... (Զեռքը քափահարելով բայլում է):

**ԴԻՄԻՏՐԻ.** — (Զեռքն առնելով հարմոնը, հայացքը դեպի վեր հեռացողներին: Հուզված): Երգի՛ր, հարմոն... Երգի՛ր... (Նվազում է «Հա բեյդ» երգը, քափահարելով ոսկեգանգուրները: Հարմոնիստի նվազին ձայնակցում են դեպի լեռները հեռացող ռազմիկները):

**ՔՈՂՈՐԸ.** — (Հարմոնի նվազի տակ երգում են):

**ԱՎԵՏՈՎ.** — (Արձանացած, բարձրացնելով հուշատետը, արտասանում է)

Եվ կհիշե՞նք ձեզ հետ այս օրերը...

Պատմությո՞ւնն այս, որ պետք է գրվի:

Քայլո՞ւմ են ահա հերոսները,

Ռազմիկները արդար մեր մեծ կռվի...

Անցած մահվան կամրջները

Եվ վեհացած...

Նայեցե՞ք նրանց,

Քայլո՞ւմ են նրանք հավերժացած

Դեպի հոգու վսե՞մ բարձունքները...

(Սվետլովը բայլում է վեր):

(Ներքեում Տանյան, Անահիտը, Դիմիտրին, պարտիզանները, զինվորները ձեռքերը բարձրացրած հրաժեշտ են տալիս հեռացողներին: Իսկ բարձունքներում սավառնում է երգը, միախառնվելով ինքնարիոների նոր խմբի գվազոցին և մեր հեռաձիգ հրետանու որոտին: Իսկ հեռվում՝ վիճի վրա կառուցած կամրջի վրա, երեւում են առաջապահ զինվորները, որոնք դեպի լեռնանցքն են բայլում: Բարձունքներում հպարտուեն ծածանվում է կարմիր դրոշը):

Դանդաղ փակվում է վարադույրը


Վերջ


**Խմբադիր՝ Ա. Հայրյան  
Կոնտրոլ սրբագրիչ՝ Ա. Սարգսյան**

Վ.Յ. 00160, պատվեր 588, տիրած 3000  
հեղինակ. 4,3 մամուլ. տպագր. 6 մամուլ.  
հանձնված է արտադր. 17 /VI 49թ.  
Նույրագրված է տպագր. 15-I-49թ.

---

Հայէ. ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պոլիգրաֆ և Հրատարակչ-  
վարչ. № 1 տպարան, Երևան, Լենինի 65, 1949 թ.





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220027075

ARCH. 50.

